




**ՀՀ ԳԱՍ Ն. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
75 ՏԱՐԻ**



Երևան 2018



ՀՏԴ 811.19:061.62(091)

ԳՄԴ 81.2Հ+72.4(5Հ)

Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Կազմողներ՝ Գալստյան Անահիտ
Հովհաննիսյան Նազիկ

Խմբագիր՝ Կատվալյան Վիկտոր

- Հ 247 ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ.
75 տարի.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018,
184 էջ:
Գիրքը ներկայացնում է ինստիտուտի
ստեղծման և զործունեության պատմությունը:

ՀՏԴ 811.19:061.62(091)

ԳՄԴ 81.2Հ+72.4(5Հ)

ISBN 978-5-8080-1359-9

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018

**INSTITUTE OF LANGUAGE AFTER R.ACHARYAN
OF NAS OF RA**

**INSTITUTE OF LANGUAGE
AFTER R.ACHARYAN OF NAS OF RA
75 ANNIVERSARY**

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

**ИНСТИТУТ ЯЗЫКА
ИМЕНИ Р. АЧАРЯНА НАН РА
75 ЛЕТ**

**Ереван 2018
Издательство “Титутюн” НАН РА
Yerevan 2018**

1421868

061.62(091)

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

1421868

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
75 ՏԱՐԻ



Երևան

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն

2018

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հիմնադրվելով 1943 թվականին՝ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը շարունակում է հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլերի ավանդները և առաջ մղելով գիտական միտքը՝ դառնում է նոր շրջանի հայերենագիտության կարևորագույն կենտրոնը, որտեղ համակարգված աշխատանքներ են ծավալվում լեզվի հետազոտության հիմնարար ուղղություններով, տասնամյակների ընթացքում ստեղծվում են գիտական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ աշխատություններ, պատրաստվում են գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող և հմուտ լեզվաբաններ:

Ինստիտուտի տարբեր սերունդների գիտաշխատողներ զբաղվել և զբաղվում են հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրությամբ, գրական արևելահայերենի և արևմտահայերենի քննությամբ, գիտնականների հետաքրքրությունների ոլորտում են նաև գրական լեզվի կանոնարկման, տերմինաբանության մշակման, ուսուցողական լեզվաբանության հարցերը, կարևորվում է ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային բառարանների և տերմինաբանների ստեղծումը: Ինստիտուտի աշխատակիցները հեղինակել են ընդհանուր-տեսական և հայերենի կառուցվածքի ու պատմական զարգացման առանձին հարցերի վերաբերող մենագրական ու խմբային աշխատություններ, մշակել կամ առաջադրել են հայ քերականագիտության զարգացման համար կարևոր սկզբունքներ:

Զգալի աշխատանքներ են կատարվել ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի և գործառության հետազոտության ուղղությամբ: Այս ոլորտում լայն կիրառություն են ստացել ուսումնասիրության նոր, հատկապես կառուցվածքային, վիճակագրական, փորձառական մեթոդ-

ներ, լեզվի հետազոտության համակարգչային ծրագրեր, նոր
և նորագույն տեխնոլոգիաներ: Բազմաթիվ մենագրություն-
ներում ու ժողովածուներում լուսաբանվել են լեզվական կա-
ռուցվածքի տարբեր հարցեր, կատարվել է բառապաշարի,
հնչյունական, հոլովման և խոնարհման ենթահամակարգերի,
քերականական առանձին կարգերի և առանձին խոսքի մա-
սերի ուսումնասիրություն: Այդ ամենի արդյունքները ամ-
փոփված են «Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր ակա-
դեմիական քերականության մեջ, որը պարունակում է լեզ-
վական բոլոր մակարդակների մանրամասն նկարագրու-
թյունը: Նշանակալի են հայոց լեզվի զարգացմանը և կառուց-
վածքին, ժամանակակից հայերենի տեսության հիմունքնե-
րին, իմաստաբանությանը և բառակազմությանը (Գ.Ջահու-
կյան, Է.Աղայան), ժամանակակից գրական հայերենի քերա-
կանությանը, բային ու անվանական խոսքի մասերին, չթեք-
վող խոսքի մասերին, դրանց բառական ու քերականական
հատկանիշների փոխհարաբերությանը (Ս.Աբրահամյան, Գ.
Գարեգինյան), ժամանակակից հայերենի շարահյուսությանը,
շարահյուսական կառուցվածքի առանձին միավորների,
հարաբերությունների ու հասկացությունների (Վ.Առաքելյան,
Ն.Պառնապյան), հնչյունաբանությանը, հնչյունային ու հնչույ-
թային համակարգերին, շեշտի և հնչերանգի առանձնահատ-
կություններին (Ա.Խաչատրյան, Ռ.Թոխմախյան, Ա. Արամ-
յան) նվիրված հիմնարար աշխատությունները: Քննվել են
նաև ժամանակակից հայերենի բառապաշարին, նրա զար-
գացման ու հարստացման միտումներին ու հնարավորու-
թյուններին, նորաբանություններին, փոխառություններին ու
պատճենումներին առնչվող հարցեր, հետազոտվել են բառա-
կազմական ու իմաստաբանական իրողություններ (Հ.Օհա-
նյան, Ս.Էլոյան):

Ոճագիտության ասպարեզում կատարվել է գործա-
ռական ոճերի և քերականական ու ձևաբանական ոճաբա-
նության հարցերի քննություն (Ռ.Մկրտչյան): Ստեղծվել են

գեղարվեստական գրականության լեզվին վերաբերող աշխատություններ, քննվել են շարահյուսությանն առնչվող ոճաբանական հարցեր՝ դարձվածքների, արտահայտչական միջոցների, բառակազմության ոճական հնարավորությունները, հայերենի ժողովրդախոսակցական տարբերակային առանձնահատկությունները:

Մի շարք աշխատություններ են նվիրվել տեխնիկական, բժշկագիտական, հասարակական-քաղաքական, գրականագիտական, թատերագիտական, լեզվաբանական, գյուղատնտեսական, ռազմական, կրոնակեղեցական տերմինաբանության ծագման և զարգացման պատմությանը: Գիտատեսական խնդիրների քննությանը զուգընթաց առաջին անգամ տերմինաբաններ, տերմինաբանական բառարաններ են կազմվել գիտության նորագույն ճյուղերի գծով (ֆիտոցենոլոգիա, մոլեկուլային ֆիզիկա, շրջակա միջավայրի պահպանություն, դիվանագիտություն, տարազանուններ), հրատարակվել են ֆենոլոգիայի և գոյապահպանության հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարանները: Կազմվել է «Հայոց լեզվի գիտատեխնիկական տերմինաբանություն բառարան-տեղեկատու»:

Հայագիտության ավանդական ուղղությունների ընդլայնմանն ու զարգացմանը զուգընթաց հետազոտություններ են ծավալվել հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության (հրատարակվել է փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծությանը վերաբերող աշխատություն), տեքստի լեզվաբանության, մաթեմատիկական լեզվաբանության ուղղություններով, զարգացման նոր մակարդակի է բարձրացել փորձառական հնչյունաբանությունը և այլն:

Զգալի աշխատանքներ են կատարվել ընդհանուր և համեմատական լեզվաբանության բնագավառում: Մտեղծվել են ընդհանուր և համեմատական լեզվաբանության հարցերին և պատմությանը նվիրված հիմնարար աշխատություններ (Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Է. Աղայան, Գ. Զահուկյան):

Կարևոր արդյունքներ են ձեռք բերվել ընդհանուր լեզվաբանական կադապարի մշակման, լեզվական միավորների ու մակարդակների փոխհարաբերության, լեզվաբանական կարգերի սահմանման ու դասակարգման, լեզուների հեռավոր ցեղակցության ուսումնասիրության և նոստրատիկ լեզվաբանության ուղղությամբ: Քննության են առնվել հայերենի և Առաջավոր Ասիայի հին լեզուների առնչությունները, հարևան հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական լեզուների հետ հայերենի բազմապիսի շփումները (Գ.Ջահուկյան, Գ.Ղափանցյան, Լ.Հովհաննիսյան, Վ.Համբարձումյան, Մ.Աղաբեկյան): Կարևոր է նաև լեզվի ձևայնացված քննության սկզբունքների և մեթոդների մշակումը և դրանց կիրառումը հայոց լեզվի կառուցվածքի ուսումնասիրության մեջ (Ռ.Ուռուտյան, Լ.Հովսեփյան, Վ.Ջիհանյան):

Կատարվել են ուսումնասիրություններ՝ նվիրված լեզուների տիպաբանությանը և պրագմալեզվաբանությանը (Է. Աթայան):

Լայն ուշադրության են արժանացել հայ լեզվաբանության պատմության հարցերը: Հրատարակվել են հայ լեզվաբանության և հայ քերականության պատմությանը նվիրված աշխատություններ (Գ.Ջահուկյան, Է.Աղայան, Գ. Սևակ): Մենագրություններ են նվիրվել լեզվաբանության զարգացման առանձին բնագավառների:

Նշանակալից են ձեռքբերումները հայոց լեզվի պատմության ուսումնասիրության բնագավառում: Հավաքվել է փաստական հարուստ նյութ, ստեղծվել են ինչպես հայոց լեզվի ամբողջական պատմությանը (Հ.Աճառյան, Մ.Ղազարյան), այնպես էլ նրա զարգացման առանձին շրջանների և առանձին բնագավառների վերաբերող աշխատություններ (Գ.Ջահուկյան, Վ.Առաքելյան, Ա.Աբրահամյան, Մ.Ղազարյան, Է. Աղայան, Լ.Հովսեփյան, Ա.Սարգսյան): Ուշադրության կենտրոնում են եղել այնպիսի հիմնարար հարցեր, ինչպիսիք են հայերենի զարգացման փուլերի ժամանակագրական սահման-

ների և բնորոշ առանձնահատկությունների որոշումը, գրական լեզուների ձևավորման և գործառության, նրանց բարբառային հիմքերի զարգացման ու մշակման հիմնական միտումների բացահայտումը (Գ.Զահուկյան, Լ.Հովսեփյան, Վ. Համբարձումյան):

Լեզվի պատմաբանները ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում գրաբարի, միջին հայերենի, վաղ աշխարհաբարի բառապաշարային շերտերին, դրանց գործառական առանձնահատկություններին, իմաստային խմբերին: Բազմակողմանիորեն քննվել է Մդ. մատենագրության բառապաշարը, դիտարկվել են նաև թարգմանական գրականության բառապաշարի ոճական, ժանրային յուրահատկությունները՝ թեմատիկ բազմազանությամբ հանդերձ: Ի հայտ են բերվել հարյուրավոր նոր բառեր, որոնց ստուգաբանությունը, իմաստների ճշտումը, գործառական նրբերանգների պարզաբանումը մեծ կարևորություն ունեն լեզվի պատմության համար: Արժեքավոր են Մդ. գրաբարի և հայ թարգմանական գրականության բառապաշարին, գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննությանը, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառերին (Լ.Հովհաննիսյան), հայոց լեզվի համեմատական բառագիտությանը և լատինաբան հայերենին (Վ.Համբարձումյան) նվիրված մենագրությունները: Ավարտվել է VI-VIII դդ. հին հայերենի լիակատար էլեկտրոնային բառարանի կազմումը (Ա.Սարգսյան):

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ոլորտում հատկապես արժեքավոր է միջին հայերենի պատմությանը նվիրված «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» երկհատոր աշխատությունը (Հ.Մուրադյան, Լ.Հովսեփյան, Մ.Մուրադյան, Ս.Անթոսյան, Պ.Վարդապետյան, Լ.Կարապետյան):

Ընդհանուր առմամբ՝ տարածամասնակյա հայեցակետով լուսաբանվել են լեզվական կառուցվածքի առանձին մակարդակների, ինչպես նաև քերականական առանձին

կարգերի և առանձին խոսքի մասերի զարգացման հարցերը: Հնչյունական, հոլովման, խոնարհման համակարգերի, բառակազմության պատմական հետազոտությունների արդյունքները ամփոփվել են «Հայերենի պատմական քերականություն» երկհատորյակում:

Մեծ ծավալի աշխատանք է կատարվել հայ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ (Հ.Աճառյան, Ա.Ղարիբյան, Հ.Սուրադյան, Է.Աղայան, Վ.Պետոյան, Ս. Բաղդասարյան, Ռ.Բաղրամյան, Կ.Դավթյան և ուրիշներ): Հրատարակվել են բազմաթիվ բարբառների վերաբերող մենագրություններ, մշակվել են հայ բարբառների հնչյունական, տիպաբանական և բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները (Ա.Ղարիբյան, Գ.Զահուկյան):

Բարբառագիտական ուսումնասիրությունների բնագավառում նշանակալից է հայերենի բարբառագիտական ատլասի ստեղծման ձեռնարկումը: Կատարվել է ատլասի վերաբերյալ նյութերի հավաքում թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս գտնվող հարյուրավոր վայրերից, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր աղբյուրների հիման վրա, ընթանում են այդ նյութերի դասդասման, ուսումնասիրման և նկարագրության աշխատանքներ: Միաժամանակ նպատակ է դրված վերականգնելու բարբառների աշխարհագրական տեղաբաշխման պատմական պատկերը և, մասնավորապես, ցույց տալու հայ բարբառների՝ մինչև 1915թ. եղած վիճակը: Ստեղծվել է «Հայերենի տարածքային տարբերակների շտեմարան», որը քարտեզագիր համակարգերի համակցությամբ հնարավորություն կտա կազմելու բարբառագիտական քարտեզներ: Մշակվել է նաև հայերենի բարբառների հնչազրերի հիմնօրինակը:

Փորձարկվել են հայերենի բարբառների բառիմաստային և բառային զուգաբանությունների տեղեկատվական հենքերը: Դրանք լիովին բավարարում են առաջադրվող պահանջները. լեզվաբանը անհրաժեշտության դեպքում կարող է

դիտարկել՝ ա) հենքում գրանցված խոսվածքը կամ խոսվածքները, բ) ատլասի ծրագրով տրված գրական եզրի բառային ծավալումը խոսվածքում կամ խոսվածքներում, գ) ատլասի ծրագրով տրված գրական եզրի և նրա բարբառային համարժեքի ծավալումը խոսվածքում կամ խոսվածքներում:

Հարուստ ավանդույթներ ունի հայ բառարանագրությունը: Հայերենագիտության այս բնագավառը լեզվի ինստիտուտը համալրել է բացատրական, երկլեզվյան-թարգմանական բառարաններով, ստեղծել հոմանիշների, հականիշների, լեզվաբանական, շրջուն (հանգաբառարան), հաճախականության, տարբեր հեղինակների լեզվի, բարբառային, տերմինաբանական, հայոց լեզվի նորաբանությունների, ուղղագրական բառարաններ: Հրատարակվել են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (քառահատոր, ՍՍՌՄ պետ. մրցանակ՝ 1946 թ.), «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (քառահատոր), «Ռուս-հայերեն» (քառահատոր) և «Հայ-ռուսերեն» թարգմանական բառարանները, բարբառային բառերի (յոթ հատոր), լեզվաբանական, հայոց լեզվի հաճախականության, գոյապահպանության, ֆենոլոգիայի հայերեն-անգլերեն-ռուսերեն բացատրական բառարանները: Ռուս-հայերեն բառարանի համար Ա.Ղարիբյանը 1972թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի: Հրատարակվել են հայ բառարանագրության պատմությանը (XVII դ. վերջ-XIX դ.) և գրաբարի բառարանագրությանը (Գ.Թոսունյան) նվիրված մենագրություններ:

Հրատարակվել են «Նոր բառեր»-ի Ա, Բ, Գ պրակները (2015թ., 2016թ., 2017թ.), որոնցում ամփոփված են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող, բացատրական և նորաբանությունների բառարաններում չգրանցված բառեր:

1962 թ. ինստիտուտում կազմվում և հրատարակվում են հեղինակային համաբարբառներ, որոնցում այբբենական կարգով ներկայացվում են տվյալ երկի բոլոր բառերը՝ համա-

պատասխան գործածություններով: Համաքարքառներն անհրաժեշտ սկզբնաղբյուրներ են լեզվաբանության, գրականագիտության, պատմագիտական, ազգագրագիտական հետազոտությունների համար: Լույս է տեսել գրաքար ինքնուրույն գրականության հեղինակային համաքարքառների ավելի քան 40 հատոր, պատրաստ են մի շարք համաքարքառների էլեկտրոնային տարբերակները:

2003 թ. ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» պարբերականը, որի նպատակն էր անդրադառնալ առհասարակ լեզվի և լեզվաբանության առանցքային և զարգացման հեռանկարի տեսանկյունից առավել ուշագրավ խնդիրների և հարցերի լուսաբանմանը (լույս է տեսել տասնմեկ համար):

Լեզվի ինստիտուտը կազմակերպել է միջազգային հայերենագիտական գիտաժողովներ, 2006թ. կազմակերպում է «Ջահուկյանական ընթերցումներ», «նաև երիտասարդ լեզվաբանների հանրապետական ամենամյա գիտական նըստաշրջաններ՝ հանրապետության բուհերի, Արցախի ներկայացուցիչների, այլև արտերկրի հայազետների մասնակցությամբ:

Ինստիտուտի աշխատակիցները գործուն մասնակցություն են ունենում հանրապետական և միջազգային գիտաժողովներին, գիտական խնդիրներից բացի՝ անդրադառնում են խոսքի մշակույթի բարձրացման, ուղղախոսության և ուղղագրության նորմավորման, հայոց լեզվի հարըստացման, գրական հայերենի անաղարտության պահպանման հարցերին:

Ինստիտուտ ավագ, միջին և կրտսեր սերնդի՝ մոտ վեց տասնյակ գիտաշխատողները շարունակում են ուսումնասիրություններ կատարել հայերենագիտության ավանդական բնագավառներում՝ նաև նպատակ ունենալով ամբողջացնել գիտական մեծ արժեք ունեցող այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են հայոց լեզվի քառահատոր պատմությունը (լույս

է տեսել Գ. Ջահուկյանի հեղինակած՝ նախագրային ժամանակաշրջանին նվիրված հատորը), արևմտահայերենի համակողմանի նկարագրությունը, հայերենի պատմական եռահատոր քերականությունը (լույս են տեսել պատմական հրնչունաբանությանը և բառագիտությանը նվիրված հատորները), հայ բարբառագիտական ատլասին վերաբերող ուսումնասիրությունները և այլն: Մյուս կողմից՝ աշխատանքներ են տարվում հետազոտական նոր խնդիրների առաջադրման, լեզվաբանական նոր մեթոդների և ուղղությունների արմատավորման ուղղությամբ (լեզվամշակութաբանություն, ճանաչողական լեզվաբանություն, լեզվի ձևականացված քննություն, խոսքի ավտոմատ վերլուծություն ու համադրություն, տեքստի մեքենական թարգմանություն և այլն):

2018 թ. գործարկվել է hamabarbar.am կայքը: «Հայկական էլեկտրոնային համաբարբառը» ստեղծվել է որոնման սահմանափակ հնարավորություններ ունեցող նախկին մեքենագիր համաբարբառները համակարգչային ծրագրերով ստեղծված, որոնողական ճկուն համակարգ ունեցող, համացանցում հասանելի էլեկտրոնային համաբարբառներով փոխարինելու նպատակով:

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նախաձեռնում է «Մաշտոց» հայերենագիտական էլեկտրոնային հանդեսի հրապարակումը: Հայերենագիտական բազմալեզու հանդեսը նպատակ ունի նպաստելու հայոց լեզվի համակողմանի հետազոտությունների իրականացմանը, արևելահայերենի և արևմտահայերենի կանոնարկմանը, մերձեցմանն ու զարգացմանը, նորովի լուսաբանելու հայ լեզվամշակույթին առնչվող հիմնահարցերը:



ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԹԵՍՊՈՒԲԼԻԿԱՆ
Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ռ Ի Ն Ն Ե Ր Ի Ս Կ Ա Գ Ե Մ Ի Ս

АКАДЕМИЯ НАУК
ИРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ

Где, Братина 61
Где, Агаси 61

29, xi 1941

٢ ٥ ٦ ٧ ٨ ٩ ١٠

Հայկական ՍՄԽ Գիւտություններէ Արարեմքի Եղբայրացու ընկերակցութեան 1944 թ.
գետական բերի շէնքի նիստի արձանագրությունն է:

Հ Ս Ե Յ Ի Ն - 1 - Հ Ո ՅԻ ԳԵՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԱԿՈՂՆԵՐԻ ՀԵՂՎԻ ԻՆՍ-
ՏԻՏՈՒՄԸ ԽԵՂՆԵՐԻԿՈՍ ՆԵՐԿՈՒՄԱՅ ԴՅԿՈՎԼԵԻԷ ՄԵՐ ԽԵՂՆԵՐԻ ԿՈՆԵՐՆԱԿԱՆ ԴՅՈՒՄՆԵՐԻ
ԿՈՆԿՐԵՑ՝ ԳԵՂՈՒՄԻՔԻԱՆ ԳԵՈՒԹՅԱՆՆԵՐԻ ԴՈՒՄՈՐ ՄԵՐ ԴՈՒՄՈՐՈՒՄԻՆ

ՈՐՈՇԵՑԻՆ - 1 - Հաւանություն տալ ՀՍՍՌ Գիտությունների Ազգային
Հեղին ինստիտուտին՝ ազգային տն. օգ. կործ. ծննդյան 80-ամյակին և մահ-
վան 10-ամյակին նվիրված առաջին գիտական սեմինարի որոշմանը Հեղին ինս-
տիտուտը "Ազգային տն. օգ. Գաղութային Ընդուն ինստիտուտը"
առկան և մասին, ինքնուր ՀՍՍՌ Գիտությունների Երկրային, հաս-
տատվ. տղայն որոշումը:

ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԻՊԵ-ՊԵՆՏԻՆՈՆ,
ԱՊՐԵԼԻՐԻԿՈՍ՝ Վ.Զ. ՀԱՐԲԱՆՈՒՄՅԱՆ

ԳԻՏ. ԲԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Բ. ՊԵՏՐՈՅԱՆ

Դա կազմակերպի հետո քիչ տե՛

ՆԱԽԱՐԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՏՈՒՂԱՐ Զ. Պրոքսեն Խ. ԽԵՐԹՅԱՆ/

1

СОВЕТ НАРОДНЫХ КОМИССАРОВ АРМЯНСКОЙ ССР

П о с т а н о в л е н и е № 799

О присвоении Институту Языка Академии
Наук Армянской ССР имени академика
Н.И. Марра

В связи с 80-летием со дня рождения и 10-летием со дня смерти крупнейшего ученого археолога и языковеда академика Николая Яковлевича Марра х, учитывая его огромные заслуги в развитии арменоведения и теории армянского языка, Совет Народных Комиссаров Армянской ССР постановляет:

Удовлетворить ходатайство Президиума Академии Наук Армянской ССР и Институту Языка Академии Наук Армянской ССР присвоить имя академика Н.И. Марра.

Заместитель Председателя Совета
Народных Комиссаров Армянской ССР Л.Осипян

Управляющий Делами Совета
Народных Комиссаров Армянской ССР А.Ахтарумов

30 декабря 1944 года.
гор. Ереван

В е р н о:

С.Осипян

Расположено 8/1-45 г. Стл. 21-е экз.



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК
АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕСПУБЛИКИ

Երևան, Բարեկամություն, 24

№ 369-4.

17.

VI

1264/7.


Երևան, Բարեկամություն, 24

ՀՍՍՐ ՄԻՆԻՍՏՐԵՐԻ ՍՈՎԵՏԻ

ՇԱԽԱԳԱՆ՝ Ա.Ե. ԲՈՅՈՒՆՅԱՆԻ

ՀՍՍՐ ԳԱ Նախագահությունը ս/թ մայիսի 27-ին կայացած նիստում
քննելով ԳԱ Շեզվի ինստիտուտը ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Սճառյանի
անունով կոչելու հարցը, որոշեց համաձայնեցնել տալ ՀՍՍՐ ԳԱ Շեզվի
ինստիտուտի գիտական խորհրդի 1983թ. հունիսի 5-ի նիստի որոշմանը և
ինստիտուտը կոչել բազմամասնակ հայազեն Հրաչյա Սճառյանի անունով
նկատի ունենալով մեծանուն լեզվաբանի ներդրած խոշոր ավանդը հայագի-
տության ու հայ լեզվաբանության մեջ, ռեսպուբլիկայի լեզվաբանական
կադրերի պատրաստման և դաստիարակման գործում նրա մատուցած անգնահա-
տելի ծառայությունները, ինչպես նաև նրա բազմամյա արդյունավետ աշխա-
տանքը ՀՍՍՐ ԳԱ Շեզվի ինստիտուտում:

ՀՍՍՐ ԳԱ Նախագահությունը միջնորդում է Հայկական ՍՍՐ Մինիստրնե-
րի Սովետի առաջ հաստատելու Նախագահության որոշումը՝ ԳԱ Շեզվի ինս-
տիտուտը ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Սճառյանի անունով կոչելու մասին:

ԱՍԳԱԳԱՆ ՍՍՐ ԳԱ ՊՐԵԶԻԴԵՆՏ՝  14.2. ՀԱՄԱՐԱԶՈՒՄՅԱՆԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏ
Совет Министров Армянской ССР

ПОСТАНОВЛЕНИЕ № 334

1984

г. Ереван

Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի
Լեզվի ինստիտուտը Հ.Հ. Մժուկյանի անունով
կոչվող մասին

Հայկական ՍՍՐ Մինիստրների սովետը Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Բավարարել Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի նախագահ-
հուրյան միջնորդությունը և Հայկական ՍՍՐ Գիտությունների ակադեմիայի
Լեզվի ինստիտուտը կոչել ակադեմիկոս Լեզվաբան ու հայագետ Հրաչյա Հակոբի
Մժուկյանի անունով:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՇՊԱՏԻՍՏ

ԼՍ. ԲՈՅՈՒՇԱՅԷԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ԳՈՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՁ՝

ԼՀ. ՄԵԼՔՈՇԱՅԷԼ



ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում այսօր գործում է յոթ բաժին՝ արդի հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության, կիրառական լեզվաբանության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, արևմտահայերենի, բառարանագրության:

Արդի հայերենի բաժինը (բաժնի վարիչ՝ բանասիրական գիտությունների թեկնածու Նվեր Սարգսյան) կատարում է «Արդի արևելահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» ծրագիրը: Ուսումնասիրվում են արդի հայերենի բառապաշարի և քերականական իրողությունների, ժամանակակից խոսակցական հայերենի կառուցվածքի և գործառության հիմնահարցերը: Կատարվում են տարբեր բնագավառների տերմինահամակարգերի ուսումնասիրություն, բառարանների կազմում: Կարևորվում են տարբեր հեղինակների լեզվի քննությունը, հատուկ անունների ուղղագրությանը վերաբերող հարցերը, տեքստին առնչվող տարաբնույթ խնդիրները, խոսքային միավորների շարահյուսական փոխհարաբերությունները:

Բաժնի գիտաշխատողները ինն են, ութը՝ բանասիրական գիտությունների թեկնածու:

Արևմտահայերենի բաժինը (բաժնի վարիչ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արտեմ Սարգսյան) կատարում է «Արդի արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» ծրագիրը, որը ներառում է գիտական տարբեր թեմաներ և ենթաթեմաներ:

Գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են հետևյալ ուղղություններով.

- Արևմտահայերենի կանոնարկման սկզբունքների մշակում.
- Արևմտահայերենի արդի բառապաշարի համապարփակ բառարանի ստեղծում:

- Գրական արևմտահայերենի հնչյունական համակարգի ուսումնասիրություն.
- Արևմտահայերենի քերականության ուսումնասիրություն.
- Գրական արևմտահայերենի բառակազմության ուսումնասիրություն.
- Արևմտահայերեն առցանց լեզուն:

Բաժինն ունի ութ գիտաշխատակից, որոնցից երեքը գիտությունների դոկտոր են, երեքը՝ գիտությունների թեկնածու, մեկ կրտսեր գիտաշխատող և մեկ ավագ լաբորանտ-հետազոտող:

Բառարանագրության բաժինը (բաժնի վարիչ՝ Բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Գալստյան) կազմում է «Նոր բառեր» բառարանը, որը հրատարակվում է պրակներով (արդեն հրատարակվել է երեք պրակ):

Բաժինն ունի չորս աշխատակից, երկուսը՝ բանասիրական գիտությունների թեկնածու:

Բարբառագիտության բաժինը (բաժնի վարիչ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր Վիկտոր Կատվայան) կատարում է «Հայ բարբառների ուսումնասիրություն» ծրագիրը, որը ներառում է գիտական տարբեր թեմաներ և ենթաթեմաներ:

Գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են հետևյալ ուղղություններով.

- Բարբառների բառապաշարի ուսումնասիրություն, բարբառային դարձվածային միավորների հետազոտություն, բառիմաստային զուգաբանությունների քննություն.
- Հայերենի բարբառների հնչյունական, բառային, քերականական համակարգերի քննություն.
- Միջինհայերենյան իրողությունների դիտարկում հայերենի բարբառներում.
- Չուսումնասիրված բարբառային միավորների հետազոտություն.

- Հայերենի բարբառային միավորների համեմատական ուսումնասիրություն.

- Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի (բարբառային հայերենի տարածքային 500 տարբերակ ներկայացնող տետրերի) համալրման և թվայնացման աշխատանքներ:

Բաժինն ունի տասներեք աշխատակից, որոնցից երեքը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, վեցը՝ բանասիրական գիտությունների, մեկը՝ տեխնիկական գիտությունների թեկնածու:

Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինը (բաժնի վարիչ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյան) կատարում է «Ընդհանուր և համեմատական լեզվաբանության հարցեր» ծրագիրը:

Ուսումնասիրություններն ընթանում են երկու հիմնական ուղղություններով.

- Ընդհանուր և կիրառական լեզվաբանության.

- Համեմատական և տիպաբանական լեզվաբանության:

Ընդհանուր և կիրառական լեզվաբանության բնագավառում կատարվում է հայ նորագույն լեզվաբանության տերմինաբանության ուսումնասիրություն, քննվում են լեզվաբանական նորագույն ուղղությունները: Համեմատական և տիպաբանական լեզվաբանության բնագավառում կատարվում են բառաքննական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ, պատրաստվում են նյութեր հայերենի ստուգաբանական բառարանի համար:

Կատարվում են հայերենի հ.-ե. ծագման բառերի իմաստային (թեմատիկ) խմբերի քննություն, հայերենի և շրջակա լեզուների համեմատական-տիպաբանական հետազոտություն: Ուսումնասիրվում են հայերենի արաբական փոխառությունները, իտալերենի լեզվամշակութային առանձնահատկությունները:

Բաժնի գիտաշխատակիցները յոթն են, որոնցից մեկը՝ քանասիրական գիտությունների դոկտոր, հինգը՝ քանասիրական գիտությունների թեկնածու:

Կիրառական լեզվաբանության բաժինը (բաժնի վարիչ՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լիանա Հովսեփյան) կատարում է «Կիրառական լեզվաբանության խնդիրներ» ծրագիրը, որը ներառում է գիտական տարբեր թեմաներ և ենթաթեմաներ:

Գիտահետազոտական աշխատանքներն ընթանում են հետևյալ ուղղություններով.

- Համակարգչային լեզվաբանության արդիական խնդիրների քննություն.
- Դասական գրաբարի բառապաշարի քննություն.
- Բնագրային համաբարբառների կազմում.
- Փորձառական հնչյունաբանական հետազոտություններ.
- Ավետարանների հարցական նախադասությունների քննություն:

Բաժինն ունի ութ աշխատակից, որոնցից երկուսը՝ քանասիրական գիտությունների դոկտոր, երկուսը՝ քանասիրական գիտությունների թեկնածու:

Հայոց լեզվի պատմության բաժինը (բաժնի վարիչ՝ քանասիրական գիտությունների թեկնածու Գայանե Մխիթարյան) կատարում է «Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» ծրագիրը:

Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության հիմնական ուղղություններն են.

- Լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխությունների ու դրանց օրինաչափություններ հետազոտություն.
- Հայերենի և այլ լեզուների բառապաշարային աղերսների քննություն:

- Գրաբարի բառապաշարի, օտար և բնիկ շերտերի հարաբերակցության, փոխառյալ բառերի գործառական յուրահատկությունների հետազոտություն.
- Բառաքննական դիտարկումներ և ստուգաբանություններ.
- Գրաբարի բառապաշարի չքննված իմաստային խմբերի ուսումնասիրություն.
- Նույնանիշների ձեռագիր բառարանների բառապաշարի հետազոտություն.
- Ճյուղային տերմինաբանության պատմական քննություն:
- Լատինաբան գրաբարի հետազոտություն.
- Արևմտահայ աշխարհագրարի պատմության հարցերի քննություն:

Բաժինն ունի ինը աշխատակից. մեկը՝ բանասիրական գիտությունների դոկտոր, ութը՝ բանասիրական գիտությունների թեկնածու:

Ինստիտուտի աշխատողների ընդհանուր թիվը՝ 70, գիտական աշխատակիցները 60-ն են. 2-ը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 10-ը՝ գիտության դոկտոր, 36-ը՝ գիտության թեկնածու:

Ինստիտուտում համատեղությամբ աշխատում են 17-ը:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի կազմը. Բ.Գ.Թ. Կատվալյան Վ.Լ. (տնօրեն), Բ.Գ.Թ. Հովհաննիսյան Ն.Գ. (փոխտնօրեն), Բ.Գ.Թ. Աբրահամյան Ա. Ա. (գիտական քարտուղար), Բ.Գ. Պ. Ավետիսյան Յու. Ս. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), Բ.Գ.Թ. Գալստյան Ա.Ս. (բաժնի վարիչ), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Գասպարյան Ս.Ք. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), Բ.Գ.Պ. Գևորգյան Գ.Գ. (ԵՊՀԼ ամբիոնի վարիչ), Բ.Գ.Պ. Դերիկյան Վ.Գ. (ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն), Բ.Գ.Պ. Թոխմախյան Ռ.Ս. (առաջատար գիտաշխատող), Բ.Գ.Թ. Խաչատրյան Վ.Գ. (գիտաշխատող), Բ.Գ.Պ. Համբարձումյան Վ. Գ. (բաժնի վարիչ), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Հովհաննիսյան Լ.Շ. (տնօրենի խորհրդական), Բ.Գ.Պ. Հովսեփյան Լ.Ս. (բաժնի վա-

րիչ), Բ.Գ.Պ. Մեսրոպյան Հ.Հ. (ավագ գիտաշխատող), Բ.Գ.Թ. Միքայելյան Ժ.Ա. (ավագ գիտաշխատող), Բ.Գ.Թ. Մխիթարյան Գ.Ս. (բաժնի վարիչ), Բ.Գ.Թ. Պապիկյան Ս.Վ. (ավագ գիտաշխատող), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Սարգսյան Ա.Ե. (բաժնի վարիչ), Բ.Գ.Թ. Սարգսյան Ն.Ժ. (բաժնի վարիչ), Բ.Գ.Թ. Սարգսյան Մ.Ա. (գիտաշխատող), Բ.Գ.Թ. Սիմոնյան Ն.Մ. (ավագ գիտաշխատող), Բ.Գ.Թ. Սիրունյան Տ.Ղ. (գիտաշխատակից, երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ):

Ինստիտուտն ունի յոթ ասպիրանտ. առկա ուսուցմամբ «Հայոց լեզու» և «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտություններով՝ երկու, հեռակա ուսուցմամբ «Հայոց լեզու» մասնագիտությամբ՝ երկու, «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ՝ երեք:

Ինստիտուտի հայցորդները վեցն են՝ «Հայոց լեզու», «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտություններով:

Ինստիտուտում գործում է մասնագիտացված գրադարան, որը պարունակում է ավելի քան 15 հազար միավոր գրականություն, այդ թվում տարաբնույթ բառարաններ, գիտական պարբերականներ, ձեռագիր նյութեր: Ինստիտուտի գրադարանի էլեկտրոնային քարտարանի կազմումը շարունակվում է:

Ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը ձևավորվել է 2010թ. մայիսի 17-ին: Խորհրդի նպատակն է ակտիվացնել երիտասարդ լեզվաբանների փոխշփումը, գիտաժողովների միջոցով ի մի բերել և քննարկել նրանց ուսումնասիրությունները: Խորհուրդը՝ որպես միջնորդ օղակ, համակարգում է երիտասարդ գիտաշխատողներին ուղղված համաակադեմիական ծրագրերը:

Ինստիտուտում գործում է 0.19 Լեզվաբանության մասնագիտական խորհուրդը, որի գործունեության ժամկետը սահմանվել է մինչև 2018թ. դեկտեմբերի 31-ը: Լեզվաբանու-

թյան խորհրդին թույլատրվում է ատենախոսությունների պաշտպանություններ կազմակերպել Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկի հետևյալ մասնագիտություններով՝ ժ.02.01 ««Հայոց լեզու (բանասիրական գիտություններ)» և ժ.02.02 ««Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն (բանասիրական գիտություններ)»:

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ինստիտուտի ձեռքբերումները անցած 5 տարում: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը, շարունակելով հայ լեզվաբանական մտքի զարգացման նախորդ փուլերի ավանդները և առաջ մղելով գիտական միտքը, դարձել է նոր շրջանի հայերենագիտության կարևորագույն կենտրոն, որտեղ արդեն 75 տարի համակարգված աշխատանքներ են ծավալվում լեզվի հետազոտության հիմնարար ուղղություններով, տասնամյակների ընթացքում ստեղծվել են գիտական մեծ արժեք ներկայացնող բազմաթիվ աշխատություններ, պատրաստվել գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող և հմուտ լեզվաբաններ: Ինստիտուտի տարբեր սերունդների գիտաշխատողներ զբաղվել ու զբաղվում են հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրությամբ, գրական արևելահայերենի ու արևմտահայերենի քննությամբ, հաստատությունում կարևորվում է ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային բառարանների և տերմինաբանների ստեղծումը: Գիտնականների հետաքրքրությունների ոլորտում են նաև գրական լեզվի կանոնարկման, տերմինաբանության մշակման, ուսուցողական լեզվաբանության հարցերը: Ինստիտուտի աշխատակիցները հեղինակել են ընդհանուր-տեսական և հայերենի կառուցվածքի ու պատմական զարգացման առանձին հարցերի վերաբերող մենագրական ու խմբային աշխատություններ, մշակել կամ առաջադրել են հայ քերականագիտության զարգացման համար կարևոր սկզբունքներ: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը զգալի նվաճումներ ունի հայերենագիտական հետազոտությունների բոլոր բնագավառներում:

Ներկայում էլ ինստիտուտի համար բնութագրական են գիտաշխատողների մասնագիտական բարձր որակները, գի-

տական աշխատանքների նկատմամբ պատասխանատվության բարձր զգացումը և պահանջկոտությունը, որոնք տասնամյակների ընթացքում ավանդաբար ձևավորվել են և փոխանցվում են սերնդեսերունդ: Հրապարակվող արժեքավոր հոդվածների և գրքերի քանակի տարեցտարի աճը վկայում է ինստիտուտի վերընթաց զարգացման մասին: Մասնավորապես, վերջին հինգ տարիների ընթացքում ինստիտուտի գիտաշխատողները հրապարակել են 61 մենագրություն, ժողովածու և դասագիրք, 341 հոդված և զեկուցում: Ժամանակակից հայերենի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում դիտարկվել են արդի փուլում լեզվի զարգացման մի շարք հիմնական միտումներ, գործառության հիմնական առանձնահատկություններ, կատարվել է բառապաշարի առանձին շերտերի, տերմինային համակարգի վերլուծություն, արևելահայ խոսակցական տարբերակի, ժողովրդախոսակցական լեզվի մեր օրերին բնորոշ որոշ յուրահատկությունների վերհանում և ուսումնասիրում, խոսակցական հայերենի և գրական լեզվի փոխազդեցությունների դիտարկում: Հետազոտվել են լեզվի բառապաշարն ու բառակազմության եղանակները, դիտարկվել են քերականական համակարգի մի շարք իրողություններ, կատարվել են դիտարկումներ տեքստի վերլուծության, գրական լեզվի կանոնարկման հարցերի ուղղություններով, կանոնի և կիրարկության, բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման, դրանց փոխակերպման լեզվառճական արժեքի և այլ հարցերի շուրջ:

Հրապարակված աշխատանքների մեկ այլ խմբում կատարվել են գրաբարյան ու միջինհայերենյան մի շարք մատյանների լեզվական քննություն, լեզվի զարգացման տարբեր փուլերում տերմինային համակարգերի հետազոտություն, լեզվի ու քերականագիտության պատմական զարգացման առանձնահատկությունների դիտարկում, վեր են հանվել ձեռագիր բառարանների, հիշատակարանների, բժշկարան-

ների բառապաշարի առանձնահատկությունները, հետազոտվել և մեկնաբանվել են հինգերորդ դարի մատենագրության մեջ բառերի մեկնությունների փորձերը: Արդի տիպաբանական լեզվաբանության լույսի ներքո հետազոտվել են հայերենի որոշ տիպաբանական առանձնահատկություններ, դիտարկվել է հնդեվրոպասեմական առնչությունների ուսումնասիրության մեջ հայերենի տվյալների օգտագործման խնդիրը, անդրադարձ է կատարվել ավանդական և արդի հնդեվրոպաբանական մոտեցումների որոշ առանցքային տարբերություններին: Հանգամանորեն քննության են ենթարկվել Մփյուռքի տարբեր համայնքներում գործառող գրական արևմտահայերենի տարբերակային ձևերը, վիճահարույց խնդիրները, որոշվել են արևմտահայերենի խոսքի մասերի գործառության կանոնական ձևերը, համակարգված ձևով ներկայացվել են քերականական օրինաչափությունները, արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային մի շարք ենթահամակարգերի զուգադրական քննությամբ վեր են հանվել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները, մատնանշվել են երկու ճյուղերի տերմինահամակարգերի փոխհարստացման, մերձեցման և միասնական զարգացման հնարավորություններն ու ուղիները, դիտարկվել է արևմտահայերենի ուսումնասիրության ընթացքը՝ սկսած 1860-ական թվականներից մինչև 20-րդ դարի կեսերը: Շատ հրապարակումներում կատարվել է դեռևս չուսումնասիրված բարբառային մի շարք միավորների համակարգերի նկարագրություն, հետազոտվել են ՀՀ տարածքում գործառող Կը ճյուղի բարբառների և գրական արևմտահայերենի փոխհարաբերությունները ըստ հնչյունաքերականական ու բառապաշարային համակարգերի, քննվել են հայ բարբառների քերականական, բառապաշարային, հնչյունական մի շարք իրողություններ՝ լեզվաբանական աշխարհագրության, ինչպես նաև համեմատական և պատմական մեթոդներով: Հարկ է նշել, որ հրատարակված մի շարք աշխատանքներ (ինչպես

«Հայոց լեզվի բարբառային բառարան»-ի է հատոր, «Թատերական և կինեմատոգրաֆիական տերմինների համառոտ բառարան», «Նոր բառեր»-ի Ա, Բ, Գ պրակներ, «Հատուկ անունների ուղղագրական բառարան», «Անհարկի փոխառյալ բառերի հայերեն համարժեքների բառարան», «Քրդերեն-հայերեն, հայերեն-քրդերեն գործնական բառարան») կիրառելի են ոչ միայն լեզվաբանության ոլորտում, այլ նաև կարող են հետաքրքրել հանրության լայն շրջանակների: Վերջին տարիներին ինստիտուտում կիրառական լեզվաբանության ուղղությամբ մշակվել և իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք միտված են մի կողմից՝ լեզվաբանական հետազոտությունների բնագավառում նորագույն տեխնոլոգիաների, համացանցի հնարավորությունների, համակարգչային տեխնիկայի կիրառությանը, մյուս կողմից՝ հայերենի՝ որպես համացանցային լեզվի հաջող գործառնությանը: Իրականացվել է «Հայկական էլեկտրոնային համաբարբառ» նախագիծը, որով գիտական հանրությանը մատուցվում է համակարգչային ծրագրերով ստեղծված, որոնողական ճկուն համակարգ ունեցող, համացանցում հասանելի էլեկտրոնային համաբարբառների մեծածավալ շտեմարան՝ արտակարգ լայն ընդգրկումով, գրաբարյան, միջինհայերենյան և աշխարհաբարյան շրջաններին վերաբերող երկերի շարունակական ներածման հնարավորություններով:

Հաստատությունում պարբերաբար կազմակերպվում են լեզվի ուսումնասիրության տարբեր ոլորտներին նվիրված հանրապետական ու միջազգային գիտաժողովներ, դրանց թվում՝ «Ջահուկյանական ընթերցումներ», Երիտասարդ լեզվաբանների ամենամյա գիտաժողովները: 2017թ. լեզվի ինստիտուտը հաջողությամբ կազմակերպեց առաջին առցանց գիտաժողովը, որին մասնակցեցին երեք տասնյակից ավելի հետազոտողներ ինչպես հանրապետության գիտակրթական տարբեր հաստատություններից, այնպես էլ արտերկրից: Կանոնավորապես կազմակերպվում են գիտական սեմինարներ,

որոնցում գիտաշխատողները ներկայացնում են իրենց հետազոտությունների ուշագրավ արդյունքները, ինչպես նաև լեզվաբանության այս կամ այն ոլորտին վերաբերող նորագույն տեսություններ ու հրապարակումներ: Ինստիտուտը լեզվաքաղաքականությանը, լեզվի խնդիրներին նվիրված հանրապետական խորհրդակցություններ, կլոր սեղան-քննարկումներ է կազմակերպում ՀՀ սփյուռքի նախարարության, գրողների միության, ակադեմիական ու բուհական հաստատությունների հետ համատեղ՝ ներգրավելով բուհական հայերենագիտական ամբիոնների ներկայացուցիչներին: Միաժամանակ, ինստիտուտի գիտաշխատողները ակտիվորեն մասնակցում են բուհերում կազմակերպվող գիտաժողովներին, քննարկումներին, վերապատրաստման դասընթացներին ու այլ աշխատանքների: Հաստատության հետազոտական աշխատանքների արդյունքները մեծապես նպաստում են հայ լեզվաբանական մտքի զարգացմանը, իրենց կիրառությունն են գտնում կրթական համակարգում, հարակից գիտաճյուղերի ուսումնասիրություններում:

Ինստիտուտի արևմտահայերենի բաժնում հետազոտական աշխատանքներ են ծավալել սիրիահայ մտավորականներ, բաժնին կից ձևավորվել և հասարակական կարգով ԱՄՆ-ում գործում է հայերենագետների խումբ, որի աջակցությամբ ընթանում են արևմտահայերենի գործնական բառարանի ստեղծման աշխատանքներ: Սկիզբ է դրվել Արամ Ա կաթողիկոսի հովանու ներքո գործող Արևմտահայերենի պաշտպանության հանձնախմբի հետ համագործակցությանը: Հաստատությունում պարբերաբար զեկուցումներով հանդես են գալիս հայագետներ Կանադայից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Շվեդիայից, Նիդեռլանդներից, Իրանից, Լիբանանից, Եգիպտոսից: Վերջին ժամանակներս ինստիտուտում հյուրընկալվել են Իրանի և Ղազախստանի դեսպանները: Լեզվի ինստիտուտում պատշաճ ուշադրություն է դարձվում երիտասարդ լեզվաբանների պատրաստման խնդրին: Գիտխոր-

հըրդի նիստերում պարբերաբար քննարկվում են ասպիրանտներին և հայցորդներին առնչվող խնդիրներ, տարվա ընթացքում առնվազն երկու անգամ տնօրենությունը հանդիպումներ է ունենում երիտասարդ մասնագետների հետ, անդրադառնում նրանց ուսումնառության ընթացքին, հուզող հարցերին, տրվում են անհրաժեշտ հանձնարարականներ: Լինելով ակադեմիական հաստատություն՝ լեզվի ինստիտուտը չի սահմանափակվում գիտահետազոտական աշխատանքներով: Լեզվաքաղաքականության ու լեզվամշակույթի արդի խնդիրների լուծմանը նպաստելու նպատակով կազմակերպվում են մայրենիի խնդիրներին առնչվող ամենամյա միջոցառումներ, հանդիպումներ ու քննարկումներ լրագրողների, մանկավարժների, սովորողների հետ: Ինստիտուտի աշխատակիցները լեզվական հարցերի շուրջ մեկնաբանություններով հանդես են գալիս հեռուստատեսությամբ ու ռադիոյով, զանգվածային լրատվության այլ միջոցներով: Հաստատության համացանցային կայքը պարունակում է ինստիտուտի մասին անհրաժեշտ տեղեկություններ, ապահովում է տեղեկատվություն տարբեր ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ, ընթերցողներին հասանելի է դարձնում հրատարակված աշխատությունների էլեկտրոնային տարբերակները և այլն: Կայքում զետեղված նյութերով հաստատությունը ձգտում է նաև նպաստել գրական հայերենի անադարտության պահպանմանը, արևմտահայերենի կանոնակարգմանը: Ինստիտուտի տարբեր բաժինների միջև առկա է գիտական համագործակցություն, հաճախ տեղի են ունենում համատեղ նիստեր ու քննարկումներ: Ի դեպ, 2013 թ. ինստիտուտի նախկին չորս բաժիններին ավելացան ևս 3-ը՝ արևմտահայերենի, բառարանագրության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, որը հնարավորություն ստեղծեց տվյալ ուղղություններով կատարել ավելի հիմնավոր և խորը ուսումնասիրություններ:

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի թե՛ ավագ և թե՛ միջին ու երիտասարդ սերունդների գիտաշխատողների գիտական շատ մտահղացումներ պարբերաբար քննարկվում են խորհրդակցությունների, բաժինների ու գիտխորհրդի նիստերի ընթացքում, և դրանց մի մասը ներառվում է հաստատության գիտահետազոտական ծրագրերում, իրականացման երաշխավորվող թեմաների շարքում:

Լեզվի ինստիտուտի գործունեության և զարգացման հիմնական ուղղությունները: Գիտության զարգացման բնականոն ընթացքը ենթադրում է տարբեր ոլորտներում ավելի խորացված ուսումնասիրություն, գիտական արտադրանքի որակի բարձրացում, գիտական նոր ուղղություններով աշխատանքների ծավալում, հետազոտական նոր մեթոդների տիրապետում և գործադրում: Ներկա պայմանները նոր խնդիրներ են առաջադրում նաև գիտակազմակերպական աշխատանքների ոլորտում: Ըստ այդմ՝ լեզվի ինստիտուտի գործունեությունն ու զարգացումը դիտարկվում են երկու հիմնական ուղղություններով՝ գիտական աշխատանքներ և գիտակազմակերպական աշխատանքներ:

Գիտական աշխատանքներ: Գիտական աշխատանքների ոլորտում կարևորվում են հետևյալ ուղղությունները և ծրագրերը:

Արդի հայերենի բոլոր դրսևորումների կառուցվածքի և գործառության համակարգված ուսումնասիրություն, որ ներառում է՝ ա) գրական արևելահայերենի բառապաշարի և քերականական իրողությունների ուսումնասիրում, կանոնարկում և նորմավորում, տերմինների մշակում, տերմինաբանական, ուղղագրական, երկլեզվյան բառարանների կազմում. բ) գրական արևմտահայերենի բառապաշարի և քերականական իրողությունների ուսումնասիրում, ըստ հնարավորության՝ նաև խոսակցական արևմտահայերենի ուսումնասիրում. գ) արևելահայերենի և արևմտահայերենի զուգադիր քննություն և նկարագրություն, գրական երկու

հայերենների մերձեցման և փոխներթափանցման հնարավորությունների ուղղությամբ հետազոտությունների ծավալում. դ) խոսակցական հայերենի կառուցվածքի և գործառության համակարգված ուսումնասիրություն. ե) բարբառագիտական ատլասի ամբողջացման, բարբառային գուգաբանությունների շտեմարանների կազմման աշխատանքների շարունակում, բարբառագիտության տեսական հարցերի արծարծում, առանձին բարբառների ամբողջական ուսումնասիրում, համեմատական, տարածքային բարբառագիտական աշխատանքների նախաձեռնում, ընդհանուր հայերենյան և բարբառային հատկանիշների տարանջատում, բարբառային հայերենի ամբողջական նկարագրության ուղղությամբ աշխատանքների ծավալում:

Առաջնահերթ ենք համարում.

1. արդի հայերենի ամբողջական քերականության ստեղծումը. այն պարունակելու է աշխարհաբարի ձևավորման հանգամանքներն ու ընթացքը, համակողմանիորեն ներկայացնելու է արդի հայերենի բոլոր դրսևորումների՝ արևելահայերենի, արևմտահայերենի, խոսակցական լեզվի և բարբառների հնչյունաքերականական իրողությունները՝ փոխադարձ կապերով ու առնչություններով.
2. արևմտահայերենի գիտական քերականության ստեղծումը. աշխատանքը կպարունակի արևմտահայերենի ձևավորման պատմությունը, գրական արևմտահայերենի հնչյունաքերականական համակարգերի ու բառապաշարի գիտական համակողմանի վերլուծությունը, կանոնական, միասնական ձևերի առաջադրում և հիմնավորում՝ այդպիսով հիմք դառնալով արևմտահայերենի դասագրքերի ստեղծման.
3. «Հայ բարբառագիտություն» աշխատության ստեղծումը. այն կպարունակի հայ բարբառագիտության պատմության նկարագրություն, բարբառագիտության տեսական ու գործնական մի շարք խնդիրների նորովի մեկնաբանություն, կամփոփի բարբառագիտության արդի փուլի ձեռքբերումները:

Հայոց լեզվի պատմական զարգացման, ժամանակային տարբեր դրսևորումների շարունակական ուսումնասիրություն, որ ներառում է՝ ա) հայոց լեզվի ծագման, ձևավորման և լեզվական շփումների հարցերի հետագա խորացված ուսումնասիրում. բ) հայերենի ստուգաբանական բառարանի ցանկում ճշգրտումներ և լրացումներ կատարելու ուղղությամբ աշխատանքների շարունակում. գ) գրաբարյան բառապաշարի ամբողջացման, նորահայտ բառերի ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքների շարունակում. դ) գրաբարի բառապաշարի և քերականական կառուցվածքի համակարգված ուսումնասիրություն և գրաբարի ակադեմիական քերականության ստեղծման ուղղությամբ աշխատանքների ձեռնարկում. ե) միջին հայերենի բառապաշարի և կառուցվածքի հետագա քննություն, բարբառների ուսումնասիրության ժամանակ միջինհայերենյան լեզվական տվյալների հաշվառում. զ) գրաբարյան և միջինհայերենյան սկզբնաղբյուրների լեզվական քննության կատարում. է) հայերենի ամբողջական պատմական քերականության ստեղծման ուղղությամբ աշխատանքների շարունակում:

Առաջնահերթ ենք համարում.

1. ըստ զարգացման տարբեր փուլերի՝ գրաբարի համակարգային քննության իրականացում՝ հստակորեն տարբերակելու բնիկ իրողությունները ազդեցություններից, որոշելու տարբերակային ձևերն ու դրանց հնարավոր բարբառային հիմքերը, ունենալու լեզվական փոփոխությունների ամբողջական պատկերը՝ գրաբարի տարբեր փուլերը համեմատելու միջոցով.

2. միջին հայերենի ամբողջական քերականության ստեղծումը. այն կապարունակի միջին հայերենի կազմավորման և ուսումնասիրության ամբողջական նկարագրություն, հնչյունաքերականական համակարգերի ու բառապաշարի համակարգային վերլուծություն, կներկայացնի միջինհայերենյան շրջանի գրականության լեզվի մանրագնին ուսումնասի-

րություն՝ ըստ ժամանակային ու տարածական հատկանիշների:

Ընդհանուր և համեմատական, կիրառական լեզվաբանական ուղղություններով ուսումնասիրությունների ծավալում և խորացում, որ ներառում է՝ ա) հայերենի և հնդեվրոպական տարբեր լեզուների առնչությունների հետազոտում, բ) հայերենի և փոքրասիական հին ու հնագույն լեզուների առնչությունների ուսումնասիրություն, գ) բառաքնական ու ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ, դ) իմաստային տարբեր խմբերի մեջ մտնող բառերի ծագումնային, իմաստային և բառակազմական քննություն, ե) հայերենի և այլ լեզուների քերականական իրողությունների համեմատական և տիպաբանական դիտարկում, զ) նորագույն լեզվաբանական ուղղությունների ուսումնասիրում և լեզվի հետազոտման ոլորտում նոր մեթոդների գործածում:

Առաջնահերթ ենք համարում.

1. ընդհանուր և համեմատական լեզվաբանության արդի նվաճումները, լեզվաբանական նորագույն ուղղությունների հետազոտական խնդիրներն ու մեթոդները ներկայացնող աշխատության պատրաստում.
2. հայերենի ուսումնասիրության գործում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ փորձառական հնչյունաբանության զարգացում. փորձառական հետազոտության կարիք ունեն հայերենի բոլոր դրսևորումների հնչյունական իրողությունները.
3. էլեկտրոնային շտեմարանների, համակարգչային քերականական բառարանների, համաբարբառների, գրադարանի ձևավորում, էլեկտրոնային ուսուցողական ուղղագրական, ուղղախոսական համակարգերի ստեղծում.
4. բարբառային խոսքի ձայնագրում և բարբառային ձայնադարանի ընդլայնում, համացանցային շտեմարանի ստեղծում, որը մեծապես կնպաստի բարբառների շարունակական հետազոտությանը:

Գիտակազմակերպական աշխատանքներ: Լեզվի ինստիտուտի բնականոն և արդյունավետ գործունեության և զարգացման առումներով կարևորվում են հետևյալ բնույթի աշխատանքները.

ա) կատարվող գիտական աշխատանքների համակարգում, աշխատակիցների գիտական արտադրանքի որակը շարունակաբար բարձրացնելու նպատակով գիտական սեմինարների, քննարկումների, բանավեճերի պարբերական գումարում, նոր մեթոդների և ուղղությունների տիրապետման նպաստում.

բ) միջոցառումների ձեռնարկում՝ գիտաշխատողների պատասխանատվությունը և հաշվետվողականությունը բարձրացնելու ուղղությամբ.

գ) ընդհանուր լեզվաբանության և լեզվի տեսության, հայերենագիտության տարբեր ուղղությունների գծով գիտական բարձրորակ կադրերի պատրաստում.

դ) գիտաժողովների կազմակերպում և անցկացում, հանրապետական և միջազգային գիտա ժողովներին աշխատակիցների մասնակցության նպաստում, գիտական հանդեսներում հրապարակումների խրախուսում.

ե) նախկինում ինստիտուտի կողմից պարբերաբար հրատարակվող ժողովածուների (Լեզվի և ոճի հարցեր, Հայոց լեզվի պատմության հարցեր) վերականգնում.

զ) գիտական հետազոտություններում նորագույն տեխնիկական միջոցների ըստ հնարավորին ներդրում և կիրառում, բարբառագիտական արշավների կազմակերպում.

է) հայերենագիտության բնագավառում հետազոտությունների շարունակականությունն ապահովելու, հայերենագիտական առկա նվաճումները արժևորելու և գիտական շրջանառության մեջ ունենալու նպատակով լսումների պարբերական կազմակերպում.

ը) կոլեկտիվում բարյացակամության և համերաշխության մթնոլորտի պահպանում, գիտաշխատողներին գիտահետազոտական նպատակների շուրջ համախմբում.

թ) դրամաշնորհային և հետազոտական այլ ծրագրերում գիտական ներուժի մասնակցության նպաստում.

ժ) ակադեմիայի հայագիտական կազմակերպությունների, բուհերի համապատասխան ամբիոնների հետ փոխադարձ կապերի զարգացում, համատեղ գիտաժողովների, գիտական բանավեճերի կազմակերպում, ընդհանուր հետաքրքրությունների վերաբերյալ ծրագրերի առաջադրում և իրագործում.

ժա) մասնակցություն բուհական կրթական ծրագրերի և դասագրքերի ստեղծմանն ու փորձաքննությանը, դպրոցական դասագրքերի ստեղծմանն ու փորձաքննությանը.

ժբ) բնական և հասարակական գիտությունների տարբեր բնագավառների կազմակերպությունների և մասնագետների հետ համագործակցության ծավալում՝ մաթեմատիկական լեզվաբանության, փորձառական հնչյունաբանության, խոսքի հոգեբանության, ոճաչափության, խոսքի ավտոմատ ճանաչման ու մշակման և մի շարք այլ կարևոր բնագավառների գիտական հարցեր լուծելու նպատակով.

ժգ) համագործակցության ծավալում լեզվի պետական տեսչության, կրթության և գիտության, սիյուռքի նախարարությունների, հայագիտության զարգացմամբ շահագրգիռ այլ կազմակերպությունների ու գերատեսչությունների հետ.

ժդ) արտերկրի հայագիտական կենտրոնների հետ համագործակցության ծավալում, արտերկրում հրապարակումների խրախուսում.

ժե) մասնակցություն միջազգային գիտական կազմակերպությունների ու ասոցիացիաների գործունեությանը, ծրագրերին, միջազգային գիտական համագործակցության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում.

ժգ) գիտելիքների քարոզչություն և տարածում, հասարակության հետ կապի ակտիվացում, ինստիտուտի համացանցային կայքի զարգացում:

ժե) գրական լեզվի նորմերից շեղումների դեմ պայքարում զանգվածային լրատվամիջոցներին, հրապարակային խոսքի այլ կրողներին լեզվական աջակցության տրամադրում:

ժը) առցանց գիտաժողովների կազմակերպում, էլեկտրոնային հանդեսի ստեղծում, լեզվական հարցերի շուրջ համացանցային զրույցների շարքի ստեղծում:

1921 թ. հիմնադրվում է Էջմիածնի մշակութային-պատմական ինստիտուտը, որը 1925 թ. վերակազմավորվում է գիտության և արվեստի ինստիտուտի: Դա ակադեմիական կազմակերպություն էր, որը կոչված էր համրապետությունում զարգացնելու հետազոտությունները բնական, տեխնիկական, հումանիտար և հասարակական գիտությունների հետազոտությունները բնագավառում: Այնուհետև ստեղծվում են նոր գիտահետազոտական ինստիտուտներ, լաբորատորիաներ, տարածքային կենտրոններ՝ բույսերի պաշտպանության, գյուղատնտեսության վերակառուցման, կառույցների շինանյութերի, երկրաբանության ինստիտուտները, բժշկական ուղղվածության մի քանի ինստիտուտներ՝ կուրորտաբանության, ֆիզիկական բժշկության, ռենտգենաբանության և այլն: Ստեղծվում է առաջին երկրաշարժագիտական կայանը:

Այդ գիտահետազոտական հիմնարկների հենքի վրա 1935 թ. ստեղծվում է ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը (Արմֆան), որի նախագահ է դառնում ակադ. Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը: ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը 1938 թ. գլխավորում է ակադ. Հ. Ա. Օրբելին: Կարճ ժամանակահատվածում ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը դառնում է երկրի խոշորագույն գիտական կենտրոններից մեկը:

1943 թ. նոյեմբերին ստեղծվում է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան: Ակադեմիայի հիմնադիր ակադեմիկոսներից են Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, Ստեփանոս Մալխասյանը և այլն: ԳԱ առաջին պրեզիդենտ է ընտրվում Հովսեփ Օրբելին*:

* Ըստ «ՀՀ ԳԱԱ 60 տարում» գրքի, «Գիտություն» հրատ., Ե. 2003, էջ 35-36:

1943*

ՀՍՍՌ ժողկոմսովետի 1943 թ. նոյեմբերի 25-ի 738 որոշմամբ հաստատվում է ԳԱ գիտական հիմնարկների կառուցվածքը: Ըստ այդ որոշման՝ լեզվի ինստիտուտում գործում են հայոց լեզվի պատմության և բարբառագիտության, բառարանագրության սեկտորները**, Ն.Յա. Մառի կաբինետը:

(ՀԱԱ, ֆ. 113, ց. 16, գ. 784)

Ն.Մառի կաբինետը ստեղծվել էր դեռևս 1942 թ. մայիսին՝ Արմֆանի նախագահության որոշմամբ՝ գրականության և լեզվի ինստիտուտին կից:

(ՀԱԱ, ֆ. 766, ց. 6, գ. 138, թ. 5)

1946

ՀՍՍՌ ԳԱ 1946թ. գիտահետազոտական աշխատանքների հիմնական արդյունքների և 1947թ. հիմնական խնդիրների մասին՝ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումից. «Մառի անվան լեզվի ինստիտուտը՝ հաշվետու տարում ավարտել է «Հայ բարբառագիտությունը» մենագրությունը, ժամանակակից հայերենի առձեռն բացատրական բառարանը (60000 բառից), հայ-ուտիերեն բառարանը և Մոզդոկի հայերի բարբառի բառարանը, տարվա սկզբից սկսվել է ռուս-հայերեն մեծ բառարանը կազմելու աշխատանքը, և այս տարի կազմված է 52 մամուլ: Շարունակվել է աշխատանքը այնպիսի թեմաների ուղղությամբ, ինչպես՝ հայոց լեզվի հնագույն շրջանը, հայվրացական լեզուների ձևաբանական կարգերի ընդհանրությունները, միջին հայերեն լեզուն, հայերենի ոճաբանությունը և այլն: Հայկ. ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հ. Աճառյանը հաջողությամբ ավարտել է աշխատանքը հայ բարբառագի-

* Արխիվային նյութերի որոշ հին օտար տեքստներ փոխարինվել են հայերեն համարժեքներով:

** Մինչև 1967թ. բաժինները կոչվում էին սեկտորներ:

* Ինստիտուտը Ն.Մառի անունով է կոչվել 1944-1950 թթ.:

տության հարցերի մշակման ուղղությամբ» (Արձանագրություն Հայկ. ՍՍՌ ԳԱ ընդհանուր ժողովի, Ե., ԳԱ հրատ., 1946):

(ՀԱԱ, ֆ. 766, ց. 3, գ. 368, թ. 37, 38)**

ՀՍՍՌ ԳԱ 1946-1950 թթ. գիտահետազոտական աշխատանքների հնգամյա պլանի մասին՝ ՀՍՍՀ ԳԱ վիցե-պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ Վ. Համբարձումյանի զեկուցումից. «Ն. Յա. Մառի անվան լեզվի ինստիտուտը ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառարաններից բացի՝ հնգամյակում ավարտելու է արդի հայերենի բացատրական բառարանը, հայ բարբառների մեծ բառարանը և մի շարք երկլեզվյան բառարաններ» (ԳԱ ընդհանուր ժողովի արձանագրությունից (21 հուլիսի 1946 թ.):

(ՀԱԱ, ֆ. 766, ց. 3, գ. 367, թ. 16)

1947

1947թ. գիտական գործունեության հիմնական արդյունքներն ամփոփելու և 1948թ. գիտահետազոտական աշխատանքների պլանը հաստատելու մասին՝ Հայկ. ՍՍՌ ԳԱ տարեկան ժողովում Վ. Հ. Գուլբանյանի զեկուցումից. «Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտում ավարտված արժեքավոր աշխատանքներից են գրական աշխարհագրի պատմությունը (ֆիլ. գիտ. թեկն. Գ. Սևակ), հայ-վրացական լեզվական

** Տարեգրությունը կազմելիս օգտագործվել են ՀՀ ազգային արխիվի ֆոնդերում պահվող նյութերը՝ լեզվի ինստիտուտի աշխատակիցների կիսամյակային և տարեվերջյան հաշվետվությունները, զեկուցազրույթը, գիտխորհրդի նիստերի արձանագրությունները, փաստացի ստուգումների արդյունքների գրանցումները, ամենամյա հաշվետվությունները, տեղեկանքները և այլ փաստաթղթեր: Շնորհակալություն արխիվի աշխատակիցներին՝ այդ ամենը սիրով տրամադրելու, խորհուրդների և հոգատար վերաբերմունքի համար:

ընդհանրություններին նվիրված ընդարձակ մենագրության՝ ձևաբանությանը վերաբերող մասը (ֆիլ. գիտ. թեկն. Ա.Մուրվայան), հայագիտական (լեզվին վերաբերող) գրականության լրիվ մատենագիտությունը (Հայկ. ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հ. Աճառյան), հայերենի առձեռն բառարանը: 1948թ. պետք է ավարտվի Հայկ. ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Ղափանցյանի «Հայոց լեզվի կազմավորումը և հնագույն շրջանը» մենագրությունը: Հայ-ռուսերեն մեծ բառարանից արդեն կազմված է 150 մամուլ:

(ՀԱԱ, ֆ. 766, ց. 3, գ. 371, թ. 95)

Ն. Մառի անվան լեզվի ինստիտուտը շարունակում է հայոց լեզվի պատմության և տեսության հարցերի մշակումը, հայ-ռուս, հայ-վրացերեն լեզվական հարաբերությունների ուսումնասիրությունը և հայ-ռուսերեն մեծ բառարանը կազմելու աշխատանքները, բառարանը բաղկացած է լինելու 450 մամուլից, որից 150 մամուլն արդեն պատրաստ է, իսկ 1948թ. պատրաստվելու է ևս 120 մամուլ:

(ՀԱԱ, ֆ. 766, ց. 3, գ. 371, թ. 102)

Ն.Մառի անվան լեզվի ինստիտուտը, շարունակելով զբաղվել հայ լեզվի հնագույն շրջանի պատմության հարցերով, ձեռնարկում է նաև միջին հայերենի և ժամանակակից հայերենի ուսումնասիրությունը, որոնք բառարանագրական աշխատանքների հետ պետք է օժանդակեն մեր լեզվաշինարարական կարևոր գործին: Մեծ տեղ է հատկացվում բառարանագրական աշխատանքներին: Խմբագրվելու և հրատարակության է հանձնվելու Նոր առձեռն բառարանը (60000 բառից), ավարտվելու է ռուս-հայերեն մեծ բառարանի առաջին հատորը (93 մամուլ), սկսվելու են վրացերեն-հայերեն, քրդերեն-հայերեն բառարանները և գավառական բառերի մեծ բառարանը կազմելու աշխատանքները:

(ՀԱԱ, ֆ. 766, ց. 3, գ. 368, թ. 45, 46)

Լեզվի ինստիտուտի գիտխորհրդի կազմը՝

1. ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հ. Աճառյան
 2. ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գր. Ղափանցյան
 3. ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ավ. Իսահակյան
 4. ՀՍՍՌ ԳԱ թղթ. անդամ Լ. Մելիքսեթ-Բեկ
 5. ՀՍՍՌ ԳԱ թղթ. անդամ Ա. Ղարիբյան
 6. ֆիլ. գիտ. դոկտոր Մ. Մկրյան
 7. ֆիլ. գիտ. դոկտոր Էդ. Աղայան
 8. ֆիլ. գիտ. դոկտոր Եր. Տեր-Մինասյան
 9. ֆիլ. գիտ. թեկնածու Գ. Սևակ
 10. ֆիլ. գիտ. թեկնածու Ա. Մուրվալյան
 11. ֆիլ. գիտ. թեկնածու Գ. Գասպարյան
- ինստ. գիտքարտուղար՝ Ս. Ղազարյան
28/9-48 թ.

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 2, գ. 6)

Հայկ.ՍՍՌ ԳԱ 1948թ. աշխատանքների արդյունքների և 1949թ. գիտահետազոտական աշխատանքների պլանի մասին Հայկ.ՍՍՌ ԳԱ վիցեպրեզիդենտ, ակադ. իսկ. անդամ Վ. Հ. Գուլբանյանի զեկուցումից (31 մարտի 1949 թ.). «Ն. Յա. Մառի անվան լեզվի ինստիտուտի աշխատանքները 1948 թ. ընթացել են հայոց լեզվի պատմության, ժամանակակից հայերենի խնդիրների, հայերենի բառարանների ուսումնասիրության, բառարաններ կազմելու, Ն. Մառի լեզվի նոր ուսմունքի և հայագիտական հայացքների լուսաբանման ուղղությամբ:

Ընթացիկ տարում ավարտվել է հայոց և վրաց լեզուների լեզվամտածողական ընդհանրությունները ներկայացնող թեման (ֆիլ. գիտ. թեկն. Ա. Ա. Մուրվալյան): Ավարտվել է լեզվաբանության բնագավառում հայագիտական գրականության լրիվ մատենագիտությունը (ակադ. իսկական անդամ Հ. Հ. Աճառյան):

Կազմվել է ռուս-հայերեն մեծ բառարանի 2-րդ հատորը՝ 120 մամուլ ծավալով (թղթակից անդամ Ա. Ս. Ղարիբյանի ղեկավարությամբ):

Ձեռնարկվել է պարսկերեն-հայերեն-ռուսերեն ընդարձակ բառարանը կազմելու աշխատանքը:

Արդի հայերենի սեկտորը ձեռնարկել է ժամանակակից հայերենի համաբարբառ կազմելու աշխատանքը: Պատրաստվել և հրատարակության է հանձնվել «Մարքսիզմի կլասիկները լեզվի և մտածողության մասին» աշխատությունը:

Հրատարակվել է «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը» (Ֆիլ. գիտ. թեկն. Գ. Գ. Սևակ):

Հրատարակության է պատրաստված Ն. Մառի հատընտիր երկերի ժողովածուի 1-ին հատորը՝ հայերեն, ավարտված է «Մառը հայերենի մասին» թեման (Ֆիլ. գիտ. թեկն. Ա. Հ. Մովսեսյան):

Ն. Յա. Մառի անվան լեզվի ինստիտուտը 1949 թ. աշխատելու է ժամանակակից հայոց լեզվի պատմության, մասնավորապես արդի հայերենի քերականական և ոճաբանական հարցերի ուղղությամբ: Շարունակվելու է հայկական բարբառների ուսումնասիրությունը, կազմվելու է ուրարտական արձանագրությունների ժողովածու, շարունակվելու են ռուս-հայերեն մեծ բառարանի 3-րդ հատորը կազմելու աշխատանքները: Շարունակվելու են 60000 բառից կազմված պարսկերեն-հայերեն-ռուսերեն բառարանը կազմելու աշխատանքները:

(ՀԱԱ, ֆ. 766, ց 3, գ. 374, թ. 161, 162)

1949

Ինստիտուտն ունի 4 բաժին՝

1. Լեզվի պատմության (վարիչ՝ Ս. Ղազարյան), ավագ գիտաշխատակից՝ Հ. Հ. Աճառյան (աշխատում է 1944թ.):

2. Մառի կաբինետ (վարիչ՝ Ա. Մովսեսյան), գիտաշխատակից՝ Ա. Մուրվալյան:

3. Բառարանագրության (վարիչ՝ Մ. Գևորգյան), աշխատակիցներ՝ Բ.Գ.Դ. Ռ. Աբրահամյան, Բ.Գ.Թ. Ի. Կ. Կուսիկյան, Վ. Բաբայան, Ա. Քոչոյան, Գ. Բադալյան, Ա. Հակոբյան:

4. Ժամանակակից հայոց լեզվի (վարիչ՝ Գուրգեն Սևակ-Գրիգորյան), աշխատակիցներ՝ Ա.Գրիգորյան, Գ. Զահուկյան, Ա. Աբրահամյան, Թ. Զիլինգարյան:

Ինստիտուտի ադմինիստրատիվ-կառավարող անձնակազմն է՝ Ա.Ս. Ղարիբյան (տնօրեն), Սերոբ Ղազարյան (գլխաբարտուղար), Սերգեյ Այդինյան (ավագ հաշվապահ), Հասմիկ Մանուկյան (գրադարանի վարիչ), Ռոզա Զալյան (քարտուղար):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 2, գ. 24)

ՀՍՍՌ ԳԱ Ն.Մառի անվան լեզվի ինստիտուտի՝ գիտական աստիճաններ շնորհող գիտությունների կազմը՝

1. Ղափանցյան Գ. Ս. (ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար),

2. Ղարիբյան Ա. Ս. (ինստիտուտի տնօրեն),

3. Աճառյան Հ. Հ. (ավագ գիտաշխատող),

4. Աղայան Է. Բ. (ԵՊՀ դեկան),

5. Սևակ-Գրիգորյան Գուրգեն Գ.,

6. Ղազարյան Սերոբ Ղ. (գլխաբարտուղար):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 2, գ. 2)

1951

Պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի զեկուցումը 1951թ. գործունեության և 1952թ. աշխատանքային պլանների մասին. «Լեզվի վերաբերյալ ընկեր Ստալինի հանձարեղ աշխատությունների հրապարակումից հետո, երբ առավելագույն պարզությամբ որոշվեցին սովետական լեզվաբանության զարգացման սկզբունքները և ուղիները, արմատապես

վերակառուցվեց ԳԱ լեզվի ինստիտուտի աշխատանքը: Լեզվի ինստիտուտի աշխատանքի վերակառուցումն արդեն տվել է իր առաջին դրական արդյունքները: Հրապարակվել է ինստիտուտի գիտական աշխատանքների ժողովածուն, որը նվիրված է Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությանը: Հայերեն և ռուսերեն հրապարակվել է Հայկ. ՍՍՌ ԳԱ իսկ. անդամ, պրոֆ. Գ. Ա. Ղափանցյանի «Լեզուների ծագումնաբանական դասակարգման հիմունքները և լեզուների զարգացման աստիճանականության՝ Մառի հայացքների քննադատությունը» խորագրով աշխատությունը: Հրատարակության է պատրաստ «Ռուս-հայերեն մեծ բառարանի» I հատորը:

Չնայած լեզվի ինստիտուտի որոշ հաջողություններին՝ այստեղ հիմնական թերությունը մնում է այն, որ ոչ բոլոր լեզվաբաններն են, Մառի սխալների քննադատության հետ մեկտեղ, ձեռնամուխ եղել դրական ստեղծագործական աշխատանքի: Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձարեղ աշխատության լույս տեսնելուց հետո անցած դարաշրջանում լեզվի ինստիտուտը դեռևս քիչ բան է արել հայոց լեզվի գիտական քերականական մշակման, լեզվի զարգացման օրենքների հետ կապված խնդիրների ուսումնասիրության, հայոց լեզվի բառային ֆոնդի ուսումնասիրության ուղղությամբ և այլն: Դրա հետևանքով ինստիտուտում դեռևս քիչ են այնպիսի ծանրակշիռ մենագրական աշխատանքները, որոնք կարելի լիներ տպագրության հանձնել մոտ ապագայում (1952-1953 թթ.)» (ԳԱ ընդհանուր ժողովի արձանագրությունից (1952թ., փետրվարի 26-28)):

(ՀԱԱ, ֆ. 766, ց. 3, գ. 382, թ. 267, 268)

1952-1955 թթ. ընթացքում ՀՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի հրատարակած աշխատությունների ցուցակ.

1. Հ. Աճառյան, Հայերենի լիակատար քերականություն, հ. I, 25 մամուլ:
2. Հ. Աճառյան, Հայերենի լիակատար քերականություն, հ. III, 25 մամուլ:
3. Հ. Աճառյան, Առտիալի բարբառը, 17 մամուլ:
4. Գ. Ղափանցյան, Հայերենի զարգացման ներքին օրինաչափությունները, 2 մամուլ:
5. Գ. Ղափանցյան, Հայաստանի քարակոթողներ, 2 մամուլ:
6. Է. Աղայան, Մեղրու բարբառը, 17 մամուլ:
7. Ա. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, 22 մամուլ:
8. Վ. Առաքելյան, Ավ. Իսահակյանի պոեզիայի լեզուն, 15 մամուլ:
9. Ա. Մուրվալյան, Հայերենի բառապաշարը, 17 մամուլ:
10. Ռուս-հայերեն բառարան, հ. I, 100 մամուլ:

Հանձնվել են տպագրության՝

1. Հ. Աճառյան, Հայերենի լիակատար քերականություն, հ. III, 25 մամուլ:
2. Գ. Ղափանցյան, Լեզվաբանական և պատմագիտական աշխատություններ, հ. I, 22 մամուլ:
3. Ս. Ղազարյան, Ռուսերենի դերը արդի հայերենի հարստացման և զարգացման մեջ, 30 մամուլ:
4. Վ. Առաքելյան, Արդի հայերենի հնչյունաբանությունը, 8 մամուլ:

1953

Է. Բ. Աղայանը ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1982 թ. ակադեմիկոս:

Է. Բ. Աղայանը ընտրվում է Երևանի քաղխորհրդի պատգամավոր:

Հայաստանի ազգային արխիվում պահպանվում է լեզվի ինստիտուտի՝ 1953 թ. աշխատակիցների հետևյալ ցուցակը. Ղափանցյան Գ. Ա. (տնօրեն), Աճառյան Հ. Հ. (ավագ գիտաշխատող), Աղայան Է. Բ. (բաժնի վարիչ), Տեր-Մինաս-

յան Ե. Գ. (բաժնի վարիչ), Մուրվալյան Ա. Ա. (բաժնի վարիչ),
 Ղազարյան Ս. Ղ. (բաժնի վարիչ), Աբրահամյան Ա. Ա., Գրի-
 գորյան Ա. Վ. (ավագ գիտաշխ.), Առաքելյան Վ. Դ. (ավագ գի-
 տաշխ.), Մկրտչյան Հ. Ս. (կրտս. գիտաշխ.), Մանտաձե Հ. Հ.
 (գլխաբարտուղար), Հակոբյան Ա. Ս., Բաբայան Վ. Ա., Քոչոյան
 Ա. Կ., Չիլինգարյան Թ. Ս., Վեմյան Խ. Բ. (կրտսեր գիտաշխ.),
 Այդինյան Ս. Խ. (հաշվապահ), Զալյան Ռ. Գ. (քարտուղար-մե-
 քենագրուհի), Ներսեսյան Գ. Ս. (հավաքարար), Մանուկյան
 Հ. Հ. (գրադարանի վարիչ):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 4, գ. 7)

1955

Ինստիտուտի աշխատողների ընդհանուր թիվը՝ 20,
 այդ թվում գիտական անձնակազմը՝ 16: Երկու անձ աշխա-
 տում է համատեղությամբ, հինգ անձ աշխատում է կես դրույ-
 քով, համատեղում են բոլոր բաժինների վարիչները:

Ինստիտուտը ունի 3 բաժին.

1. Ժամանակակից հայոց լեզվի,
2. բառարանագրության (վարիչ՝ Ե. Տեր-Մինասյան),
3. բարբառագիտության և հայոց լեզվի պատմության (վարիչ՝
 Ս. Ղազարյան):

Ինստիտուտը ունի 8 ասպիրանտ. 3-ը՝ արտադրու-
 թյունից կտրված, 5-ը՝ արտադրությունից չկտրված:

1956

Գուրգեն Սևակը ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ թղթակից
 անդամ, 1971 թ. ակադեմիկոս:

1957

Ինստիտուտը ձեռնարկում է ժամանակակից հայոց
 լեզվի քարտարան կազմելու գործը (Հայկ. ՍՍՌ ԳԱ լեզվի
 ինստիտուտի 1956-57 թթ. գործունեության մասին զեկու-
 ցումից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 5, գ. 90)

Քաղվածք

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Տերմինա-
բանական կոմիտեի 1957 թ. դեկտեմբերի 12-ի թիվ 6 արձա-
նագրությունից (կետ 4). «Գիտության տարբեր ճյուղերի զար-
գացումը հրամայական պահանջ է առաջադրում մշակել
հայերեն լեզվով տերմինաբանություն՝ բոլոր մասնագիտու-
թյունների գծով: Այդ նպատակը իրականացնելու համար
խնդրել Հայկ. ՍՍՌ ԳԱ նախագահությանը՝ լեզվի ինստի-
տուտի կազմում ստեղծել տերմինաբանական սեկտոր կամ
խումբ» (29/1-58 Տերմինաբանական կոմիտեի գիտքարտու-
ղար՝ Շ. Բարսեղյան):

(ՀԱՍ, ֆ. 766, ց. 7, գ. 1020)

1958

ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ ակադ. Վ. Համբարձումյանը
պաշտոնական նամակով դիմում է ՀԿՊ կենտկոմի քարտու-
ղար Ս. Շ. Թովմայանին՝ ներկայացնելով Հայկ. ՍՍՌ ԳԱ
նախագահության՝ 1958 թ. հունվարի 22-ի թիվ 4 (349) արձա-
նագրության քաղվածքը՝ Հայկ. ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտը
առաջին կարգի փոխադրելու մասին առաջարկը:

1959

Սեպտեմբերի 4-ի գիտխորհրդի նիստի արձանագրու-
թյունը տեղեկացնում է, որ Ս. Իսրայելյանը հուլիս ամսին
գործուղվում է Լեռնային Ղարաբաղ, Ստեփանակերտում և
շրջակա գյուղերում հավաքում 20-25 հեքիաթ, առածներ,
բառեր, հանելուկներ, թևավոր խոսքեր, աֆորիզմներ:

Վ. Պետոյանը գործուղման ընթացքում հարուստ նյու-
թեր է հավաքում Մասունի բարբառի 10 խոսվածքներից (50
տեքստ, 207 հանելուկ, առած և շուտասելուկ):

Կ. Դավթյանը Շամշադինի 15 գյուղերից հավաքում է
բարբառային նյութեր, գրի է առնում հանելուկներ, շուտա-
սելուկներ և առակներ:

Հ. Մուրադյանը գործուղման ընթացքում ուսումնասիրում է Մեղրու շրջանի 4 գյուղերի խոսվածքները:

Ա. Պողոսյանը մեկ ամսով գործուղվում է Լեոնային Ղարաբաղի Հաղրութի շրջան, շրջում 18 գյուղեր՝ բարբառային տարբերություններ արձանագրելով միայն 6 գյուղերում:

Ա. Գրիգորյանը մեկ ամսով գործուղվում է Դոնի Ռոստով՝ Նոր Նախիջևանի բարբառի խոսվածքներից նմուշներ հավաքելու:

Գիտխորհուրդը որոշում է աջակցել Դոնի Ռոստովի հայությանը հայ գրականություն մատակարարելուն և շնորհակալություն հայտնել Նոր Նախիջևանի շրջանի գործադիր կոմիտեին և շրջկոմին՝ գործուղված գիտական արշավախմբին համապատասխան օգնություն և աջակցություն ցույց տալու համար:

Սեպտեմբերին ձևավորվում է բարբառագիտության բաժինը:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 5, գ. 100, թ. 25)

Ա. Սուքիասյանը գործուղվում է Լենինգրադ և մասնակցում բառարանագրական խորհրդի կոորդինացիոն նիստին (կրտսեր գիտաշխատող, բ.գ.թ. Ա. Սուքիասյանի հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 5, գ. 100)

1959

Ս.Գալստյանը և Հր. Պետրոսյանը մայիսի 25-29-ը մասնակցում են ԽՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի անցկացրած տերմինաբանական խորհրդակցությանը, որի լիագումար նիստում կարդացվում է Ա.Ղարիբյանի ելույթը, իսկ լեզվաբանական տերմինաբանության բաժնում ելույթ է ունենում Ս.Գալստյանը ԳԱ լեզվի ինստիտուտում կազմվող «Լեզվաբանական բառարան»-ի մասին: Ելույթները տպա-

գրվում են (Հիմք՝ Вопросы терминологии, М., 1961, ст. 109-110, 175-176):

1960

Ինստիտուտն ունի 4 բաժին՝ ժամանակակից հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության և բարբառագիտության, բառարանագրության, հայոց լեզվի քարտարանի:

Ըստ բառարանագրության բաժնի հաշվետվության՝ ավարտվում են Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանի» և Հ. Պետրոսյանի, Ս. Գալստյանի և Թ. Ղարազյուլյանի «Լեզվաբանական տերմինների բառարանի» կազմման աշխատանքները:

Գ. Գասպարյանը և Ս. Ա. Գալստյանը սեպտեմբեր ամսին 10 օրով գործուղվում են Ֆրունզե՝ բացատրական բառարանների վերաբերյալ համամիութենական կոորդինացիոն խորհրդակցությանը մասնակցելու համար:

1961

Ժամանակակից հայոց լեզվի բաժնին կից 1961 թ. սկզբին ստեղծվում է փորձառական հնչյունաբանության կաբինետ (Վ. Հայրապետյանի՝ 1961 թ. առաջին կիսամյակի հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 5, գ. 146)

Գուրգեն Սևակը արժանանում է ՀՍՍՀ, իսկ 1970 թ.՝ Վրաց. ՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

1962

Ինստիտուտն ունի 3 բաժին՝

1. ժամանակակից հայոց լեզվի՝ փորձառական հնչյունաբանության կաբինետով,
2. հայոց լեզվի պատմության ու բարբառագիտության,
3. բառարանագրության:

Այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ մարտի 6-ից տնօրենի պարտականություններից ազատվում է ակադեմիկոս Ա.Ս. Ղարիբյանը, և ինստիտուտի նոր տնօրեն է նշանակվում պրոֆեսոր Գ.Բ. Ջահուկյանը:

Հունիս-հուլիս ամիսներին գիտությունների ակադեմիայի նախագահության բյուրոյի որոշմամբ լեզվի ինստիտուտ է տեղափոխվում ակադեմիայի լեզուների ամբիոնը՝ 6 աշխատակիցներով:

Մեպտեմբերի 1. Ինստիտուտի առջև ծառացած կարևորագույն խնդիրների մշակմանը նպաստելու, ինստիտուտը բարձրորակ կադրերով ապահովելու նպատակով նախագահության բյուրոյի որոշմամբ համատեղությամբ (կեսական հաստիքով) աշխատանքի են ընդունվում ՀՍՍՌ ԳԱ թղթակից - անդամներ Գ. Սևակը և Է. Բ. Աղայանը:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 86)

1963

Սկիզբ է դրվում քարտարանի համաբարբառից ընտրովի քարտարան ստեղծելու կարևորագույն գործին:

Համալրվում է ընդհանուր լեզվաբանության բաժինը, որի կազմի մեջ է մտնում նաև փորձառական հնչյունաբանության կաբինետը:

Պրոֆ. Գուրգեն Սևակը խմբագրում և հրատարակության է հանձնում ավագ գիտաշխատակից Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանը»:

Ավարտված և հիմնականում խմբագրված է Հ. Պետրոսյանի, Ս. Գալստյանի և Թ. Ղարազյուլյանի «Լեզվաբանական բառարանը»:

Ինստիտուտը ունի չորս բաժին. 1) ժամանակակից հայոց լեզվի, 2) բառարանագրության, 3) հայոց լեզվի պատմության և 4) ընդհանուր լեզվաբանության:

Բառարանագրության բաժինը մշտապես օգնում է բառարանների հեղինակներին: Մասնագիտական խորհրդա-

սովորյուն են ստանում կենդանաբանական, իրավաբանական, բուսաբանական, աշխարհագրական և այլ բառարանների հեղինակները: Ինստիտուտի աշխատակիցները օգնում են ստուգելու և բարելավելու հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում և միջնակարգ դպրոցներում հայոց լեզվի և ընդհանրապես լեզուների դրվածքը: Միջնակարգ դպրոցների հայոց լեզվի դասագրքի հեղինակն է ինստիտուտի աշխատակից դոցենտ Ահարոն Գրիգորյանը:

Լեզվի ինստիտուտը Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հետ մայիսին կազմակերպում է ականավոր լեզվաբան, ակադ. Հրաչյա Աճառյանի հիշատակին նվիրված երկօրյա գիտական նստաշրջան. կարդացվում է 9 զեկուցում:

Բելոռուսական ՍՍՌ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտական աշխատակից բ.գ.թ. Ա. Ա. Բերժբովսկին գործուղվում է լեզվի ինստիտուտ իր կազմած ստուգաբանական բառարանի վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն ստանալու համար:

Փորձի փոխանակման և աշխատանքների կոորդինացման նպատակով լեզվի ինստիտուտ է գործուղվում Մոսկվայում կազմվող «Լեզվաբանական տերմինների բառարանի» խմբագիրներից մեկը՝ Տ. Ա. Գանիսև: Նա ծանոթանում է ինստիտուտի «Լեզվաբանական տերմինների բառարանի» սկզբունքներին, հեղինակների աշխատանքի մեթոդին և համապատասխան խորհրդատվություն ստանում:

Դասախոսություններով ինստիտուտում հանդես է գալիս ՍՍՌՍ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի կառուցվածքային լեզվաբանության ամբիոնի վարիչ դոկտոր, պրոֆեսոր Ս. Շահումյանը:

Աշնանը լեզվի ինստիտուտում դասախոսություններ են կարդում նշանավոր հայագետ, Փարիզի Արևելյան կենդանի լեզուների վարժարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ

պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին՝ «Հայագիտության արդի վիճակը Արևմուտքում» թեմայով, և ԱՄՆ Տեխասի համալսարանի պրոֆեսոր Վ. Վինտերը՝ «Հայոց լեզվի համեմատական հրնչունաբանության և ձևաբանության մի քանի հարցեր», «Ընդհանուր լեզվաբանության և հայագիտության վիճակը ԱՄՆում» թեմաներով: Պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին և պրոֆ. Վ. Վինտերը ծանոթանում են լեզվի ինստիտուտի աշխատանքներին:

Լեզվի ինստիտուտի աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են ՍՍՌՄ տարբեր գիտական կենտրոններում կազմակերպված զանազան նստաշրջանների, խորհրդակցությունների և գիտաժողովների: «Ազգային լեզուների զարգացման օրինաչափությունները՝ կապված սոցիալիստական ազգերի զարգացման հետ» համալիր խնդիրներին վերաբերող խորհրդակցության՝ Մոսկվայում և Կիևում կայացած նիստերին ելույթներ են ունեցել պրոֆեսորներ Գ. Զահուկյանը և Գ.Սևակը: Ինստիտուտին կցված օտար լեզուների ամբիոնի դասախոսները մասնակցում են ԳԱ համապատասխան ամբիոնների աշխատանքների կոորդինացման նպատակով հրավիրված նստաշրջանին և ելույթներ ունենում (լեզվի ինստիտուտի 1963թ. գիտահետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 87)

1964

Հունվար. Կազմակերպվում է գիտական բանավեճ «Սինխրոնիկ և դիախրոնիկ մեթոդների փոխհարաբերությունը հայոց լեզվի նկարագրական ուսումնասիրության մեջ» թեմայով. հիմնական զեկուցումով հանդես է գալիս պրոֆ. Է. Բ. Աղայանը:

Մարտ. Անցկացվում է երկօրյա հաշվետու գիտական նստաշրջան, որի ընթացքում ինստիտուտի 9 աշխատակիցներ

հանդես են գալիս իրենց գիտահետազոտական թեմաների վերաբերյալ զեկուցումներով:

Ինստիտուտը հատուկ ուշադրություն է դարձնում աշխատակիցների գիտական որակավորման բարձրացմանը՝ կազմակերպելով սեմինարներ: Բացի ինստիտուտի աշխատակիցներից՝ զեկուցումներ են կարդում և այլ մասնագետներ, այսպես՝ ՍՍՌՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Ռ. Լուրիան զեկուցում է «Իմաստային կապերի օբյեկտիվ ուսումնասիրությունը» թեմայով:

Գ.Ջահուկյանը մասնակցում է հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության հարցերին նվիրված գիտական նստաշրջանին:

1964թ. ինստիտուտն ունի 12 ասպիրանտ (2-ը՝ արտադրությունից չկտրված):

Միջազգային գիտական կապեր

Լեզվի ինստիտուտում հյուրընկալվում է Չեխոսլովակիայի Դեմոկրատական Հանրապետության ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատակից Լ. Մոտալովան, որը տնօրենությանն է ներկայացնում Ա. Բսահակյանի «Արու Լալա-Մահարի» պոեմի բառապաշարի հաճախականության բառարանը:

Մեկ շաբաթով ինստիտուտի հյուրն է հունգարացի լեզվաբան, Բուդապեշտի լեզվաբանական ինստիտուտի գիտաշխատակից Շանդոր Կարոյը, որը նախապես ծանոթացել էր նաև Մոսկվայի, Կիևի, Լենինգրադի, Տալլինի լեզվաբանական կենտրոնների աշխատանքներին:

Հայագիտության տարբեր հարցերով հաճախակի լեզվի ինստիտուտի օգնությանն են դիմում արտասահմանյան տարբեր երկրների գիտնականներ, որոնց հետ գիտա-

կան կապեր են պահպանում Գ. Ջահուկյանը, Գ. Սևակը և Է. Ադայանը:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 88)

Ե. Տեր-Մինասյանը արժանանում է ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

ՀՍՍՌ ԳԱ նախագահության մարտի որոշմամբ՝ «Հայոց լեզվի հանգաբառարան» թեման հաշվողական կենտրոնից տեղափոխվում է լեզվի ինստիտուտ (Ս.Բաղդասարյանի հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 177, թ. 34)

1965

Տեղի է ունենում հաշվետու գիտական նստաշրջան: Ըստ գիտական խորհրդի նիստերի արձանագրությունների՝ նըստաշրջանի թեմաներն են.

1. Հայերենի հնդեվրոպական կողմնակի բառաշերտի առանձնացման հարցի շուրջը:
2. Բառակապակցության ակտիվացող ձևերը հայոց լեզվի զարգացման սովետական շրջանում:
3. Միջին հայերենի հնչյունական համակարգը:
4. Միջին հայերենի խոնարհման համակարգը:

Բարբառագիտական ասլախի նյութեր հավաքելու նպատակով Թ. Դանիելյանը մեկ ամսով գործուղվում է Իջևան, Ալ. Փաշայանը և Ն. Մկրտչյանը՝ Կիրովական, Ա. Գրիգորյանը և Հ. Կոստանյանը՝ Աշտարակ-Ապարան:

Դեկտեմբերի 8. Պրոֆ. Գ. Սևակը գիտխորհրդին հաղորդում է Մոսկվայում կայացած «Ազգային լեզուների զարգացման օրինաչափությունները՝ կապված սոցիալիստական ազգերի զարգացման հետ» համալիր խնդիրներին վերաբերող խորհրդակցության արդյունքների մասին:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 37)

Հայոց լեզվի բաժնի վարիչ Ս. Աբրահամյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն (թեման՝ «Զթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում»):

Ինստիտուտը հատուկ ուշադրություն է դարձնում աշխատակիցների գիտական որակավորումը բարձրացնելուն. կազմակերպվում են սեմինարներ, բանավեճեր: Զեկուցումներով հանդես են գալիս նաև այլ ինստիտուտներից կամ քաղաքներից հրավիրված մասնագետներ: «Ժամանակակից լեզվաբանության կարևորագույն խնդիրները» թեմայով զեկուցում է կարդում ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատակից բ.գ.դ. Է. Ա. Մակաևը:

Նոյեմբերի 3-22. Ինստիտուտում անցկացվում է արդի հայերենի հոլովական համակարգին նվիրված բանավեճ, որը հանրապետության գիտական հասարակայնության շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացնում: Բանավեճը շարունակվում է 20 օր: Հանդես են գալիս լեզվաբաններ, դասախոսներ, ուսուցիչներ, լեզվի ինստիտուտի աշխատակիցներ:

Լեզվաբանական նորագույն գրականությանը ծանոթանալու և մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով ինստիտուտի տասնմեկ աշխատակիցներ 1966թ. ընթացքում գործուղվում են Մովեստական Միության գիտական խոշոր կենտրոններ:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 93)

Ինստիտուտի կառուցվածքը չի փոփոխվում: Ինստիտուտն ունի 4 բաժին (ժամանակակից հայոց լեզվի, բառաբանագրության, հայոց լեզվի պատմության, ընդհանուր լեզվաբանության) և մեկ ամբիոն (օտար լեզուների):

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 1967թ. ինստիտուտի գիտական անձնակազմը ջանքեր է գործադրում, որ ինստիտուտը դառնա լեզվաբանական հետազոտությունների կենտրոն: Պարբերաբար գործնական օգնություն է ցույց տրվում հանրապետության տարբեր հիմնարկների, նաև առանձին հեղինակների՝ ուղղագրության, ուղղախոսության և խոսքի մշակույթի հարցերում: Տարբեր թեմաներով զեկուցումներ են կարդում Է. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Հ. Կոստանյանը, Գ. Վահանյանը: Հատկապես պետք է նշել կազմախոսական տերմինների և դասագրքերի լեզվի վերաբերյալ մամուլում ծավալված բանավեճի նյութերի հանգամանալից քննարկումը, որի մասին հաղորդում տպագրեց «Գրական թերթը»:

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության մի շարք հարցերի և սկզբունքների մասին դասախոսություններ է կարդում ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատակից Բ.Գ.Դ., պրոֆ. Է. Ա. Մակյանը:

Լեզվաբանական նորագույն գրականությանը ծանոթանալու և մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով ինստիտուտի 15 աշխատակիցներ և 2 ասպիրանտ գործուղվում են Սովետական Միության գիտական խոշոր կենտրոններ:

Ինստիտուտում պարբերաբար անցկացվում է մասնագիտական սեմինարների շարք՝ գիտաշխատակիցների գործուն մասնակցությամբ:

Ինստիտուտում կազմակերպվում է գիտական նստաշրջան՝ նվիրված Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին: ՍՍՀՄ ԳԱ և ՀՍՍՀ ԳԱ օտար լեզուների ամբիոնների՝ Երևանում կազմակերպած գիտամեթոդական 15-րդ հոբելյանական նստաշրջանի աշխատանքներին զեկուցումներով մասնակցում են նաև Է. Աղայանը և Գ. Ջահուկյանը:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 92)

Բնաստիտուտի կառուցվածքը չի փոփոխվում. հոկտեմբերի 8-ից ձևավորվում է տերմինաբանության բաժինը (բաժնի վարիչ՝ պրոֆ. Գ. Սևակ):

Բնաստիտուտն ունի հինգ բաժին և մեկ ամբիոն՝

1. Ժամանակակից հայոց լեզվի,
2. հայոց լեզվի պատմության և բարբառագիտության,
3. ընդհանուր լեզվաբանության (փորձառական հրնչյունաբանության խմբով),
4. բառարանագրության (գավառական բառարանի խմբով),
5. տերմինաբանության (քարտարանի խմբով),
6. օտար լեզուների ամբիոն:

Բնաստիտուտի հինգ բաժիններում աշխատում են 46 գիտաշխատակիցներ. վեցը գիտությունների դոկտոր են, քսանմեկը՝ թեկնածու: Բնաստիտուտն ունի 15 ասպիրանտ:

Կազմակերպվում է գիտական հաշվետու նստաշրջան՝ նվիրված ակադեմիկոս Գ. Ղափանցյանի ծննդյան 80-ամյակին:

Դեկտեմբերի 12-21. Հանրապետության լեզվաբանական կյանքում կարևոր իրադարձություն էր ժամանակակից գրական արևելահայերենի խոնարհման համակարգի մի շարք վիճելի հարցերի նվիրված բանավեճը: Այն մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես մասնագետների, այնպես էլ ուսուցչության շրջանում:

Ըստ Հունգարիայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների գիտական համագործակցության պայմանագրի՝ Հունգարիայի ԳԱ լեզվի ինստիտուտի ներկայացուցիչները լինում են Հայաստանում: Նախնական համաձայնություն է ձեռք բերվում երկու ակադեմիաների լեզվի ինստիտուտների հետագա համատեղ աշխատանքի վերաբերյալ:

Գ. Ջահուկյանը Բոալիայում հրատարակում է երկու գիտական հոդված (գերմաներեն և հայերեն):

1968թ. Գ. Բ. Ջահուկյանը ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1974թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս:
(ՀԱՍ, ֆ. 1085, ց. 7, գ. 8)

1969

Ինստիտուտը շարունակում է հատուկ ուշադրություն դարձնել աշխատակիցների գիտական որակավորումը բարձրացնելուն. պարբերաբար կազմակերպվում են սեմինարներ, բաժիններում լսվում են զեկուցումներ: Ինստիտուտի աշխատակիցների և հանրապետության բուհերի մասնագետների համար զեկուցումներ են կարդացել պրոֆ. Ուիլյամ Թաունսդը և Էթել Ուոլեսը՝ «Ամազոնի բնիկների լեզուների ուսումնասիրությունը» (Մեքսիկա), դոկտոր Պ. Յունգմանը՝ «Հայագիտությունը Արևմտյան Գերմանիայում» (ԳՖՀ), ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի տնօրեն պրոֆ. Վ. Ն. Յարցևան՝ «Ժամանակակից սոցիոլոգիական լեզվաբանության պրոբլեմները» և «Շարահյուսական կառուցվածքների տարողության չափը» թեմաներով:

Կազմակերպվում է հաշվետու գիտական նստաշրջան, որին զեկուցումներով մասնակցում են Գ. Ջահուկյանը, Թ. Ղարաբյուլյանը, Ն. Պառնապյանը, Ս. Անթոսյանը, Լ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ:

Լեզվաբանական նորագույն գրականությանը ծանոթանալու և մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով 18 աշխատակիցներ և ասպիրանտներ գործուղվում են Սովետական Միության գիտական խոշոր կենտրոններ ու գրադարաններ: Գործուղման արդյունքների մասին բաժիններում լսվում են հաշվետվություններ: Գործառական հնչյունաբանության խմբի անդամները մասնակցում են ՍՍՀՄ բարձրագույն կրթության նախարարությանն առընթեր, լեզվաբանական հանձնաժողովի հնչյունաբանության բաժնի Մոսկվայում տեղի ունեցած նիստի աշխատանքներին: Թբի-

լիսիում գումարված համամիութենական բարբառագիտական խորհրդակցությունում լեզվաբանական նորագույն մեթոդներով հայ բարբառների ուսումնասիրությանը նվիրված իր նոր աշխատանքի մի քանի արդյունքների մասին զեկուցումով հանդես է գալիս պրոֆ. Գ. Զահուկյանը:

Կադրերի պատրաստման բավական արդյունավետ միջոց է հայցորդների հետ տարվող աշխատանքը: Ինստիտուտն ունի հայցորդներ՝ ժամանակակից հայոց լեզու, բարբառագիտություն, բառարանագրություն և տերմինաբանություն մասնագիտություններով: Գիտական խորհուրդը ժամանակին հաստատել է նրանց աշխատանքի անհատական պլանները, ատենախոսական աշխատանքի թեման և նշանակել խորհրդատու:

1969թ. ինստիտուտն ունեցել է (արտադրությունից կտրված) ասպիրանտուրայի ընդունելություն՝ հետևյալ մասնագիտություններով՝ դասական լեզվաբանություն (2 տեղ՝ սանսկրիտ և լատիներեն), կիրառական լեզվաբանություն (2 տեղ), տերմինաբանություն (1 տեղ), ուգրո-ֆիննական (1 տեղ՝ հունգարերեն) և հարավկովկասյան լեզուներ (1 տեղ): Ինստիտուտը 1969թ. ունի 19 ասպիրանտ:

1969թ. ընթացքում հայոց լեզվի կաբինետի ֆոնդը հարստանում է շուրջ 100 անուն մասնագիտական նոր գրականությամբ: Կաբինետն ստանում է մոտ երեք տասնյակ հայրենական և արտասահմանյան մասնագիտական ամսագրեր ու հանդեսներ:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց.6, գ. 95)

1970

Գ. Բ. Զահուկյանը պարզեցնելով է «Աշխատանքային արիության համար» մեղալով և Մխիթարյան միաբանության հոբեյանական արծաթե մեդալով:

Է. Բ. Աղայանին շնորհվում է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

«Լրաբեր»-ի էջերում բանավեճ է ծավալվում է՝ նվիրված տերմինաբանության հարցերի քննարկմանը, որը տևում է մի քանի տարի: Բանավեճին մասնակցում են նաև ինստիտուտի աշխատակիցներից շատերը՝ Է. Աղայան, Ա. Աբրահամյան, Ս. Աբրահամյան, Ս. Ասլանյան և այլք: Խմբագրության խնդրանքով Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի տերմինաբանության զարգացման հարցերի քննարկումը» հոդվածում ամփոփում է «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969 թ. N7, 1970 թ. N12, 1971 թ. N1,2,6,7,8-ում տպագրված հոդվածներում արծարծված հարցերի քննարկումը:

1971

ՀՍՍՀ Պետական մրցանակի է արժանանում «Ռուս-հայերեն բառարանը» (Ե., 1968), որը պարունակում է մոտ 85000 բառահոդված:

Ս. Ասլանյանը Մոսկվայում դեկտեմբերին կայացած համամիութենական տերմինաբանական գիտաժողովում զեկուցում է «Հայ ռազմական տերմինների կառուցվածքային տիպերը» թեմայով, որը տպագրվում է:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 102, թ. 2)

Դ. Կոստանդյանը գիտարշավի է մեկնում Գազրա և Բաթումի քաղաքներ, որտեղ հանդիպում է բարբառախոս երգչակազմների հետ, ստուգում է նյութերը, գրի է առնում տեքստեր, ընդարձակում է բարբառի բառացանկը:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 6, գ. 102, թ. 11)

1972

Ինստիտուտն ունի 8 բաժին. ժամանակակից հայոց լեզվի, լեզվի պատմության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, բարբառագիտության, խոսքի մշակույթի և տերմինաբանության, բառարանագրության և բառագիտության, կիրառական լեզվաբանության, կառուցվածքային ու մաթեմատիկական լեզվաբանության, 1 լաբորատորիա (ին-

ֆորմացիոն հաշվողական և փորձարարական) ու 1 ամբիոն (օտար լեզուների): Ինստիտուտը համալրվում է ԳԱ հաշվողական կենտրոնի մի շարք աշխատակիցներով: Ինստիտուտում աշխատում է 111 մարդ, որոնցից գիտական աշխատողներ՝ 60, գիտասպասարկու անձնակազմ՝ 23 և տեխնիկական ու օժանդակ անձնակազմ՝ 28 հոգի:

Ինստիտուտի գիտնականները զեկուցումներով ու դասախոսություններով հանդես են գալիս հանրապետության տարբեր կազմակերպություններում: Ինստիտուտը արտագնա գիտական նստաշրջաններ է կազմակերպում Կամոյի և Ստեփանավանի շրջաններում՝ նվիրված ՄՍՀՄ կազմավորման 50-ամյակին:

Ինստիտուտի աշխատակիցները բազմաթիվ հոդվածներ են հրատարակում հանրապետական մամուլում և պարբերականներում:

Հանրապետական մամուլը և ռադիոն լայնորեն լուսաբանում են ՄՍՀՄ կազմավորման 50-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը «Սովետական լեզվաբանության անցած ուղին և զարգացման հեռանկարները» ընդհանուր խնդրի շուրջը:

Ն.Պառնասյանը պաշտպանում է դոկտորական ատենախոսություն «Քերականական հոմանիշները ժամանակակից հայերենում»:

1973

Ինստիտուտում աշխատում է 114 մարդ, որոնցից գիտաշխատողներ՝ 59:

Լեզվաբանական տարբեր մասնագիտությունների գծով ինստիտուտն ունի 19 ասպիրանտ: Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ զեկուցումներով հանդես են գալիս միջազգային և համամիութենական զանազան նստաշրջաններում: Վ. Գրիգորյանը զեկուցում է կարդում Վարշավայի Սլավոնագիտական յոթերորդ համագումարում: Օտար

լեզուների ամբիոնի դասախոսները ակտիվորեն մասնակցում են օտար լեզուների դասավանդման ուսումնամեթոդական համամիութենական խորհրդակցությանը:

Հոկտեմբեր. Հանրապետության գիտական կյանքում կարևոր իրադարձություն է Երևանում հրավիրված համամիութենական խորհրդակցությունը՝ նվիրված բարբառագիտության և լեզվի պատմության ընդհանուր հարցերի: Խորհրդակցությանը մասնակցում են ճանաչված շատ լեզվաբաններ Սովետական Միության տարբեր քաղաքներից: Լսվում են շուրջ 70 զեկուցում և հաղորդում, որոնք վերաբերում են բարբառագիտության և լեզվի պատմության հրատապ հարցերի: Խորհրդակցության աշխատանքներին ակտիվորեն մասնակցում են նաև լեզվի ինստիտուտի գիտաշխատողները:

Լեզվի ինստիտուտի գիտական գործունեության հետագա ծավալմանը և սոցիալիստական պարտավորությունները հաջող կատարելուն մեծապես նպաստում են նաև լեզվաբանական այլ կենտրոնների հետ գիտական սերտ համագործակցության ուղղությամբ արվող քայլերը: Համագործակցության պայմանագրեր են կնքվում Վրաստանի և Ադրբեջանի գիտությունների ակադեմիաների լեզվաբանության ինստիտուտների հետ. համատեղ մշակվում են կարևոր նշանակություն ունեցող թեմաներ, հրավիրվում են գիտական նստաշրջաններ և այլն: Լեզվի ինստիտուտի 1974 թ. գիտահետազոտական աշխատանքների ծրագրում արձանագրվում է ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի հետ համատեղ կատարվող «Հայերենի վանկային շեշտը» թեման:

Ինստիտուտի միջազգային գիտական կապերը

Ինստիտուտը գիտական կապեր ունի արտասահմանյան առանձին կենտրոնների, պարբերականների և գիտնականների հետ: Ինստիտուտը հյուրընկալում է արտասահմանյան մի շարք գիտնականների (ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Հունգարիայից և այլն), տրվում են գրավոր և բանավոր խոր-

հըրդատվություններ: Ինստիտուտի գիտաշխատակից Ամ. Խաչատրյանը մեկնում է Հունգարիա գիտական գործուղման: Վ. Գրիգորյանը հողված է ներկայացնում Չեխոսլովակիայի լեզվաբանական հանդեսներից մեկին և այլն: Ինստիտուտի հայոց լեզվի կաբինետն ունի նաև փոխանակման ֆոնդ:

Ինստիտուտից անկախ պատճառներով որոշ գործերի հրատարակումը տարիներ շարունակ ձգձգվում և հրատարակչական մի պլանից մյուսն է անցնում:

1. Ինստիտուտի գիտահետազոտական պլանային որոշ թեմաների կատարմանը նկատելիորեն խանգարում է ժամանակակից տեխնիկական սարքերի բացակայությունը: Դրանք հայթայթելը պայմանավորվում է մի շարք դժվարություններով:

2. Ինստիտուտի գիտական գործունեության արդյունավետության վրա բացասաբար է ազդում նաև այն, որ ավարտված թեմաների հրատարակումը երբեմն տարիներ շարունակ ձգձգվում է: Հատկապես խանգարում է ակադեմիայի հրատարակչության ռոտապրինտային բազայի ոչ բավարար կազմակերպվածությունը:

3. Ինստիտուտի տնօրենությունը հաճախ հաղթահարում է արհեստական մի շարք խոչընդոտներ ասպիրանտուրան հաջող ավարտողներին ժամանակին աշխատանքի տեղավորելիս:

(ՀԱՄ, ֆ. 1085, ց. 6, գ. 103)

1974

Ինստիտուտն ունի 8 բաժին, 116 աշխատակից, որոնցից գիտաշխատողներ են 60-ը: Ասպիրանտուրայում ուսանում են 10 ասպիրանտներ:

Հոկտեմբերի 2-4. Կազմակերպվում է Հայաստանի երիտասարդ լեզվաբանների հանրապետական առաջին գիտաժողո-

վը, որին մասնակցում են ինստիտուտի երիտասարդ ինը գիտաշխատակից:

Լայնորեն քննարկվում են «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» լույս տեսած հատորները. հրապարակային քննարկմանը մասնակցում են նաև հանրապետության բուհերի ներկայացուցիչներ:

Ինստիտուտի գիտաշխատողները տարբեր կազմակերպություններում հանդես են գալիս զեկուցումներով ու դասախոսություններով: Հեռուստատեսությամբ պարբերաբար տրվում են խոսքի մշակույթին նվիրված հաղորդումներ, որոնց մասնակցում են ինստիտուտի գիտաշխատակիցներ Գ. Ջահուկյանը, Վ. Քոսյանը, Ս. Աբրահամյանը, Ն. Պառնասյանը, Թ. Ղարազյուկյանը և ուրիշներ: Հանրապետական մամուլում և գիտական հանդեսներում հոդվածներով և հաղորդումներով հանդես են գալիս ինստիտուտի աշխատակիցներ Վ. Քոսյանը, Է. Աղայանը, Հ. Մուրադյանը, Ս. Անթոսյանը, Ա. Խաչատրյանը, Ռ. Թոխմախյանը, Լ. Հովսեփյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ:

Ինստիտուտի մի շարք գիտաշխատողներ մասնակցում են համամիութենական գիտական նստաշրջանների: Գ. Բ. Ջահուկյանը զեկուցումով մասնակցում է Մոսկվայում կայացած լեզվաբանության տեսական հարցերին նվիրված համամիութենական գիտաժողովին, կիրառական լեզվաբանության բաժնի աշխատակիցներ Ա. Խաչատրյանը և Ա. Գրիգորյանը՝ խոսքի փորձառական ուսումնասիրության մեթոդներին նվիրված խորհրդակցությանը Մինսկում:

Գ. Ջահուկյանը ընտրվում է Եվրոպայի լեզվաբանական ընկերության անդամ:

1975

Ինստիտուտի կառուցվածքը չի փոփոխվում: Ինստիտուտն ունի 8 բաժին: 126 աշխատակիցներից 68-ը գիտաշխատողներ են, 12-ը՝ ամբիոնի դասախոսներ:

Ասպիրանտուրայում ուսանում է 8 ասպիրանտ՝ լեզվաբանական տարբեր մասնագիտություններով՝ հանրալեզվաբանություն, հոգելեզվաբանություն, բարբառագիտություն, տերմինաբանություն, սանսկրիտ և այլն:

Հոկտեմբերի 12-14. Լայնորեն քննարկվում է «Հայերենի գավառական բառարանի» փորձական պրակը. հրապարակային քննարկմանը մասնակցում են ոչ միայն մասնագետ-բարբառագետներ, այլև հանրապետության բուհերի դասախոսներ, հրատարակչությունների աշխատակիցներ և այլք: Ելույթ է ունենում 28 հոգի, որոնք նշում են բառարանի կարևորությունն ու հրատապությունը հայ լեզվաբանության ու մշակույթի համար: Ինչպես նաև արվում են մի շարք արժեքավոր առաջարկություններ:

Ստանձնած սոցիալիստական պարտավորությունների համաձայն՝ ինստիտուտի տնօրեն Գ. Բ. Ջահուկյանը և փոխտնօրեն Վ. Ա. Քոսյանը զեկուցումներով հանդես են գալիս հանրապետության տարբեր շրջաններում և քաղաքներում:

Ինստիտուտի գիտաշխատակիցներից շատերը մասնակցում են համամիութենական գիտաժողովների և խորհրդակցությունների: 7 աշխատակիցներ (Գ. Բ. Ջահուկյան, Հ. Դ. Մուրադյան, Լ. Ս. Հովսեփյան, Մ. Ա. Աղաբեկյան, Ս. Վ. Գրիգորյան, Ա. Ն. Հանեյան, Դ. Մ. Կոստանդյան) մասնակցում են բարբառագիտության և լեզվի պատմության ընդհանուր հարցերին նվիրված Բաքվի համամիութենական խորհրդակցությանը: Ասպիրանտներ Ա. Մարկոսյանը և Ա. Գալլստյանը մասնակցում են հոգելեզվաբանության հիմնահարցերին նվիրված լենինգրադյան գիտաժողովին, ինստիտուտի կրտսեր գիտաշխատակից Հ. Մադոյանը գործուղվում է Տաշքենդ մասնակցելու ռուսաց լեզվի դասավանդման կատարելագործման համամիութենական գիտաժողովին: Ծ. Հարությունյանը զեկուցում է կարդում երիտասարդ լեզվաբանների լենինգրադյան գիտաժողովում:

Բնաստիտուտի ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիայի վարիչ Ռ. Լ. Ուոուտյանը զեկուցումով մասնակցում է Վառնայում (Բուլղարիա)՝ լեզվաբանության մեջ մաթեմատիկական մոդելների և էլեկտրոնային մեքենաների կիրառմանը նվիրված I ազգային գիտաժողովին:

Շարունակվում են աշխատանքները նաև գիտահետազոտական թեմաները կոորդինացնելու ուղղությամբ: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի և լեզվի ինստիտուտի աշխատակիցների համագործակցությամբ ավարտվում է «Հայերենի ձայնաբանական հատկանիշների քննությունը ԷՀՄ-ի միջոցով» թեման, լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը և Մոսկվայի լեզվաբանության ինստիտուտը մշակում են համատեղ թեմա՝ «Հայերենի շեշտաբանությունը», ինստիտուտի տնօրեն Գ. Բ. Ջահուկյանը ներկայացնում է հայ լեզվաբանության պատմությանը նվիրված բաժինը՝ Մոսկվայում հրատարակվելիք «Լեզվաբանության պատմություն» կոլեկտիվ աշխատության համար:

(ՀԱՄ, ֆ. 1085, ց. 6, գ. 106)

1976

Լեզվի ինստիտուտն ունի 8 բաժին՝ ժամանակակից հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, բառագիտության և բառարանագրության, բարբառագիտության, խոսքի մշակույթի և տերմինաբանության, կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության, կիրառական լեզվաբանության: Ինստիտուտի կազմում գործում են նաև ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիան, օտար լեզուների ամբիոնը, ինչպես նաև գիտական կաբինետը և քարտաքանը: Ինստիտուտում աշխատում է 132 հոգի, որոնցից 72-ը գիտաշխատող են, 11-ը՝ ամբիոնի դասախոս:

Ինստիտուտն ունի 6 ասպիրանտ (արտադրությունից կտրված) հետևյալ մասնագիտություններով՝ հանրալեզվաբանություն, հոգելեզվաբանություն, սանսկրիտ, կովկասյան լեզուներ:

Ասպրի. Ինստիտուտի տնօրենության և գիտական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվում է գիտական նստաշրջան՝ նվիրված Հ. Աճառյանի ծննդյան 100-ամյակին: Զեկուցումները վերաբերում էին ինչպես Հ. Աճառյանի գիտական գործունեությանն ու գնահատմանը, այնպես էլ լեզվաբանական զանազան հարցերի: Լեզվի ինստիտուտի աշխատակիցները զեկուցումներ են կարդում նաև Հ. Աճառյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Երևանում և Կիրովականում կազմակերպված հանդիսավոր նիստերին:

Ինստիտուտի տնօրեն ակադ. Գ. Զահուկյանի ղեկավարությամբ պարբերաբար անցկացվում են մասնագիտական սեմինար պարապմունքներ:

1975 թ. սկսած՝ ակադ. Գ. Սևակի ղեկավարությամբ՝ ինստիտուտում հասարակական կարգով գործում է միջլեզվաբանության (ինտերլինգվիստիկա) խումբը:

Մի շարք աշխատակիցներ մասնակցում են համամիութենական գիտական հավաքների: Կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը ելույթ է ունենում ՄՍՀՄ ԳԱ նախագահության նիստին «Ռուսաց լեզվի դասավանդման վիճակը ազգային դպրոցում» հարցի մասին: Ընդհանուր լեզվաբանության բաժնի ասպիրանտ Ա. Մելքոնյանը զեկուցում է կարդում Նալչիկում կայացած՝ երկլեզվության հարցերին նվիրված խորհրդակցության ժամանակ: ՄՍՀՄ ԳԱ օտար լեզուների ամբիոնների՝ Լենինգրադում կայացած խորհրդակցությանը մասնակցում են լեզվի ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի 4 դասախոսներ. Է. Դելայանը կարդում է «Օտար լեզուների բանավոր խոսքի զարգացումը ունկնդրման միջոցով» զեկուցումը: Կիրառական լեզվաբանության բաժնի

աշխատակիցներ Ա. Գրիգորյանը և Հ. Զաքարյանը զեկուցումներ են կարդում Մինսկում կայացած՝ լսողական պատկերների ավտոմատ ճանաչմանը նվիրված սեմինարին:

Գիտատեղեկատվական և գործնական աշխատանքներ

Հեռուստատեսությամբ կազմակերպվում է գիտատեխնիկական տերմինաբանական հարցերի նվիրված հաղորդաշար, որը վարում է տերմինաբանության և խոսքի մշակույթի բաժնի վարիչ ակադ. Գ. Սևակը: Ինստիտուտի աշխատակիցներ Հ. Կոստանյանը, Հ. Օհանյանը, Ս. Անթոսյանը, Գ. Վահանյանը և այլք բազմաթիվ զեկուցումներ են կարդում Հայաստանի տարբեր շրջաններում:

Ինստիտուտի աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են ՀՍՍՀ մինիստրների սովետին առընթեր տերմինաբանական կոմիտեի և մասնաճյուղային տերմինաբանական հանձնաժողովների աշխատանքներին, մշակում և ներկայացնում են ինչպես տերմինաբանությանը, այնպես էլ ուղղագրությանը և ուղղախոսությանը վերաբերող որոշումների նախագծեր:

Ժամանակակից հայոց լեզվի և տերմինաբանության բաժինները պարբերաբար հետևում են հանրապետական մամուլի լեզվին, մասնակցում են խմբագրություններում կազմակերպված քննարկումներին, անցկացնում անհրաժեշտ խորհրդատվություններ:

Շարունակվում է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի համագործակցությունը «Կախումների քերականության կիրառումը բնական լեզվի պարզ նախադասության ուսումնասիրության մեջ» թեմայի համատեղ մշակման ուղղությամբ: Այդ համագործակցության շրջանակներում ինստիտուտի կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժինն ընդունում է ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի տեքստերի ավտոմատացված

մշակման բաժնի վարիչ Յուրգեն Կունցեին: Նրա մասնակցությամբ կազմակերպված սեմինարների և քննարկումների ընթացքում քննվում են 1974-75 թթ. կատարված աշխատանքները, ի մի են բերվում գերմաներենի և հայերենի պարզ նախադասության անդամների միջև կախումների ուսումնասիրության արդյունքները, ինչպես նաև այդ կառուցվածքների նկարագրության երկու խմբերի կողմից ստեղծված կադապարները: Նշվում է այդ բնագավառում տարվող համագործակցության արդյունավետությունը:

Կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը Չեխոսլովակիայում հրատարակում է «Հարավսլավոնական երկրորդ ազդեցությունը և 16-րդ դարի սկզբի գրական պրոցեսի մի քանի հարցեր» հոդվածը ("Slavia", Praha, 1976, N2):

Հայոց լեզվի պատմության բաժնի ավագ գիտաշխատակից Ա. Մուրադյանը ԳԴՀ ԳԱ համար պատրաստում է «Հին հունական սոցիալական տերմինների համարժեքները հայերենում» աշխատանքը:

1977

Լեզվի ինստիտուտն ունի 10 բաժին՝ ժամանակակից հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, բարբառագիտության, բառագիտության և բառարանագրության, կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության, կիրառական լեզվաբանության, տերմինաբանության և խոսքի մշակույթի, հայկական համաբարբառի, ինչպես նաև բազմացնող մեքենաների բաժինները: Ինստիտուտի կազմում գործում են ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիան, օտար լեզուների ամբիոնը, քարտարանը և գիտական կաբինետը:

Ինստիտուտն ունի 150 աշխատակից, որոնցից 90-ը գիտաշխատակիցներ են, 11-ը՝ օտար լեզուների ամբիոնի

դասախոսներ: Համաբարբառի և բազմացնող մեքենաների բաժինները ինստիտուտի կազմի մեջ են մտնում 1977 թ. սկզբին:

Ինստիտուտն ունի 3 ասպիրանտ:

Երևանի համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի հետ համատեղ ինստիտուտում անցկացվում է երիտասարդ լեզվաբանների նստաշրջան, որին մասնակցում են ինստիտուտի 18 աշխատակիցներ: Նստաշրջանի նյութերը լույս են տեսնում ժողովածուով:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու 150-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ ԳԱ կազմակերպած ընդհանուր նստաշրջանին մասնակցում են ինստիտուտի ավագ գիտաշխատակիցներ Բ.Գ.Պ. Գ. Գասպարյանը և Բ.Գ.Պ. Ն. Պառնասյանը:

Ա. Մարկոսյանը, Ա. Գալստյանը, Տ. Մաթևոսյանը մասնակցում են Մոսկվայում տեղի ունեցած հոգելեզվաբանության և հաղորդակցման տեսության հարցերին նվիրված 6-րդ գիտաժողովին: Զեկուցումների թեզիսները տպագրվում են:

Ն. Մելիքյանը, Ս. Մխիթարյանը, Ս. Պողոսովան մասնակցում են Տաշքենդում կայացած՝ ռուսաց լեզվի տարածման և զարգացման հարցերին նվիրված խորհրդակցությանը, որի ժամանակ Ն. Մելիքյանը հանդես է գալիս ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ հաղորդումով:

Կիրառական լեզվաբանության բաժնի աշխատակիցներ Հ. Զաքարյանը և Լ. Լազարյանը զեկուցումներով հանդես են գալիս Մինսկում և Թբիլիսիում կայացած դպրոց-խորհրդակցություններում: Ա. Խաչատրյանը զեկուցում է կարդում Երևանում կայացած՝ իմաստաբանության ինդիքներին նվիրված համամիութենական խորհրդակցությունում:

Օտար լեզուների ամբիոնի դասախոսները մասնակցում են Շղալտուբոյում կայացած համամիութենական խորհրդակցությանը՝ նվիրված օտար լեզուների ուսուցման բա-

րելավման հարցերին: Կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը Ջագրեբում մասնակցում է սլավոնագետների 8-րդ համաժողովին:

Գիտատեղեկատվական և գործնական աշխատանքներ

«Գիտելիք» ընկերության ակտիվ անդամներ են Հ. Օհանյանը, Ռ. Շալունցը, Տ. Ավետիսյանը, Գ. Վահանյանը, Ռ. Թոխմախյանը, Ա. Սարգսյանը, Բ. Ղազարյանը և ուրիշներ:

1977 թ. սկսվում է «Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստատեսային հաղորդաշարը, որը ղեկավարում է ինստիտուտի աշխատակից Ա. Սարգսյանը; Հաղորդաշարին մասնակցում են ինստիտուտի այլ աշխատակիցներ ևս:

Ինստիտուտը մշտապես գործնական օգնություն է ցույց տալիս բոլոր անձանց և կազմակերպություններին, որ դիմում են լեզվի մշակույթին և լեզվական նորմերին վերաբերող հարցերով:

Միջազգային գիտական կապեր

Ինստիտուտ են այցելում ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի աշխատակիցներ. պրոֆ. Յուրգեն, դոկտոր Ինգրիդ Շտուրկեն, դոկտոր Դորոտե Արոլդը, որոնք կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնի աշխատակիցների հետ միասին քննարկում են թեմայի մշակման տեսական և գործնական հարցերը:

ՀՍՍՀ ԳԱ հրավերով լեզվի ինստիտուտ է այցելում ԳՖՀ Քիլի համալսարանի պրոֆեսոր Վ. Վինտերը, որը մի շարք զեկուցումներ է կարդում:

Լեզվի ինստիտուտն ընդունում է նաև շվեյցարացի նշանավոր լեզվաբան-հայագետ Ռ. Գոդելին, ամերիկացի հայագետ պրոֆ. Ա. Սանջանին:

Գիտական գործուղումով լեզվի ինստիտուտում է գտնվում հոլանդացի լեզվաբան-հայագետ Ջ. Վայտենբերգը,

որը զբաղվում է գրաքարի շրջուն բառարան կազմելու խընդրով:

Զգալիորեն աշխուժանում է արտասահմանյան երկրների հետ գիտական տեղեկատվության փոխանակումը: Ինստիտուտը ուղարկում և ստանում է բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ, գրքեր, հոդվածների առանձնատիպեր և այլն (ինստիտուտի տարեկան հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7 գ. 39)

Ավագ գիտաշխատակից Մ. Մուրադյանի ջանքերով ինստիտուտում ստեղծվում է երգչախումբ, որի հիման վրա հետագայում ձևավորվում է «Ակունք» համույթը:

1978

Ինստիտուտի կառուցվածքը չի փոփոխվում: Տասը բաժիններում աշխատում է 150 մարդ, որից 90-ը գիտաշխատողներ են, 11-ը՝ օտար լեզուների ամբիոնի դասախոսներ:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը և ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտը համատեղ մշակում են «Կախումների քերականության կիրառումը բնական լեզվի պարզ նախադասության ուսումնասիրության մեջ» թեման:

1979

Լեզվի ինստիտուտն ունի 10 բաժին՝ ժամանակակից հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, բարբառագիտության, բարձրանագրության, տերմինաբանության և խոսքի մշակույթի, հայկական համաբարբառի, կիրառական լեզվաբանության, կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության, ինչպես նաև բազմացման մեքենաների բաժինները: Ինստիտուտի կազմում գործում են ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիան, քարտարանը և գիտական

կաբինետը: Օտար լեզուների ամբիոնը կցվում է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքին և ինստիտուտին է ենթարկվում միայն ֆինանսապես:

Ինստիտուտն ունի 140 աշխատակից, որոնցից 60-ը գիտաշխատակից են, 10-ը՝ ամբիոնի դասախոս:

Ինստիտուտն ունի երկու ասպիրանտ՝ ժամանակակից հայոց լեզու և ընդհանուր լեզվաբանություն մասնագիտություններով:

Ինստիտուտի աշխատակիցներ ակադ. Գ. Բ. Զահուկյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Է. Բ. Աղայանը, բ.գ.դ. Ն. Ա. Պառնասյանը մասնակցում են ԱՄՆ Ֆիլադելֆիա քաղաքում կայացած հայերենագիտության միջազգային գիտաժողովին: Գ. Բ. Զահուկյանը մասնակցում է նաև Իտալիայի կովկասագիտական գիտաժողովին:

Կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնի աշխատակիցներ Ռ. Լ. Ուռուտյանը, Ա. Կ. Մանուկյանը, Է. Ռ. Եղիազարյանը մասնակցում են Մոսկվայում կայացած՝ մեքենական թարգմանության խնդիրներին նվիրված համամիութենական խորհրդակցությանը:

Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի աշխատակիցներ Լ. Ա. Սարաջևան և Ծ. Ռ. Հարությունյանը զեկուցումներ են կարդում Դուշանբեում կայացած՝ բարբառագիտության և լեզվի պատմության ընդհանուր հարցերին նվիրված համամիութենական խորհրդակցությունում: Զեկուցումների թեզիսները հրատարակվում են:

Ինստիտուտի առաջատար գիտաշխատողները ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի և մասնագիտական տերմինաբանական հանձնաժողովների ակտիվ անդամներ են: Նրանք մշակում և ներկայացնում են տերմինաբանության, ուղղագրության, ուղղախոսության վերաբերյալ որոշումների նախագծեր, պարբերաբար մասնակցում կոմիտեի նիստերին և քննարկումներին:

Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ ակտիվորեն մասնակցում են լուսավորության և բարձրագույն կրթության մինիստրությունների մեթոդական խորհուրդների աշխատանքներին:

Լեզվի ինստիտուտի աշխատակիցների մասնակցությամբ քննարկվում և հաստատվում են ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի ուսումնական ծրագրերը:

Աշխուժանում են տերմինաբանության և խոսքի մշակույթի բաժնի գործնական աշխատանքները: Բաժնի աշխատակիցները մշտապես շփվում են հանրապետությունում հրատարակվող թերթերի և ամսագրերի խմբագրությունների, մամուլի աշխատողների հետ, կարդում են գեկուցումներ քննարկում են ներկայացված մասնագիտական հոդվածները, զբաղվում են բեմական խոսքի մշակույթի հարցերով: Հանդիպումներ են կազմակերպվում դրամատիկ թատրոնի դերասանների, բժշկական աշխատողների հետ: Բաժնի աշխատակիցներ Լ. Պետրոսյանը և Լ. Ղազանչյանը մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի թարգմանչական խորհրդի անդամներ են:

Ինստիտուտը գործուն օժանդակություն է ցույց տալիս առևտրի և կենցաղսպասարկման նախարարություններին՝ որոշ ապրանքների անվանացանկերը միօրինակացնելու և կարգավորելու, ինչպես նաև նշված բնագավառներում խոսքի մշակույթը բարձրացնելու ուղղությամբ:

Կազմվում է ճանապարհային նշանների հայերեն անվանումների նախագիծ: Զագսի բյուրոյի խնդրանքով կազմվում է հանձնարարելի հայկական անունների ցանկ:

Ինստիտուտի շատ գիտաշխատակիցներ «Գիտելիք» ընկերության ակտիվ անդամներ են: Նրանք մի շարք գեկուցումներ են կարդում ինչպես Երևանի, այնպես էլ հանրապետության այլ քաղաքների (Սևան, Հրազդան, Արզնի, Արովյան) աշխատավորության համար:

Ինստիտուտի մի շարք երիտասարդ գիտաշխատողներ պատրաստում են հայոց լեզվին և հայերեն խոսքի մշակույթին նվիրված հեռուստատեսային հաղորդումների նոր շարք:

Հեռուստատեսությամբ կազմակերպվում է հաղորդում՝ նվիրված ԱՄՆ-ում կայացած հայերենագիտական գիտաժողովին:

Թբիլիսիի Ա. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հրավերով Գ. Ջահուկյանը դասախոսություններ է կարդում հայկական բաժանմունքի ուսանողության համար:

Միջազգային գիտական կապեր

Լեզվի ինստիտուտ են այցելում ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի տեքստերի ավտոմատ մշակման բաժնի վարիչ Յ. Կունցեն և ավագ գիտաշխատող Գ. Կլիմանովը: Կատարված աշխատանքները բավարար հիմք են՝ ուսումնասիրության արդյունքները ամփոփելու համատեղ ժողովածուի մեջ, որի հրատարակությունը նախատեսվում է 1980թ. ԳԴՀ-ում:

Կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնում քննարկվում են նաև ֆրանսահայ լեզվաբան Ագուպովի առաջարկած «ունիլինգվա» արհեստական լեզվի կառուցման սկզբունքները: Արվում են անհրաժեշտ դիտողություններ ու առաջարկություններ:

ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրավերով լեզվի ինստիտուտ է այցելում ավստրիացի լեզվաբան-հայագետ Բեդա Կյունցլեն: Քննվում են դասական բանասիրության և հնագույն թարգմանություններին առնչվող հարցեր:

Շարունակվում է գիտական գրականության փոխանակումը ինստիտուտի և արտասահմանյան մի շարք գիտական կազմակերպությունների և գիտնականների միջև (ինստիտուտի տարեկան հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085., ց.7 գ.41)

Գ.Զահուկյանը ընտրվում է ԱՄՆ լեզվաբանական ընկերության անդամ, 1980 թ. պարգևատրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի «Մեսրոպ Մաշտոց» հուշամեդալով:

1980 թ. սկսած՝ Գ. Բ. Զահուկյանը «Հայ լեզվաբանության տարեգիր» (Annual of Armenian Linguistics, ԱՄՆ) պարբերական հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է:

1980թ. և 1985թ. Է. Բ. Աղայանը ընտրվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատգամավոր:

Փետրվարի 27-28. Աղվերանում կազմակերպվում է երիտասարդ լեզվաբանների հանրապետական 2-րդ գիտաժողովը, որին զեկուցումներով մասնակցում են լեզվի ինստիտուտի 13 երիտասարդ գիտաշխատակիցներ:

Նոյեմբերի 10-20. Անցկացվում է «Ժամանակակից հայերենի զարգացման օրինաչափությունները» թեմայով հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված Հայաստանում սովետական կարգերի հաստատման 60-ամյակին:

Ինստիտուտը ակտիվորեն աջակցում է ARCO-11 գիտաժողովի և սեմինար-դպրոցի կազմակերպմանը: Ինստիտուտի աշխատակիցները (Գ. Զահուկյան, Ա. Գրիգորյան, Լ. Լազարյան, Ն. Գրիգորյան, Ռ. Թոխմախյան) կարդում են դասախոսություններ և զեկուցումներ:

Վ.Մ.Գրիգորյանը և Ռ.Լ.Ուռուտյանը մասնակցում են Պոտտսդամում (ԳԴՀ) կայացած՝ տեքստերի ավտոմատ մշակման հարցերին նվիրված գիտաժողովին:

Ինստիտուտի աշխատակից Ա.Մայիլյանը մասնակցում է Դուշանբեում կայացած՝ միութենական ակադեմիաների ռուսաց լեզվի բաժինների և խմբերի ղեկավարների կոորդինացիոն խորհրդակցությանը:

Բառարանագրության բաժնի աշխատակից Ե. Մելքոնյանը զեկուցում է կարդում Տաշքենդում կայացած թյուրքագիտական համաշխարհային համաժողովում:

ՄՍՀՄ լեզվաբանության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի հրավերով Մ. Աղաբեկյանը մասնակցում տարածքային լեզվաբանության հարցերի վերաբերող է սեմինարին:

Լ. Սարաջևան և Ծ. Հարությունյանը հրավիրվում են մասնակցելու անտիկ բալկանիստիկային նվիրված համամիութենական խորհրդակցությանը Մոսկվայում:

Գիտահետազոտական աշխատանքների կոորդինացում

Աշխատանքն է շարունակում լեզվաբանության կոորդինացիոն հանձնաժողովը, որը ժամանակ քննարկում է Երևանի համալսարանի և մանկավարժական բուհերի հայոց և ռուսաց լեզուների ամբիոնների գիտահետազոտական աշխատանքների պլանները: Հանձնարարականներ են տրվում բուհերի ամբիոններին մի շարք թեմաներ, այդ թվում ատենախոսական թեմաներ ճշգրտելու վերաբերյալ:

Գիտատեղեկատվական և գործնական աշխատանքներ

Ինստիտուտի առաջատար աշխատակիցները ՀՄՍՄ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի և մասնագիտական տերմինաբանական հանձնաժողովների ակտիվ անդամներ են: Նրանք մշակում և քննարկման են ներկայացնում տերմինաբանության, ուղղագրության, ուղղախոսության վերաբերյալ որոշումների նախագծեր, պարբերաբար մասնակցում են կոմիտեի նիստերին և քննարկումներին: Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ ակտիվորեն մասնակցում են լուսավորության և բարձրագույն կրթության նախարարությունների մեթոդական խորհուրդների աշխատանքներին:

Լեզվի ինստիտուտի աշխատակիցների մասնակցությամբ քննարկվում և հաստատվում են հայոց լեզվի ուսումնական ծրագրերը բուհերի, ինչպես նաև հանրակրթական դպրոցների միջին դասարանների համար:

Գ. Զահուկյանը, Ն. Պառնասյանը, Ս. Աբրահամյանը մի շարք զեկուցումներ են կարդում ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտում և այլ կազմակերպություններում:

Ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ (Թ. Ղարազյուլյան, Ն. Պառնասյան, Ռ. Շալունց, Հ. Սուքիասյան, Ս. Ղուկասյան, Հ. Զաքարյան, Բ. Ներսիսյան) վարում են հեռուստատեսային «Մեր լեզուն, մեր խոսքը» հաղորդաշարը:

Միջազգային գիտական կապեր

Շարունակվում է լեզվի ինստիտուտի և ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի համագործակցությունը: Լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ բաժնի վարիչ Յ. Կունցեի գլխավորությամբ այցելում են լեզվի ինստիտուտ: Համատեղ սեմինարների և խորհրդակցությունների ժամանակ քննարկվում են ավարտվող թեման հրատարակելու, ինչպես նաև հետագա համագործակցության հարցերը: 1981-1985 թթ. համար նախատեսվում է մշակել «Լեզվաբանության մեթոդաբանական և աշխարհայացքային պրոբլեմները» թեման: Կազմվում է աշխատանքների որոշակի ծրագիր, քննարկվում են համագործակցության նպատակներն ու սպասվող արդյունքները:

Լեզվի ինստիտուտն ընդունում է իտալացի նշանավոր լեզվաբան Ջ. Բոնֆանտեին, որը զեկուցումներ է կարդում է և պատմահամեմատական և տարածքային լեզվաբանության հարցերին առնչվող խորհրդակցություններ անցկացնում ինստիտուտի աշխատակիցների հետ:

Խորհրդատվություն ստանալու նպատակով լեզվի ինստիտուտ է այցելում ամերիկահայ լեզվաբան Հ. Մերոբյանը:

Շարունակվում է գիտական գրականության փոխանակումը ինստիտուտի և արտասահմանյան մի շարք գիտական կազմակերպությունների և գիտնականների հետ:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7, գ. 42)

Հունիս. Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնից առանձնացվում է 3 խումբ, և ստեղծվում է նոր բաժին, որն աշխատանքներ է ծավալում 3 հիմնական ուղղություններով՝ լեզուների զուգադրական և տիպաբանական ուսումնասիրություն, հանրալեզվաբանություն և հոգելեզվաբանություն:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7, գ. 3)

Գիտխորհրդի և կուսբյուրոյի կազմած հանձնաժողովը հետևյալ կազմով՝ Ն. Պառնասյան, Ն. Միմոնյան, Ա. Խաչատրյան, Ռ. Ուռուտյան, Հ. Սուքիասյան, Ե. Մելքոնյան և Բ. Ներսիսյան, 1982 թ. հունվարի 4-14-ը անցկացնում է ինստիտուտի 1981 թ. գիտահետազոտական պլանների կատարման, ինչպես նաև նախորդ տարիներին (1980-1981թթ.) ավարտված աշխատանքների վիճակի փաստացի ստուգումներ (ստուգումների արդյունքների մասին զեկուցագիրը պահպանվում է ՀԱԱ-ում):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7, գ. 3, թ. 44-67)

Ըստ 1981 թ. փաստացի ստուգումների զեկուցագրի՝ ինստիտուտն ունի հետևյալ բաժինները.

1. Ժամանակակից հայերենի (վարիչ՝ Ս. Աբրահամյան),
2. հայոց լեզվի պատմության (վարիչ՝ Վ. Առաքելյան),
3. բառարանագրության (վարիչ՝ Հ. Կոստանյան),
4. զուգադրական և տիպաբանական ուսումնասիրությունների (վարիչ՝ Լ. Հովսեփյան),
5. բարբառագիտության,
6. տերմինաբանության (վարիչի տեղակալ՝ Լ. Պետրոսյան, վարիչի մահվանից հետո տեղը թափուր է),
7. կիրառական լեզվաբանության (վարիչ՝ Ա. Խաչատրյան),

8. կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժին և ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիա,
9. քարտազման և բազմացման:

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7, գ. 3)

ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ ՀՍՍՀ ԳԱ նախագահության գիտատեխնիկական տերմինաբանության կոմիտեն միացվում է ինստիտուտի տերմինաբանության և խոսքի մշակույթի բաժնին: Ինստիտուտի կազմում գործում են ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիան և գրադարանը: Ինստիտուտն ունի 142 աշխատակից, որոնցից 76-ը գիտաշխատակիցներ են: 1981 թ. երկու երիտասարդ գիտաշխատակից ձևակերպվում է փորձնակ-հետազոտող և գործուղվում ՍՍՀՄ ԳԱ լեզվաբանության ինստիտուտ և ՍՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտ:

Ինստիտուտն ունի 1 ասպիրանտ՝ հայոց լեզվի պատմություն մասնագիտությամբ (արտադրությունից չկտրված): Գ. Զահուկյանի ղեկավարությամբ պարբերաբար անցկացվում են մասնագիտական սեմինարներ. գիտաշխատակիցները զեկուցումներ են կարդում՝ նվիրված լեզվաբանության տեսական որոշ հարցերի:

Ինստիտուտում կազմակերպվում է ամենամյա գիտական հաշվետու նստաշրջան:

Վ. Վ. Առաքելյանը, Հ. Լ. Զաքարյանը և Բ. Ս. Ներսիսյանը զեկուցումներով մասնակցում են Թբիլիսիում կայացած երիտասարդ գիտաշխատողների քաղաքային գիտաժողովին: Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող Ծ. Հարությունյանը «Լատիներենի դասավանդման առանձնահատկությունները հայ-ռուսական երկլեզվության պայմաններում» թեմայով զեկուցում է կարդում Մինսկում կայացած դասական լեզուների դասավանդման հարցերին նվիրված գիտաժողովում: Լ. Պետ-

րոսյանը և Հ. Զաքարյանը զեկուցումներով մասնակցում են տերմինաբանության հարցերին նվիրված սեմինարին, Վ. Գրիգորյանը և Ժ. Մանուկյանը՝ Լենինգրադում կայացած «Տիպաբանական մեթոդները տարահամակարգ լեզուների շարահյուսության ուսումնասիրության ժամանակ» համամիութենական գիտաժողովին:

Գիտահետազոտական աշխատանքների կոորդինացում

Աշխատանքներն է շարունակում լեզվաբանության գծով կոորդինացիոն խորհուրդը. նիստերի ժամանակ քննարկվում է գիտահետազոտական աշխատանքները կոորդինացնելու ընթացքը հանրապետությունում:

Բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ուղղությամբ շարունակվում է Երևանի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի և լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի համագործակցությունը:

Գիտատեղեկատվական և գործնական աշխատանքներ

Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ ակտիվորեն մասնակցում են լուսավորության և բարձրագույն կրթության նախարարությունների մեթոդական խորհուրդների աշխատանքներին:

Ինստիտուտի տնօրենության և ժամանակակից հայոց լեզվի բաժնի նախաձեռնությամբ և քաղժողկրթբաժնի աջակցությամբ պարբերաբար կազմակերպվում է «Հայոց լեզվի ուսուցչի օր», որի ժամանակ լեզվաբանները զեկուցումներ են կարդում և խորհրդակցություններ տալիս հայոց լեզվի տեսության ու դասավանդման մեթոդիկայի հարցերի վերաբերյալ:

Ինստիտուտի աշխատակիցներ Հ. Սուքիասյանը, Ռ. Շալունցը և Բ. Ներսիսյանը վարում են «Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստատեսային հաղորդաշարը: Ինստիտուտի

աշխատակից Գ. Վահանյանը ղեկավարում է «Լեզվասեր» ակումբի աշխատանքները:

Միջազգային գիտական կապեր

Լեզվի ինստիտուտը շարունակում է գիտական կապեր պահպանել արտասահմանյան կազմակերպությունների և գիտնականների հետ:

Շարունակվում է լեզվի ինստիտուտի և ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի համագործակցությունը: 1981-1985 թ. համար պլանավորվում է նոր թեմա՝ «Կախումների քերականության մեթոդները հայերենի և գերմաներենի պարզ նախադասության վերլուծության ժամանակ և ընդհանուր մեթոդաբանության մի քանի հարցեր»:

Կազմվում է աշխատանքների որոշակի ծրագիր, քննարկվում են համագործակցության նպատակներն ու սպասվող արդյունքները:

Ինստիտուտն ընդունում է ամերիկացի հայագետ Ջ. Գրեյինին, Կոպենհագենի համալսարանի դասախոս Բ. Օլսենին: Օլսենը ծանոթանում է ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության աշխատանքներին, խորհրդատվություն ստանում իրեն հետաքրքրող հարցերի մասին:

Նոյեմբեր. Ինստիտուտը հյուրընկալում է հոլանդացի հայագետ Ջ. Վայտենբերգին, որը գեկուցումներ է կարդում ինստիտուտի աշխատակիցների համար պատմահամեմատական լեզվաբանության հարցերի շուրջ, գրաբարի շրջուն բառարանի կազմման աշխատանքների ընթացքի մասին: Նա ծանոթանում է ինստիտուտի բառարանագրության, համաբարբառի բաժինների աշխատանքներին:

Շարունակվում է գիտական գրականության փոխանակումը լեզվի ինստիտուտի և արտասահմանյան մի շարք գիտական կազմակերպությունների և գիտնականների միջև:

Լեզվի ինստիտուտը նախատեսում է 1982 թ. սեպտեմբերին հրավիրել հայերենագիտության միջազգային գիտաժողով: Ավելի քան երեք տասնյակ հայագետներ ցանկություն են հայտնում մասնակցելու այդ գիտաժողովին: Ինստիտուտում տարվում են կազմակերպչական աշխատանքներ (Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տարեկան հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7, գ. 43)

1982

Ինստիտուտն ունի 11 բաժին՝ ժամանակակից հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, բարբառագիտության, բառարանագրության և բառագիտության, տերմինաբանության և խոսքի մշակույթի, հայկական համաբարբառի, կիրառական լեզվաբանության, կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության, քարտազրման և բազմացման, գուգադրական-տիպաբանական հետազոտությունների:

Ինստիտուտի կազմում գործում են ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի լաբորատորիան և գրադարանը: Ինստիտուտը ունի 139 աշխատակից, որոնցից 72-ը գիտաշխատակիցներ են: Ինստիտուտն ունի 5 ասպիրանտ:

Գ.Ջահուկյանի ղեկավարությամբ պարբերաբար անցկացվում են տեսական սեմինարներ:

Մայիսի 11-14. Ծաղկաձորում տեղի է ունենում երիտասարդ լեզվաբանների հանրապետական 3-րդ գիտաժողովը՝ նվիրված Սովետական Միության կազմավորման 60-ամյակին: Գիտաժողովին մասնակցում են երիտասարդ լեզվաբաններ ոչ միայն հանրապետության տարբեր քաղաքներից, այլև Մոսկվայից, Թբիլիսիից, Բաքվից, Ստեփանակերտից: Գիտաժողովին զեկուցումներով ու հաղորդումներով մասնակցել է լեզվի ինստիտուտի 25 երիտասարդ գիտաշխատակից:

Ինստիտուտում կազմակերպվում է ամենամյա հաշվետու գիտական նստաշրջան, որի ժամանակ տարբեր բաժինների գիտաշխատակիցները հանդես են գալիս իրենց գիտահետազոտական թեմաների վերաբերյալ զեկուցումներով ու հաղորդումներով:

Միջազգային գիտական կապեր

Լեզվի ինստիտուտն ընդունում է անգլիացի լեզվաբան Ջ. Պրեսին:

Մեյտնմբերի 21-25. Տեղի է ունենում միջազգային հայերենագիտական գիտաժողով, որին մասնակցում են 99 մասնագետներ աշխարհի տարբեր երկրներից: Գիտաժողովում զեկուցումներ են կարդում լեզվի ինստիտուտի երկու տասնյակից ավելի գիտաշխատողներ: Գիտաժողովի թեզիսները լույս են տեսնում 3 լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

1983

Ինստիտուտում գործում է 11 բաժին: Ինստիտուտի կառուցվածքը չի փոփոխվում: Աշխատակիցների թիվը՝ 143, որոնցից 79-ը գիտաշխատակիցներ են: Ասպիրանտուրայում ուսանում է 9 ասպիրանտ:

Տեղի է ունենում ամենամյա հաշվետու գիտական նստաշրջան:

Ինստիտուտի մի շարք գիտաշխատակիցներ զեկուցումներով ու հաղորդումներով մասնակցում են համամիութենական և հանրապետական գիտաժողովների: Վ. Մ. Գրիգորյանը, Լ. Ա. Սարաջևան, Հ. Գրիգորյանը, Օ. Գրիգորյանը և Ս. Պողոսովան մասնակցում են սլավոնագետների 9-րդ համագումարին (Կիև 6-14. 9. 1983թ.), Ժ. Մանուկյանը, Ս. Միմոնյանը և Ա. Մանուկյանը՝ գիտական սեմինարին (Տալլին, 1983թ.), Է. Հ. Գրիգորյանը՝ վիճաբարդության ամենամյա ընթերցումներին (Մոսկվա, 1983թ.), Վ. Զիհանյանը՝ Կովկասի

անվանագիտությանը նվիրված համամիութենական 3-րդ (Թելավի), Բ. Ներսիսյանը Գեորգիևյան տրակտատի 200-ամյակին նվիրված՝ ասպիրանտների և երիտասարդ գիտաշխատողների գիտաժողովներին (Թբիլիսի, 18-20, 5, 1983թ.):

Է. Աղայանը ծննդյան 70-ամյակի կապակցությամբ պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով (ԵՊՀ տարեգրություն, Ե., ԵՊՀ հրատ., 2009, էջ 257):

Գիտատեղեկատվական և գործնական աշխատանքներ

Ինստիտուտի առաջատար աշխատակիցները ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի և մասնագիտական տերմինաբանական հանձնաժողովների անդամներ են: Նրանք մշակում և քննարկման են ներկայացնում տերմինաբանության, ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ որոշումների նախագծեր:

Ինստիտուտի մի շարք աշխատակիցներ (Գ. Բ. Ջահուկյան, Ն. Ա. Պառնասյան, Ս. Գ. Աբրահամյան և այլք) ակտիվորեն մասնակցում են լուսավորության և բարձրագույն կրթության նախարարությունների մեթոդական խորհուրդների աշխատանքներին, օժանդակում դասագրքեր կազմելուն և խմբագրելուն:

Ա. Սարգսյանը, Հ. Սուքիասյանը, Ռ. Շալունցը վարում են «Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստատեսային հաղորդաշարը: Հաղորդաշարի աշխատանքներին մասնակցում և աջակցում է Լ. Հովսեփյանը:

Գ. Վահանյանը ղեկավարում է «Լեզվասեր» ակումբի աշխատանքները:

Միջազգային գիտական կապեր

Շարունակվում է լեզվի ինստիտուտի և ԳԴՀ ԳԱ լեզվաբանության կենտրոնական ինստիտուտի համագործակցությունը: ԳԴՀ-ում տպագրվում է ժողովածու (Linguistische Studien, 108, Berlin, 1983) ձեռք բերված արդյունքների

մասին, և նախատեսվում է երկու ժողովածու լույս ընծայել Երևանում:

ԱՄՆ-ում լույս տեսնող "Annuel of Armenian Linguistics"-ում (vol. 4, 1983) տպագրվել են Գ. Բ. Զահուկյանի, Ն. Ա. Պառնապյանի և Ա. Հ. Խաչատրյանի հոդվածները:

ԳԴՀ-ից ժամանում է 2 հոգուց բաղկացած պատվիրակություն:

Ինստիտուտի աշխատակից Ե. Մելքոնյանը գործուղվում է Կիպրոսի Մելքոնյան վարժարան (Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տարեկան հաշվետվությունից):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7, գ. 45)

1984

Փետրվար. Ինստիտուտում 10 օրով հյուրընկալվում են Գերմանիայի լեզվաբաններ Ա. Մենդելը, Ու. Յունգը, Գ. Հասսեն:

Մեյստեմբեր 3-24. Ինստիտուտում հյուրընկալվում է Հունգարիայի Դեբրեցեն քաղաքի պետհամալսարանի լեզվաբանության ամբիոնի վարիչ Լ. Դեժոն: Լ. Դեժոնի այցը լեզվի ինստիտուտ նախատեսված էր ՀՍՍՀ ԳԱ և Հունգարիայի ԳԱ երկկողմ գիտական համագործակցությամբ (1981-1985թթ.): Լ. Դեժոն ինստիտուտի տիպաբանական-գուգադրական հետազոտությունների բաժնում կարդում է մեկ, մաթեմատիկական և կառուցվածքային լեզվաբանության բաժնում՝ երկու զեկուցում:

Հոկտեմբերի 22. Ա.Ա. Անթոսյանը 1 տարով գործուղվում է ԱՄՆ՝ Դետրոյթի Ալեք Մանուկյան դպրոցում հայոց լեզու դասավանդելու:

Նոյեմբերի 9. Գ. Բաղդիշյանը 1 տարով գործուղվում է Կիպրոս՝ Մելքոնյան վարժարանում հայոց լեզու դասավանդելու: Նոյեմբերին 10 օրով ինստիտուտում հյուրընկալվում են Յու. Կունցեն և Ու. Լինդները (ԳԴՀ):

(ՀԱԱ, ֆ. 1085, ց. 7, գ. 46)

«Ժամանակակից հայոց լեզու» եռահատոր աշխատությունն արժանանում է ՀՍՍՀ պետական մրցանակի:

«Մեր լեզուն, մեր խոսքը» հեռուստատեսային հաղորդաշարն արժանանում է ՀՍՍՀ պետական մրցանակի (գիտական ղեկավար՝ Ն. Ա. Պառնասյան):

Գիտխորհրդի կազմած հանձնաժողովը՝ հետևյալ կազմով՝ Ն. Պառնասյան, Հ. Մուրադյան, Ս. Աբրահամյան, Ռ. Ուռուտյան, Լ. Հովսեփյան, Հ. Օհանյան և Ռ. Թոխմախյան, 1985 թ. հունվարի 8-20-ը անցկացնում է ինստիտուտի 1984 թ. գիտահետազոտական պլանների կատարման և նախորդ տարիներին ավարտված աշխատանքների փաստացի ստուգումներ ըստ բաժինների (ստուգման արդյունքների մասին գեկուցագիրը պահպանվում է ՀԱԱ 1085 ֆոնդի N7 ցուցակի 8-րդ գործում (էջ 1-26)):

1985

Ս. Գ. Աբրահամյանը պարգևատրվում է Հայրենական մեծ պատերազմի I աստիճանի շքանշանով:

1986*

Մայիսի 27- հունիսի 1. Ծաղկաձորում կայանում է երիտասարդ լեզվաբանների հանրապետական 5-րդ գիտաժողովը:

Սեպտեմբերի 1. Ըստ ՀՍՍՀ ԳԱ նախագահության օգոստոսի 27-ի որոշման՝ 1986թ. սեպտեմբերի 1-ից ինստիտուտը անցնում է աշխատավարձի վճարման նոր կարգի, և հաստատվում են ինստիտուտի հետևյալ բաժինները՝ ժամանակակից հայոց լեզվի (բաժնի վարիչ՝ Ս.Գ.Աբրահամյան, նախկինում եղել են Գ.Սևակը, ապա Ա.Ա.Աբրահամյանը), քարտարանի խումբ (ղեկավար՝ Գ.Բ. Թոսունյան), հայոց լեզվի պատմու-

* Տվյալները վերցվել են ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արխիվից:

թյան (բաժնի վարիչ՝ Լ.Ս.Հովսեփյան, նախկինում՝ Ս. Ղազարյան, ապա՝ Վ.Դ.Առաքելյան), բարբառագիտության (բաժնի վարիչ Ա.Ե.Խաչատրյան, նախկինում՝ Հ.Դ.Մուրադյան), բառարանագրության (բաժնի վարիչ՝ Հ.Ա.Օհանյան, նախկինում՝ Մ.Գրիգորյան, Է.Բ.Աղայան, Ե.Գ.Տեր-Մինասյան, Հ.Հ.Կոստանյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վարիչի պաշտոնակատար՝ Է.Բ.Աղայան), տիպաբանական-գուգադրական հետազոտությունների (բաժնի վարիչ՝ Հ.Լ.Զաքարյան, նախկինում՝ Լ.Ս.Հովսեփյան), տերմինաբանության և խոսքի մշակույթի (բաժնի վարիչ՝ Ա.Ե.Սարգսյան), փորձառական հնչյունաբանության (բաժնի վարիչ՝ Ա.Հ.Խաչատրյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Վ.Ս.Գրիգորյան), ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի խումբ (ղեկավար՝ Ռ.Լ.Ուռուտյան), հայկական համաբարբառի (բաժնի վարիչ՝ Լ.Շ.Հովհաննիսյան, նախկինում՝ Ա.Ա. Աբրահամյան)¹:

Ինստիտուտի աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 109:

Ինստիտուտի՝ «Հանրալեզվաբանություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում չորս հոգի:

Գ.Զահուկյանը պարգևատրվում է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

Ս.Աբրահամյանը պարգևատրվում է Խ.Աբովյանի անվան մեդալով:

Ա.Սարգսյանն արժանանում է ՀԽՍՀ պետական մրցանակի՝ «Մեր լեզուն, մեր խոսքը» հեղինակային հաղորդաշարի համար (խորհրդատու՝ Ն.Պառնասյան):

1987

Մայիսի 30. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են ԵՊՀ-ում կազմակերպված համատեղ գիտական

¹ Բաժինների նախկին վարիչների անուն-ազգանունները վերցվել են Հ. Զ.Պետրոսյանի «Հայերենագիտական բառարան» աշխատությունից, էջ 337:

նստաշրջանին՝ նվիրված Գ.Ղափանցյանի ծննդյան 100-ամյակին:

Մեպտեմբերի 21-23. Աշխատանքներն է ծավալում հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողովը (մասնակիցների թիվը՝ 119, արտասահմանյան մասնակիցների թիվը՝ 42):

Զեկուցումներով հանդես են գալիս ինստիտուտի 41 գիտաշխատակիցներ:

Ինստիտուտի՝ «Ժամանակակից հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում երկու հոգի:

Գ.Զահուկյանն արժանանում է ՀԽՍՀ պետական մրցանակի՝ «Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան» մենագրության համար:

Լ.Հովսեփյանը հրավիրվում է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան՝ գրաբարի դասընթաց վարելու:

Կայանում են ինստիտուտի գիտաշխատակիցներ Ա. Ե.Սարգսյանի «Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ (զուգադրական-տիպաբանական քննություն)» և Տ.Մ. Ավետիսյանի «Հայկական մարդանունների համակարգը» դոկտորական ատենախոսությունների պաշտպանությունները:

1988

Հունիսի 13-17. Աղավնաձորում կայանում է երիտասարդ լեզվաբանների հանրապետական 6-րդ գիտաժողովը:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում երեք հոգի, «Ընդհանուր լեզվաբանություն, հանրալեզվաբանություն, հոգելեզվաբանություն» մասնագիտությամբ՝ մեկը:

1988-1993թթ. Գ.Զահուկյանը եղել է “Вопросы языкознания” հանդեսի խմբարական խորհրդի անդամ:

Կայանում են ինստիտուտի գիտաշխատակիցներ Լ. Ս.Հովսեփյանի «Գրաբարի բառակազմական կադապարներ-

րը» և Հ.Ս.Օհանյանի «Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները» դոկտորականատենախոսությունների պաշտպանությունները:

1989

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում չորս հոգի, «Լեզվաբանության տեսություն» մասնագիտությամբ՝ մեկը:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Բ.Կ. Ղազարյանի «Ներտեքստային կապերը ժամանակակից հայերենում» դոկտորականատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

1990

Հոկտեմբերի 8-22. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերության՝ Բոլոնիայում (Իտալիա) կազմակերպած գիտաժողովին:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում չորս հոգի. ասպիրանտների ընդհանուր քանակը՝ ինը:

1990թ. սկսած՝ Գ.Ջահուկյանը "Studia indogermanica" հանդեսի գիտական խորհրդատուն է:

Գ.Ջահուկյանը պարգևատրվում է Երևանի պետական համալսարանի մեդալով՝ գիտական ուսումնասիրության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար:

Կայանում են ինստիտուտի գիտաշխատակիցներ Ս. Ա.Էլոյանի «Ժամանակակից հայոց լեզվի բառային ոճաբանություն» և Վ.Գ.Համբարձումյանի «18-19-րդ դարերի գրաբարի գործառությունը և կառուցվածքը» դոկտորականատենախոսությունների պաշտպանությունները:

1991

Ապրիլի 1. Ի կատարումն ՀԳԱ նախագահության՝ ՀԳԱ հիմնարկներում վարձատրության նոր համակարգի անցնելու մասին որոշման՝ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում 1991թ. ապրիլի 1-ից սկսում է գործել ինստիտուտի աշխատողների վարձատրման նոր կարգ մինչև ՀԳԱ նոր կանոնադրության հաստատման հիման վրա աշխատանքի պայմանագրային համակարգի անցնելը. հաստատվում են ինստիտուտի հետևյալ բաժինները՝ ժամանակակից հայոց լեզվի (բաժնի վարիչ՝ Ս.Գ.Աբրահամյան), քարտարանի խումբ (ղեկավար՝ Գ.Բ. Թոսունյան), հայոց լեզվի պատմության (բաժնի վարիչ՝ Լ.Ս.Հովսեփյան), բարբառագիտության (բաժնի վարիչ՝ Ն.Ժ.Սարգսյան), բառարանագրության (բաժնի վարիչ՝ Հ.Ա.Օհանյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Է.Բ. Աղայան), տիպաբանական-գուգադրական հետազոտությունների (բաժնի վարիչ՝ Հ.Լ. Զաքարյան), տերմինաբանության և խոսքի մշակույթի (բաժնի վարիչ՝ Ա.Ե.Սարգսյան), փորձառական հնչյունաբանության, կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Վ.Ս. Գրիգորյան), ինֆորմացիոն-հաշվողական համակարգերի խումբ (ղեկավար Ռ.Լ. Ուռուտյան), հայկական համաբարբառի (բաժնի վարիչ՝ Լ.Շ. Հովհաննիսյան):

Ինստիտուտի աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 124:

Հուլիսի 1. Ի կատարումն ՀԳԱ նախագահության 1991թ. մարտի 8-ի թիվ 7 (1099) որոշման՝

1. 1991թ. հուլիսի 1-ից լուծարքի են ենթարկվում ինստիտուտի բոլոր բաժինները.
2. լուծարքի ենթարկված բոլոր բաժինների աշխատակիցներն ազատվում են իրենց զբաղեցրած պաշտոններից՝ ըստ գործող օրենսդրության 2 ամիս առաջ 5 օրվա ընթացքում տեղյակ պահելով նրանց այդ մասին:

1991թ. հուլիսի 1-ից ինստիտուտն անցնում է աշխատանքի համաձայնագրային (կոնտրակտային) համակարգի. հաստատվում են հետևյալ թեմատիկ խմբերը՝ շարահյու-

սության գործառական ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ս.Գ. Աբրահամյան), աշխարհաբարի տարբերակային գոյաձևերի ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ա. Ե. Մարգարյան), բառաձանցական իմաստաբանության և ներտեքստային կապերի ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Վ.Մ.Գրիգորյան), բացատրական և բարբառային բառարանների (խմբի ղեկավար՝ Հ.Ա.Օհանյան), երկլեզվյան բառարանների (խմբի ղեկավար՝ Հ.Լ.Զաքարյան), 5-րդ դարի հայերենի պատմական բառարանի (խմբի ղեկավար՝ Վ.Գ. Ջիհանյան), ՀՀ կենտրոնական տարածքի բարբառների ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ն.Ժ.Մարգարյան), համակարգչային ապահովման (խմբի ղեկավար՝ Ռ.Լ.Ուռուտյան), հաղորդակցային և բարբառային հնչյունաբանության (խմբի ղեկավար՝ Ռ.Մ.Թոխմախյան), քարտարանի համալրման և բառագուգորդումների բառարանի (խմբի ղեկավար՝ Գ.Բ. Թոսունյան), պատմահամեմատական հետազոտությունների (խմբի ղեկավար՝ Ն.Մ.Սիմոնյան), պատմաբառագիտական ուսումնասիրությունների (խմբի ղեկավար՝ Լ.Շ.Հովհաննիսյան):

Ինստիտուտի աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 107:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» և «Ինֆորմատիկայի տեսական հիմունքներ» մասնագիտություններով ասպիրանտուրա է ընդունվում մեկական հոգի:

Մեպտեմբերի 9-22. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են ԱՄՆ-ում հրավիրված հայագիտական միջազգային գիտաժողովին:

1992

Մայիսի 1. Ինստիտուտի տնօրեն Գ.Զահուկյանի հրամանով հաստատվում են հետևյալ թեմատիկ խմբերի կազմերը՝ շարահյուսության գործառական ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ս. Գ.Աբրահամյան), աշխարհաբարի տարբերակային գոյաձևերի ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ա. Ե.

Սարգսյան), բառաձանցական իմաստաբանության և ներտեքստային կապերի ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Վ.Մ. Գրիգորյան), բացատրական և բարբառային բառարանների (խմբի ղեկավար՝ Հ.Ա. Օհանյան), երկլեզվյան բառարանների (խմբի ղեկավար՝ Հ.Լ. Զաքարյան), 5-րդ դարի հայերենի պատմական բառարանի (խմբի ղեկավար՝ Վ.Գ. Զիհանյան), ՀՀ կենտրոնական տարածքի բարբառների ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ն. Ժ. Սարգսյան), համակարգչային ապահովման (խմբի ղեկավար՝ Ռ.Լ. Ուռուտյան), հաղորդակցային և բարբառային հնչաբանության (խմբի ղեկավար՝ Ռ.Մ. Թոխմախյան), քարտարանի համալրման և բառագուգորդումների բառարանի (խմբի ղեկավար՝ Գ.Բ. Թոսունյան), պատմահամեմատական հետազոտությունների (խմբի ղեկավար՝ Ն.Ս. Սիմոնյան), պատմաբանագիտական ուսումնասիրությունների (խմբի ղեկավար՝ Լ.Շ. Հովհաննիսյան):

Ինստիտուտի աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 89:

Հուլիսի 1. Բարձրագույն կրթության և գիտության նախարարության հատկացրած գումարների համապատասխան՝ 1992թ. հուլիսի 1-ից հաստատվում են ինստիտուտի հետևյալ թեմատիկ խմբերը՝ շարահյուսության գործառական ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ս.Գ. Աբրահամյան), աշխարհաբարի տարբերակային գոյաձևերի ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ա. Ե. Սարգսյան), բառաձանցական իմաստաբանության (խմբի ղեկավար՝ Վ.Մ. Գրիգորյան), ներտեքստային կապերի ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Բ.Կ. Ղազարյան), բացատրական և բարբառային բառարանների (խմբի ղեկավար՝ Հ.Ա. Օհանյան), երկլեզվյան բառարանների (խմբի ղեկավար՝ Հ.Լ. Զաքարյան), 5-րդ դարի հայերենի պատմական բառարանի (խմբի ղեկավար՝ Վ.Գ. Զիհանյան), ՀՀ կենտրոնական տարածքի բարբառների ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Ն. Ժ. Սարգսյան), հայ բարբառների լեզվաբանական բանկի (խմբի ղեկավար՝ Ռ.Լ. Ուռուտյան), հաղորդակցային և բարբառային հնչաբանության

(խմբի ղեկավար՝ Ռ.Մ.Թոխմախյան), քարտարանի համալրման և բառագուգորդումների բառարանի (խմբի ղեկավար՝ Գ.Բ.Թոսունյան), պատմահամեմատական հետազոտությունների (խմբի ղեկավար՝ Ն.Ս.Սիմոնյան), պատմաբառագիտական ուսումնասիրությունների (խմբի ղեկավար՝ Լ.Շ. Հովհաննիսյան):

Ինստիտուտի աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 110:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Լ.Գ. Բրուտյանի «Ներակայման լեզվական արտահայտությունների վերլուծություն» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

1993

Մարտի 24-ապրիլի 7. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Լեյդենում (Հոլանդիա) կազմակերպված հայերենագիտական միջազգային գիտաժողովին:

Ինստիտուտի՝ «Բարբառագիտություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ հոգի, «Բառագիտություն և բառարանագրություն» մասնագիտությամբ՝ երեք հոգի «Լեզվաբանության տեսություն» մասնագիտությամբ՝ մեկը:

1994

Ապրիլի 1. Ի կատարումն ՀՀ ԳԱԱ նախագահության 1994թ. փետրվարի 23-ի թիվ 5 (1186) որոշման՝ լեզվի ինստիտուտի բազայի վրա գործող օտար լեզուների ամբիոնը ապրիլի 1-ից հանձնվում է ՀՀ ԳԱԱ նախագահությանը՝ որպես նրան կից գործող ստորաբաժանում:

Հունիսի 1. Ըստ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ընդհանուր ժողովի 1994թ. մայիսի 30-ի քվեարկության արդյունքների և դրա հիման վրա նախագահության ընդունած որոշման՝ 1994թ. հունիսի 1-ից Գ.Բ.

Ջահուկյանը վերահաստատվում է Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի պաշտոնում:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ հոգի, «Ժամանակակից հայոց լեզու» մասնագիտությամբ՝ երեքը:

Գ.Ջահուկյանին շնորհվում է Համազգային հայ կրթական և մշակութային միության մրցանակ՝ «Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցեր» աշխատության համար:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Ռ.Ն. Շալունցի՝ «Ջանգվածային լրատվության լեզուն և ոճը» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

1995

Ապրիլի 27-մայիսի 10. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Մոսկեալում (Կանադա) հրավիրված հայերենագիտական միջազգային գիտաժողովին:

Հունիս. 1995թ. հունիսի 21-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության անցկացրած փորձաքննության արդյունքների հիման վրա տրված հաստիքների և ֆինանսավորման համապատասխան՝ ինստիտուտում կազմավորվում է 10 թեմատիկ խումբ. աշխատանքից ազատվում է 60 աշխատակից, աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 61:

Գ.Ջահուկյանն արժանանում է Հայաստանի Հանրապետության գիտության ազգային մրցանակի:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Լ.Շ. Հովհաննիսյանի՝ «Հայերենի իրանական փոխառությունները» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

1996

Մայիս. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության գիտության բաժնի անցկացրած փորձաքննության արդյունքների հիման վրա

1996թ. մայիսի 1-ից ինստիտուտում կազմավորվում է 11 թեմատիկ խումբ. աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 58:

1997

Ս.Աբրահամյանն ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Քեմբրիջի միջազգային կենսագրական կենտրոնի կողմից Գ.Զահուկյանը ճանաչվում է «տարվա միջազգային մարդ»:

1998

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում երկու հոգի:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Ս.Վ. Ղուկասյանի՝ «Արդի գրական հայերենի արևելահայ և արևմտահայ տարբերակների հնչերանգային առանձնահատկությունները» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

1999

Ապրիլի 1. Ինստիտուտում գործում է 14 թեմատիկ խումբ. աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 77:

Հուլիսի 5-9. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են INALCO-ի (Փարիզ) կազմակերպած հայերենագիտական միջազգային 6-րդ գիտաժողովին: Զեկուցումները հրատարակվում են “Slovo” պարբերականում (vol.. 26-27, 2001-2002):

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» և «Ընդհանուր լեզվաբանություն» մասնագիտություններով ասպիրանտուրա է ընդունվում մեկական հոգի:

2000

Մայիս. ՀՀ կրթության և գիտության նախարարության անցկացրած փորձաքննության արդյունքների հիման վրա 2000թ.

մայիսի 1-ից ինստիտուտում կազմավորվում է 12 թեմատիկ խումբ. աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 71:

Ինստիտուտի՝ «Բարբառագիտություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ հոգի:

Մեպտեմբեր 5-10. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Հալլեում (Գերմանիա) կազմակերպված «Քրիստոնեական Հայաստան» միջազգային գիտաժողովին:

Հոկտեմբերի 16-20. Կայանում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը. մասնակիցների թիվը՝ 60, այդ թվում արտասահմանից՝ 12:

Վանաձորի Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնը կոչվում է ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի անունով:

2001

Մարտ. INALCO-ի (Փարիզ) հրավերով ինստիտուտի գիտաշխատակից Ս. Աղաբեկյանը 1 ամիս դասախոսում է հայագիտության ֆակուլտետում:

Օգոստոս. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Ստեփանակերտում կազմակերպված Հայ բարբառագիտության միջազգային համագումարին (օգոստոս 11-12) և Հայ բարբառագիտության ամառային դասընթացին (օգոստոս 13-25):

Ինստիտուտի՝ «Բառագիտություն և բառարանագրություն» և «Բարբառագիտություն» մասնագիտություններով ասպիրանտուրա է ընդունվում մեկական, «Ժամանակակից հայոց լեզու» մասնագիտությամբ՝ երկու հոգի:

ԼՂՀ Հաղորդի շրջանի Տումի գյուղի միջնակարգ դըպրոցը անվանակոչվում է ակադեմիկոս Ս.Աբրահամյանի անունով:

2002

Հունվար. ՀՀ կրթության և գիտության նախարարության անցկացրած փորձաքննության արդյունքների հիման վրա 2002թ. հունվարի 1-ից ինստիտուտում կազմավորվում է 12 թեմատիկ խումբ. աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 72:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում երկու, «Ժամանակակից հայոց լեզու» մասնագիտությամբ՝ երեք, «Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն» մասնագիտությամբ՝ մեկ հոգի:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Գ.Բ. Թոսունյանի «Գրաբարի բառարանագրությունը» դոկտորական ստենախոսության հրապարակային պաշտպանությունը:

Ա.Սարգսյանը պարգևատրվում է Մովսես Խորենացի մեդալով:

2003

Հունվար-փետրվար. Ինստիտուտի գիտաշխատակից Վ. Համբարձումյանը ԿԳՆ սփյուռքի կենտրոնի առաջարկությամբ գործուղվում է Իրանի Իսլամական Հանրապետություն՝ հայկական դպրոցների ուսուցիչների կատարելագործման դասընթացներ վարելու համար:

Ինստիտուտի՝ «Ժամանակակից հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում չորս հոգի:

Հոկտեմբերի 2-5. Միջիգանի համալսարանի (ԱՄՆ) հրավերով ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են հայերենագիտական միջազգային գիտաժողովին:

Նոյեմբերի 12-16. Կալիֆոռնիայի համալսարանի (ԱՄՆ) հրավերով ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Նոր Զուղային նվիրված միջազգային գիտաժողովին:

Լույս է տեսնում «Լեզու և լեզվաբանություն» պարբերականի անդրանիկ համարը (գլխավոր խմբագիր՝ Վ.Համբարձումյան: Խմբագրակազմ՝ Սերգեյ Աբրահամյան, Ջանկառլո Բոլոնիեզի (Իտալիա), Արմինե Գազինյան (պատաս-

խանատու քարտուղար), Օլեգ Գրիգորյան (խմբագրի տեղակալ), Շառլ դը Լամբերտրի (Ֆրանսիա), Գայանե Հովհաննիսյան (խմբագրի տեղակալ), Լավրենտի Հովհաննիսյան, Գեվորգ Ջահուկյան, Դորա Սաքայան (Կանադա), Յոզեֆ Վայտենբերգ (Նիդեռլանդներ), Ռոբերտ Տեր - Մերկերյան (Ֆրանսիա)):

Լ. Հովհաննիսյանն արժանանում է ՀՀ ԳԱԱ Վաստակագրի, Վ. Համբարձումյանը և Ն.Հովհաննիսյանը՝ ՀՀ ԳԱԱ Պատվոգրի:

2004

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ հոգի:

2005

Հունվար. Հիմք ընդունելով «ՀՀ 2005թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը և 2005թ. ՀՀ պետական բյուջեից գիտական գործունեության բազային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը՝ 2005թ. հունվարի 1-ից ինստիտուտում ձևավորվում է չորս բաժին՝ ժամանակակից հայերենի կառուցվածքի և գործառության ուսումնասիրության (բաժնի վարիչ՝ Ն.Ժ.Սարգսյան), հայերենի պատմական զարգացման ուսումնասիրության (բաժնի վարիչ՝ Վ.Գ.Համբարձումյան), հայերենի բարբառագիտական ատլասի (բաժնի վարիչ՝ Ա. Ն. Հանեյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Ա. Խ.Մանուկյան), և չորս թեմատիկ խումբ՝ գիտական տառադարձության հայերեն տառաձևերի մշակման (խմբի ղեկավար՝ Ռ.Լ. Ուռուտյան), VI- VIII դդ. հին հայերենի լիակատար բառարանի (խմբի ղեկավար՝ Ա.Ե.Սարգսյան), հայերենի բառագուգորդումների իմաստային և կառուցվածքային տիպերի ուսումնասիրության (խմբի ղեկավար՝ Գ.Բ.Թոսունյան), հայ-ռուսերեն նորաբանությունների բառարանի (խմբի ղեկավար՝ Ս.Ա.Ապլանյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 72:

Ապրիլ. Հաշվի առնելով ապրիլի 6-15 անցկացված հերթական ատեստավորման արդյունքները՝ ինստիտուտի ատեստավորված գիտաշխատողները հաստատվում են իրենց պաշտոններում:

Հունիսի 16. Հրավիրվում է Հայ գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված գիտաժողով: Ձեկուցումները հրատարակվում են «Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի» գրքում (Երևան, 2005):

Ինստիտուտի՝ «Հայոց լեզվի պատմություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ, «Հայոց լեզու» մասնագիտությամբ՝ չորս հոգի:

Հուլիսի 6. Երկարատև և ծանր հիվանդությունից հետո վախճանվում է ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Գևորգ Բեգլարի Ջահուկյանը:

Տաշիր քաղաքի փողոցներից մեկն այժմ կոչվում է նրա անունով:

2006

Ապրիլի 7. Տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար ինստիտուտի գիտական խորհրդի առաջադրած բ.գ.դ. Լ.Հովհաննիսյանի թեկնածությունը քվեարկելու համար: Քվեարկությամբ հաստատվում է բ.գ.դ. Լ.Հովհաննիսյանի թեկնածությունը:

Ապրիլի 25. ՀՀ ԳԱԱ նախագահության՝ 2006թ. ապրիլի 25-ի թիվ 23-Կ հրամանով ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն է նշանակվում Լ.Շ. Հովհաննիսյանը:

Հուլիսի 3-4. Տեղի է ունենում ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանին նվիրված «Ջահուկյանական ընթերցումներ» հանրապետական գիտական նստաշրջան: Ձեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2006):

Հուլիս-օգոստոս. Ինստիտուտը Արցվյան 15 հասցեում գտնվող շենքից տեղափոխվում է Գր. Լուսավորչի 15 հասցեում գտնվող շենք:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում չորս հոգի:

2007

Հունվար. 2007թ. հունվարի 1-ից Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում է ինստիտուտի կազմը. աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 68:

Հունվարի 23. Տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի գիտական խորհրդի կազմ ընտրելու համար: Քվեարկության արդյունքներով ինստիտուտի գիտական խորհուրդը հաստատվում է հետևյալ կազմով՝ Հովհաննիսյան Լ.Շ. (տնօրեն), Հովհաննիսյան Ն.Գ. (փոխտնօրեն- գիտական քարտուղար), Աղաբեկյան Մ.Ա., Ասլանյան Ս.Ա., Եզեկյան Լ.Կ. (ԵՊՀ, ամբիոնի վարիչ), Թեյյան Լ.Գ. (ԵՊՀ, դոցենտ), Թոխմախյան Ռ.Մ. (Ռուս-հայկական համալսարան, դոցենտ), Թոսունյան Գ.Բ., Համբարձումյան Վ.Գ., Հայրապետյան Ֆ. Փ., Հանեյան Ա.Ն., Հովսեփյան Լ.Ս. (ԵՊՀ, ամբիոնի վարիչ), Մանուկյան Ա. Խ., Պապիկյան Ս.Վ., Սարգսյան Ա.Ե., Սարգսյան Ն.Ժ., Սիմոնյան Ն.Մ., Ուռուտյան Ռ. Լ.:

Ապրիլի 3-4. Տեղի է ունենում «Ջահուկյանական ընթերցումներ» երկրորդ հանրապետական գիտական նստաշրջանը: Ջեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2007):

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում երկու հոգի:

Օգոստոսի 19-21. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Հայերենի լեզվաբանական կորպուսի՝ Գորիսում կազմակերպած միջազգային գիտաժողով- սեմինարին:

Մեպտեմբեր. 2007թ. սեպտեմբերի 1-ից ԿԳ նախարարության կողմից դադարեցվում է 0744 թեմատիկ խմբի ֆինանսավորումը խմբի ղեկավար Գ.Բ.Թոսունյանի՝ Երուսաղեմ երկարատև աշխատանքի մեկնելու կապակցությամբ:

Թեմատիկ խմբի աշխատակիցները ինստիտուտի տնտեսված գումարների հաշվին պահպանում են իրենց աշխատանքային տեղերը:

Ա. Սարգսյանն ընտրվում է «Արարատ» գիտությունների միջազգային ակադեմիայի (Ֆրանսիա) թղթակից անդամ, Կանադայի միջազգային տեղեկատվական, Արևմտյան Եվրոպայի գիտության և մշակույթի ակադեմիաների իսկական անդամ:

2008

2008թ. հունվարի 1-ից ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում են ինստիտուտի 4 բաժինները՝ ժամանակակից հայերենի կառուցվածքի և գործառության ուսումնասիրության (բաժնի վարիչ՝ Ն.Ժ. Սարգսյան), հայերենի պատմական զարգացման (բաժնի վարիչ՝ Վ.Գ.Համբարձումյան), հայերենի բարբառագիտական ատլաս (բաժնի վարիչ՝ Ա.Ե.Սարգսյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Ա.Խ.Մանուկյան), և 3 թեմատիկ խմբերը. աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 69:

Հունվար. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Բեյրութում (Լիբանան) կազմակերպված «Կիլիկյան մշակույթը» միջազգային գիտաժողովին:

Մարտի 27. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Համազգային հայ կրթական և մշակութային միության Երևանի պետական համալսարանում հրավիրված միջազգային գիտաժողովին:

Մայիսի 7-8. Աշխատանքն է ծավալում «Ջահուկյանական ընթերցումներ» երրորդ հանրապետական գիտական նստա-

շրջանը: Զեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2008):

Օգոստոսի 15-18. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Ստեփանակերտում (Արցախ) կազմակերպված «Հայոց լեզվի պատմության հարցեր» հայերենագիտական միջազգային 8-րդ գիտաժողովին:

Նոյեմբերի 10-11. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Սպահանում (Իրանի Իսլամական Հանրապետություն) կազմակերպված հայերենագիտական և իրանագիտական միջազգային առաջին գիտաժողովին:

Ա.Սարգսյանն արժանանում է Թեքեյան մշակութային միության «Վահան Թեքեյան» մրցանակի:

2009

Մարտի 17. Հրավիրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի տնօրեն Լ. Հովհաննիսյանի 65-ամյակը լրանալու կապակցությամբ նրա պաշտոնավարելու ժամկետի հարցը քննարկելու համար:

Գիտական անձնակազմը միաձայն որոշում է՝ Լավրենտի Հովհաննիսյանը պետք է պաշտոնավարի մինչև իր ընտրության ժամկետի ավարտը, և միջնորդությամբ դիմում է ՀՀԳ բաժանմունքին և ԳԱԱ նախագահությանը՝ ընդառաջելու ինստիտուտի առաջարկությանը:

Ապրիլի 28-29. Կայանում է «Ջահուկյանական ընթերցումներ» չորրորդ հանրապետական գիտական նստաշրջանը: Զեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2009):

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ հոգի:

Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ» միջազգային չորրորդ գիտաժողովին:

Ա.Սարգսյանի «Հայոց լեզվի բարբառային ատլասը» աշխատությունը ճանաչվում է տարվա լավագույն լեզվաբանական հետազոտություն և արժանանում է ՀՀ ԿԳՆ հավաստագրի:

Ա. Սարգսյանն ընտրվում է Իտալիայի հանրային հետազոտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս, դառնում Վատիկանի Բոնիֆացիանա ակադեմիայի պատվավոր անդամ:

2010

Հունվար. 2010թ. հունվարի 1-ից ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում է ինստիտուտի աշխատակիցների կազմը՝ 4 բաժիններով՝ ժամանակակից հայերենի կառուցվածքի և գործառության ուսումնասիրության (բաժնի վարիչ՝ Ն.Ժ. Սարգսյան), հայերենի պատմական զարգացման (բաժնի վարիչ՝ Վ.Գ.Համբարձումյան), հայերենի բարբառագիտական ատլաս (բաժնի վարիչ՝ Ա.Ե.Սարգսյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Ա.Խ.Մանուկյան), և 3 թեմատիկ խմբերը. աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 68:

Մարտ. Հաշվի առնելով փետրվարի 23-ից մարտի 5-ը անցկացված հերթական ատեստավորման արդյունքները՝ ինստիտուտի ատեստավորված գիտաշխատողները հաստատվում են իրենց պաշտոններում:

Մայիսի 6-7. Աշխատանքն է ծավալում «Ջահուկյանական ընթերցումներ» հինգերորդ հանրապետական գիտական նստաշրջանը: Զեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2010):

Մայիսի 30. Ի կատարումն ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանի թիվ 25 12.05. 2010թ. հրամանի՝ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ձևավորվում է երիտասարդ լեզվաբանների խորհուրդ, և Բ.Գ.Թ. Տիգրան Միրունյանը նշանակվում է խորհրդի նախագահ:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ, «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն» մասնագիտությամբ՝ երկու հոգի:

2010թ. հրատարակվում է Գևորգ Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարան»-ը:

2011

Հունվար. 2011թ. հունվարի 1-ից ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում են ինստիտուտի՝ բազային ֆինանսավորմամբ չորս թեմաները՝ Ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի հիմնահարցեր (բաժնի վարիչ՝ Ն.Ժ.Սարգսյան), տարբերակայնության դրսևորումները հայերենի զարգացման տարբեր փուլերում (բաժնի վարիչ՝ Վ.Գ.Համբարձումյան), հայ բարբառագիտություն. պատմական և համաժամանակյա քննություն (բաժնի վարիչ՝ Ա.Ե. Սարգսյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Ա.Խ.Մանուկյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 63:

Ապրիլի 27. Աշխատանքն է սկսում «Ջահուկյանական ընթերցումներ» վեցերորդ հանրապետական գիտական նստաշրջանը: Ջեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2011):

Մայիսի 18. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան և մշակույթի կենտրոնի կազմակերպված հայերենագիտական և իրանագիտական միջազգային առաջին գիտաժողովին:

Հուլիսի 7. Մեկնարկում է երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովը: Ջեկուցումները հրատարակվում են «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական առաջին գիտաժողովի նյութեր» գրքում (Երևան, 2011):

Հոկտեմբերի 3. ՀՀ ԳԱԱ նախագահության ՊՈԱԿ 26.09.2011թ. թիվ 158-ա հրամանով ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ.

Հովհաննիսյանն ազատվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի պաշտոնից պաշտոնավարման ժամկետը ավարտվելու կապակցությամբ, նույն հրամանով ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի պարտականությունները դրվում են ինստիտուտի փոխտնօրեն Ն. Հովհաննիսյանի վրա:

Հոկտեմբերի 12. Տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար թեկնածություն առաջադրելու համար:

Գիտական անձնակազմը որոշում է առաջադրել Վազգեն Գուրգենի Համբարձումյանի թեկնածությունը՝ ինստիտուտի տնօրենի առաջիկա ընտրությունների համար:

Նոյեմբերի 23. ՀՀ ԳԱԱ նախագահության 2011թ. նոյեմբերի 23-ի թիվ 199-ա հրամանով Վ.Գ. Համբարձումյանը նշանակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն:

Նոյեմբերի 30. Տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի գիտական խորհրդի կազմ ընտրելու համար: Քվեարկության արդյունքներով ինստիտուտի գիտական խորհուրդը հաստատվում է հետևյալ կազմով՝ Բ.Գ.Թ. Աղաբեկյան Ս.Ա. (ավագ գիտաշխատակից), Բ.Գ.Թ. Գալստյան Ա.Ս. (ավագ գիտաշխատակից), Եգեկյան Լ.Կ. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), Թեյլան Լ.Գ. (ԵՊՀ, դոցենտ), Թոխմախյան Ռ.Մ. (ԵՊՀ, դոցենտ), Բ.Գ.Պ Համբարձումյան Վ.Գ. (տնօրեն), Բ.Գ.Պ. Հովհաննիսյան Լ.Շ. (առաջատար գիտաշխատակից), Բ.Գ.Թ. Հովհաննիսյան Ն.Գ. (փոխտնօրեն-գիտական քարտուղար), Բ.Գ.Պ. Հովսեփյան Լ.Ս. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), Ս.Գ.Թ. Մանուկյան Ա.Խ. (բաժնի վարիչ), Բ.Գ.Թ. Միքայելյան Ժ.Ա. (բաժնի վարիչի տեղակալ), Բ.Գ.Թ. Մխիթարյան Գ.Մ. (ավագ գիտաշխատակից), Բ.Գ.Թ. Պապիկյան Ս.Վ. (բաժնի վարիչի տեղակալ),

Սարգսյան Ա.Ե. (ՀՊՄՀ պրոֆեսոր), բ.գ.թ. Սարգսյան Ն.Ժ. (բաժնի վարիչ), բ.գ.թ. Մխմնյան Ն.Մ. (բաժնի վարիչի տեղակալ), բ.գ.թ. Միրունյան Տ.Ղ. (գլխաշխատակից, երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ), տ.գ.թ. Ուռուտյան Ռ.Լ. (առաջատար գլխաշխատակից):

Կայանում է ինստիտուտի գլխաշխատակից Ռ.Մ. Թոխմախյանի «Հայերենի հնչաշղթան» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

Լ. Հովհաննիսյանը պարգևատրվում է Մովսես Խորենացու մեդալով:

Ա.Սարգսյանն արժանանում է Հայրենիքին մատուցած ծառայությունների համար I-ին աստիճանի շքանշանի և Կրթության և գիտության նախարարության ոսկե հուշամեդալի:

2012

Հունվար. 2012թ. հունվարի 1-ից ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում են ինստիտուտի՝ բազային ֆինանսավորմամբ չորս թեմաները՝ ժամանակակից արևելահայերենի և արևմտահայերենի հիմնահարցեր (բաժնի վարիչ՝ Ն.Ժ.Սարգսյան), տարբերակայնության դրսևորումները հայերենի զարգացման տարբեր փուլերում (բաժնի վարիչ՝ Վ.Գ.Համբարձումյան), հայ բարբառագիտություն. պատմական և համաժամանակյա քննություն (բաժնի վարիչ՝ Ա.Ե. Սարգսյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ՝ Ա.Խ. Մանուկյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 63:

Փետրվարի 1. Սկսում է ինստիտուտի աշխատակիցներին գործնական անգլերեն դասավանդելու դասընթացը:

Հունիսի 7-11. Տեղի է ունենում «Ջահուկյանական ընթերցումներ» յոթերորդ հանրապետական գիտական նստաշրջանը: Ջեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2012):

Հունիսի 14. Մեկնարկում է Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի նյութեր» գրքում (Երևան, 2012):

Ինստիտուտի՝ «Համեմատական և տիպաբանական լեզվաբանություն» ասպիրանտուրա է ընդունվում երկու հոգի:

Նոյեմբերի 1. ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.Գ. Համբարձումյանի լիազորությունները դադարեցվում են ծննդյան 65-ամյակը լրանալու կապակցությամբ՝ համաձայն ՊՈԱԿ-ի մասին օրենքի 6-րդ կետի դ ենթակետի:

ՀՀ ԳԱԱ նախագահության ՊՈԱԿ 26-1102012թ. թիվ 24-ա հրամանով Վ.Գ. Համբարձումյանը նշանակվում է ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար մինչև մրցույթով ընտրված նոր տնօրենի նշանակումը:

Նոյեմբերի 3-4. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Արցախի Մ. Մաշտոց համալսարանի գործունեության 15-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

Նոյեմբերի 7-9. Ինստիտուտի գիտաշխատակիցներից մասնակցում են Սանկտ Պետերբուրգում կազմակերպված Հայ լեզվաբանության 9-րդ միջազգային գիտաժողովին:

Դեկտեմբերի 20. Տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի տնօրենի թափուր պաշտոնի համար առաջադրված թեկնածությունը քննարկելու համար:

Գիտական անձնակազմը որոշում է պաշտպանել ՀՀ ԳԱԱ ՀՀԳ Բաժանմունքի բյուրոյի՝ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի թափուր տեղի համար առաջադրած Վ.Լ. Կատվայանի թեկնածությունը:

Դեկտեմբերի 26. ՀՀ ԳԱԱ նախագահի 2012թ. դեկտեմբերի 26-ի թիվ 255-ա հրամանով և ՀՀ ԳԱԱ նախագահության

26.12.2012թ. թիվ 14/1692/ որոշմամբ Վ.Լ. Կատվալյանը նշանակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն:

Վ.Համբարձումյանը պարգևատրվում է Ազգային ժողովի Պատվո մեդալով:

Ա.Սարգսյանը պարգևատրվում է «Ս.Սահակ-Ս. Մեսրոպ» բարձրագույն շքանշանով:

2013

2013թ. հունվարի 8-ից ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում են ինստիտուտի վեց բաժինները՝ արդի հայերենի (բաժնի վարիչի պաշտոնակատար՝ Ն.Ժ.Սարգսյան), հայոց լեզվի պատմության (բաժնի վարիչի պաշտոնակատար՝ Գ.Մ.Մխիթարյան), բարբառագիտության (բաժնի վարիչի պաշտոնակատար՝ Վ.Լ.Կատվալյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչի պաշտոնակատար՝ Ա.Խ.Սանուկյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վարիչի պաշտոնակատար՝ Վ.Գ.Համբարձումյան), արևմտահայերենի (բաժնի վարիչ՝ Ա.Ե. Սարգսյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 63:

Հունվարի 13. Տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի գիտական խորհրդի նոր կազմ ընտրելու համար: Քվեարկության արդյունքներով ինստիտուտի գիտական խորհուրդը հաստատվում է հետևյալ կազմով՝ բ.գ.թ. Կատվալյան Վ.Լ. (տնօրեն), բ.գ.թ. Հովհաննիսյան Ն.Գ. (փոխտնօրեն), բ.գ.թ. Աբրահամյան Ա.Ա. (գիտական քարտուղար), բ.գ.թ. Աղաբեկյան Մ.Ա. (ավագ գիտաշխատակից), բ.գ.թ. Գալլստյան Ա.Ա. (ավագ գիտաշխատակից), բ.գ.դ. Եզեկյան Լ.Գ. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), բ.գ.թ. Թեյլան Լ.Գ. (ԵՊՀ, դոցենտ), բ.գ.դ. Թոխմախյան Ռ.Մ. (ՀՏՀ, դոցենտ), բ.գ.դ. Խաչատրյան Լ.Ս. (ՀՊՄՀ ամբիոնի վարիչ), բ.գ.դ. Համբարձումյան Վ.Գ.

(բաժնի վարիչի պաշտոնակատար), բ.գ.դ. Հովհաննիսյան Լ.Շ. (առաջատար գիտաշխատակից), բ.գ.դ. Հովսեփյան Լ.Ս. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), տ.գ.թ. Մանուկյան Ա.Խ. (բաժնի վարիչի պաշտոնակատար), բ.գ.թ. Միքայելյան Ժ.Ա. (բաժնի վարիչի տեղակալ), բ.գ.թ. Մխիթարյան Գ.Մ. (բաժնի վարիչի պաշտոնակատար), բ.գ.թ. Պապիկյան Ս.Վ. (բաժնի վարիչի տեղակալ), բ.գ.դ. Սարգսյան Ա.Ե. (ՀՊՄՀ պրոֆեսոր), բ.գ.թ. Մարգարյան Ն.Ժ. (բաժնի վարիչի պաշտոնակատար), բ.գ.թ. Միմոնյան Ն.Ս. (բաժնի վարիչի տեղակալ), բ.գ.թ. Սիրունյան Տ.Ղ. (գիտաշխատակից, երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ), տ.գ.թ. Ուռուտյան Ռ.Լ. (առաջատար գիտաշխատակից):

Փետրվարի 21. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի է ունենում ՀՀ սփյուռքի նախարարության և ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմակերպած «Արդի լեզվաքաղաքականության խնդիրներ» խորագրով գիտաժողովը: Նյութերը հրատարակվում են «Արդի լեզվաքաղաքականության խնդիրները: Մայրենիի օրվան նվիրված գիտաժողովի նյութեր» գրքում (Երևան, 2013):

Մարտի 21. ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կայանում է հանդիպում Բեյրութի համալսարանի նախագահ Փոլ Հայտոսյանի, նույն համալսարանի՝ սփյուռքի ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն Անդրանիկ Դաքեայանի, լիբանանահայ մտավորական, արևմտահայերենի դասագրքերի հեղինակ Արմենակ Եղիայանի հետ:

Մարտի 27. ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում հյուրընկալվում է Լիբանանի հայկական «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանտահարյանը: Նա ինստիտուտի գիտաշխատողներին է ներկայացնում օրաթերթի անցած ուղին, ներկա խնդիրներն ու ապագայի ծրագրերը:

Մարտի 29- ապրիլի 5. Տեղի են ունենում ինստիտուտի գիտահետազոտական ստորաբաժանումների նիստեր՝ քննարկելու բաժինների վարիչների թափուր տեղերի համար հայ-

տարարված մրցույթին մասնակցելու համար առաջադրված թեկնածությունները:

Արդի հայերենի բաժինը երաշխավորում է բ.գ.թ. Նվեր Ժորայի Սարգսյանին, հայոց լեզվի պատմության բաժինը՝ բ.գ.թ. Գայանե Մելիսի Մխիթարյանին, կիրառական լեզվաբանության բաժինը՝ տ.գ.թ. Անժելա Խաչիկի Մանուկյանին, ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժինը՝ բ.գ.դ. Վազգեն Գուրգենի Համբարձումյանին, բարբառագիտության բաժինը՝ բ.գ.թ. Վիկտոր Լիպարիտի Կատվալյանին: **Ապրիլի 8.** Ինստիտուտում նշվում է Մայրության և գեղեցկության տոնը:

Ապրիլի 12. Հրավիրվում է գիտական խորհրդի նիստ՝ բաժինների վարիչների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար առաջադրված թեկնածությունները քվեարկելու համար:

Գիտական խորհուրդը փակ (գաղտնի) քվեարկությամբ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բաժինների վարիչներ է ընտրում. բարբառագիտության բաժին՝ բ.գ.թ. Վ. Լ. Կատվալյանին, ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժին՝ բ.գ.դ. Վ. Գ. Համբարձումյանին, կիրառական լեզվաբանության բաժին՝ տ.գ.թ. Ա. Խ. Մանուկյանին, հայոց լեզվի պատմության բաժին՝ բ.գ.թ. Գ. Մ. Մխիթարյանին, արդի հայերենի բաժին՝ բ.գ.թ. Ն. Ժ. Սարգսյանին:

Ապրիլի 22. ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տեղի է ունենում միջոցառում՝ նվիրված հայոց եղեռնի 98-րդ տարելիցին: Միջոցառման ավարտին լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմը հանդես է գալիս հայտարարությամբ:

Մայիսի 16. Կայանում է «Հովսեփ Օրբելու բարբառագիտական և բանահյուսական աշխատանքները Մոկաց աշխարհի կատարած գիտական գործուղման ընթացքում» թեմայով սեմինար:

Մայիսի 22-24. Տեղի է ունենում «Ջահուկյանական ընթերցումներ» ութերորդ հանրապետական գիտական նըստաշրջանը: Զեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2013):

Հունիսի 3. Արևմտահայերենի բաժնի վարիչ Արտեմ Սարգսյանը հունիսի 3-ից մինչև սեպտեմբերի 3-ը համարվում է գործուղման մեջ (ԱՄՆ-ում):

Հուլիսի 1. ՀՀ ԿԳՆ ԳԴԿ նախագահ Ս.Հարությունյանը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը կնքում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության» պայմանագիր՝ «Գեղարքունիքի մարզի բարբառային համապատկերը» գիտական թեման իրականացնելու նպատակով:

Հուլիսի 3. ՀՀ սփյուռքի նախարարությունը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում կնքում են պայմանագիր՝ «Արևմտահայերենի արդի վիճակը Միրիայի հայ համայնքում» ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով:

Սեպտեմբերի 27. Բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող Հայկանուշ Մեսրոպյանին սեպտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 30-ը գործուղվում է Թուրքիա՝ բարբառագիտական ուսումնասիրություններ կատարելու:

Սեպտեմբերի 30. ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի է ունենում հանդիսավոր նիստ՝ նվիրված Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հիմնադրման 70-ամյակին: Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը նշում է այն մեծ դերակատարությունը, որ ունեցել է լեզվի ինստիտուտը հայերենագիտության զարգացման ոլորտում, և հետագա գիտական ձեռքբերումներ մաղթում ինստիտուտի գիտաշխատողներին: ՀՀ սփյուռքի նախարար Հ.

Հակոբյանը ջերմորեն շնորհավորում է ինստիտուտին՝ ընդգծելով հայապահպանության, հայերենագիտության զարգացման, լեզվի անադարտության պահպանման, արևմտահայերենի ուսումնասիրության գործում ինստիտուտի աշխատակիցների դերը: Հ.Հակոբյանը լեզվապահպանության գործում ունեցած մեծ ավանդի համար ինստիտուտի մի շարք աշխատակիցների պարգևատրում է ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալով, պատվոգրերով և շնորհակալագրերով: Ինստիտուտի անցած ուղին, ձեռքբերումները առաջիկա անելիքները և ծրագրերը ներկայացնում է ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը: Ողջույնի խոսք է ասում Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Հակոբյանը՝ կարևորելով ինստիտուտի դերը հայագիտության ոլորտում: Ինստիտուտի ավագ սերնդի մի շարք աշխատակիցներ հետաքրքիր դրվագներ են հիշում ինստիտուտի կյանքից: Նիստը եզրափակում է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու.Սուվարյանը՝ վստահություն հայտնելով, որ ինստիտուտի 70-ամյա ուղու այս արձանագրումը նոր լիցք կհաղորդի գիտաշխատողներին՝ իրենց հայրենավեր աշխատանքում:

Հոկտեմբերի 1. Հիմք ընդունելով ինստիտուտի գիտական խորհրդի 2013 թ. սեպտեմբերի 27-ի նիստի № 10 արձանագրությունը՝ հոկտեմբերի 1-ից ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ձևավորվում է բառարանագրության բաժինը (բաժնի վարիչ Ա.Ս.Գալստյան):

Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2013»-ի շրջանակներում ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Ս.Հարությունյանը և «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի ղեկավար Լ.Նամոյանը կնքում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության

կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության» պայմանագիր:

Հոկտեմբերի 2-3. Տեղի է ունենում Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երրորդ գիտաժողովի նյութեր» գրքում (Երևան, 2013):

Հոկտեմբերի 21. Բարբառագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող Գարիկ Մկրտչյանը նոյեմբերի 1-ից (երկու ամսով) գործուղվում է Լեհաստանի Կրակով քաղաք՝ լեհահայ բարբառի արդի վիճակը ուսումնասիրելու համար:

Ինստիտուտի գիտաշխատակիցները զեկուցումներով հանդես են եկել «Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն» գիտական նստաշրջանում (Գյումրի, 4-6.10.2013), Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան ՊՄԻ-ի կազմակերպած հանրապետական գիտաժողովում (Վանաձոր, փետրվար), Հայ գրատպության 500-ամյակին, Է.Ադայանի ծննդյան 100-ամյակին նվիրված գիտաժողովներում:

Ինստիտուտի՝ «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն» մասնագիտությամբ՝ ասպիրանտուրա է ընդունվում մեկ հոգի:

2013թ. ինստիտուտի հետևյալ գիտաշխատողները արժանանում են՝

ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրի՝ Ա. Գալստյանը, Ռ. Թոխմախյանը, Ն.Միմոնյանը, Պ. Վարդապետյանը, Ս. Տիոյանը:

ՀՀ սփյուռքի նախարարության շնորհակալագրի՝ Օ. Խաչատրյանը, Գ. Մխիթարյանը:

ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալի՝ Վ. Համբարձումյանը, Լ. Հովհաննիսյանը, Լ. Հովսեփյանը:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ոսկե մեդալի՝ Ն. Հովհաննիսյանը, Ն. Սարգսյանը:

Ա.Սարգսյանը պարգևատրվում է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սուրբ Սահակ - Սուրբ Մաշտոց պատվո քարձր շքանշանով:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Գ.Գ. Գևորգյանի «Հայերենի բարբառների բայական եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննություն» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

2014

Հունվար. 2014թ. հունվարի 8-ից ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում է ինստիտուտի 60 աշխատակիցների կազմը՝ յոթ բաժիններով՝ արդի հայերենի (բաժնի վարիչ Ն.Ժ. Սարգսյան), հայոց լեզվի պատմության (բաժնի վարիչ Գ.Մ. Մխիթարյան), բարբառագիտության (բաժնի վարիչ Վ.Լ. Կատվալյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ Ա.Խ.Մանուկյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վարիչ Վ.Գ.Համբարձումյան), արևմտահայերենի (բաժնի վարիչ Ա.Ե.Սարգսյան), բառարանագրության բաժին (բաժնի վարիչ Ա.Ս.Գալստյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 70:

Փետրվարի 14. ՀՀ սփյուռքի նախարարությունը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվալյանը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում կնքում են պայմանագիր՝ «Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինաբանական զուգադիր քննություն» ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով:

Փետրվարի 21. Ինստիտուտի և ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ տեղի է ունենում «Արևմտահայերենի խոսքեր և հեռանկարներ» խորագրով քննարկում:

Մարտի 19. Ինստիտուտում է հյուրընկալվում Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամմադ Ռեիսին: Դեսպանը պատվոգրեր է հանձնում ինստիտուտին և առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ.Հովհաննիսյանին՝ գնահատելով իրանագիտության ոլորտում նշանակալի ձեռքբերումները:

Ապրիլի 25. Ինստիտուտի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ համատեղ տեղի է ունենում Հայ գիտական Բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովը:

Հունիսի 11-12. Տեղի է ունենում «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գրքում (Երևան, 2014):

Հուլիս. Ինստիտուտը համագործակցության հուշագիր է կնքում Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի հետ:

Սեպտեմբերի 16. Բարբառագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող Գարիկ Մկրտչյանը սեպտեմբերի 17- 25-ը համարվում է գործուղման մեջ՝ ՌԴ Ստավրոպոլ քաղաքում կայանալիք "Лингвистическая экология: сохранение исчезающих языков" միջազգային գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

Հոկտեմբերի 1-2. Տեղի է ունենում Երիտասարդ լեզվաբանների հանրապետական IV գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական չորրորդ գիտաժողովի նյութեր» գրքում (Երևան, 2014):

Հոկտեմբերի 8-9. Տեղի է ունենում Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ միջազգային գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու» գրքում (Երևան, 2014):

Հոկտեմբերի 10. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և ինստիտուտի միջև կնքվում է համագործակցության հուշագիր. նախանշվում են երկկողմ գործակցության հեռանկարները, համատեղ իրականացվելիք ծրագրերը:

Հոկտեմբերի 17. Հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ Գայանե Մխիթարյանը հոկտեմբերի 28-31-ը համարվում է գործուղման մեջ՝ Կահիրեի համալսարանում կազմակերպվող արևելյան լեզուներին նվիրված կլոր սեղանի աշխատանքներին մասնակցելու համար:

Նոյեմբեր. Ինստիտուտը գիտական, տեղեկատվական, մշակութային և մասնագիտական աջակցության նպատակով գործընկերային համագործակցության պայմանագիր է կնքում «Հայկական մանրանկարչության կենտրոն» հիմնադրամի հետ:

Դեկտեմբերի 1. Բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող Գ. Գևորգյանը դեկտեմբերի 4-13 համարվում է գործուղման մեջ՝ Փարիզում կայանալիք կովկասյան լեզուների քարտեզագրման առանձնահատկություններին նվիրված միջազգային գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

Դեկտեմբերի 15. Արևմտահայերենի բաժնի կրտսեր գիտաշխատող Հ. Մարաշյանը դեկտեմբերի 15-ից մինչև 2015 թ. մարտի 15-ը գործուղվում է Կոստանդնուպոլիս արևմտահայերենի բաժնի համար նյութեր հավաքելու և ուսումնասիրելու համար:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում մեկ, «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն» մասնագիտությամբ՝ երկու հոգի:

2014 թ. լեզվի ինստիտուտի գիտաշխատակիցները զեկուցումներով հանդես են եկել միջազգային և հանրապետական գիտական միջոցառումներում. ԵՊՀ կազմակերպած «Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ» միջազգային գիտաժողովում (13-14.05.2014), ԵՊՀ

Իջևանի մասնաճյուղում կայացած հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական (25.04.2014), Երևանում կայացած «Աստղագիտության կապն այլ գիտությունների, մշակույթի և հասարակության հետ» և մի շարք այլ գիտաժողովումներում:

Ինստիտուտի երիտասարդ գիտաշխատակիցները զեկուցումներով հանդես են եկել Ռուսաստանի Դաշնությունում կազմակերպված միջազգային գիտաժողովներում՝ «Հայկական ժառանգության գրավոր հուշարձանները» (Պետերբուրգ, 23-25.09.2014), «Լեզվաբանական էկոլոգիա. անհետացող լեզուների պահպանում» (Ստավրոպոլ, 19-22.09.2014) խորագրերով:

2015

Հունվար. 2015թ. հունվարի 12-ից ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում է ինստիտուտի 60 աշխատակիցների կազմը՝ յոթ բաժիններով՝ արդիի հայերենի (բաժնի վարիչ Ն.Ժ.Սարգսյան), հայոց լեզվի պատմության (բաժնի վարիչ Գ.Մ.Մխիթարյան), բարբառագիտության (բաժնի վարիչ Վ.Լ. Կատվալյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ Ա.Խ.Մանուկյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վարիչ Վ.Գ.Համբարձումյան), արևմտահայերենի (բաժնի վարիչ Ա.Ե.Սարգսյան), բառարանագրության բաժին (բաժնի վարիչ Ա.Ս.Գալստյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 70:

Հունվարի 21-29. Ինստիտուտում ստեղծված որակավորման հանձնաժողովն անցկացնում է գիտաշխատակիցների որակավորում:

Փետրվարի 2. Հաշվի առնելով հունվարի 21-29-ը անցկացված հերթական որակավորման արդյունքները՝ ինստիտուտի որակավորված գիտաշխատողները հաստատվում են իրենց պաշտոններում:

Փետրվարի 6. ՀՀ սփյուռքի նախարարությունը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում կնքում են պայմանագիր՝ «Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող ԿԸ ճյուղի բարբառների առնչությունները» ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով:

Փետրվարի 21. Ինստիտուտը ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ կազմակերպում է «Մեր լեզուն մեր հայրենիքն է» խորագրով գիտաժողով՝ նվիրված Մայրենիի օրվան:

Մարտի 26. Ինստիտուտում կազմակերպվում է հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված մեծանուն լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Աբրահամյանի ծննդյան 90-ամյակին: Հրատարակվում է «Զեկուցումների դրույթներ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս.Գ.Աբրահամյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի» գիրքը (Երևան, 2015):

Մայիսի 22. Բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող Հ. Մեսրոպյանը մայիսի 25-30-ը համարվում է գործուղման մեջ՝ Բեյրութի Հայկազյան համալսարանում կայանալիք գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

Հունիսի 4-5. Տեղի է ունենում ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Բ. Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., «Գիտություն» հրատ., 2015) գրքում:

Հունիսի 26. Ինստիտուտում տեղի է ունենում «Հայոց լեզուն եղեռնագարկ» գիտաժողով՝ նվիրված ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Նյութերը հրատարակվում են «Հայերենի բարբառագիտական ատլաս» ժողովածուի չորրորդ պրակում (Երևան, 2016):

Հուլիսի 29-30. Ինստիտուտը և ՀՀ սփյուռքի նախարարությունը համատեղ կազմակերպում են «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման խնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովը:

Սեպտեմբերի 18. Տեղի է ունենում Երիտասարդ լեզվաբանների հանրապետական V գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական հինգերորդ գիտաժողովի նյութեր» գրքում (Երևան, 2015):

Հոկտեմբեր 7-9. Ինստիտուտում տեղի է ունենում Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովի նյութեր» գրքում (Երևան, 2015):

Նոյեմբերի 11-12. Ինստիտուտը Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ համատեղ կազմակերպում է գիտական նստաշրջան՝ նվիրված ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանի ծննդյան 150-ամյակին:

Դեկտեմբերի 14. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահ Ս.Հարությունյանը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը կնքում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության» պայմանագիր՝ «Կոտայքի մարզի բարբառային համապատկերը» գիտական թեման իրականացնելու նպատակով:

Դեկտեմբեր. Ինստիտուտի, Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և ԵՊՀՀ «Հերացի» ավագ դպրոցի միջև կնքվեց համագործակցության եռակողմ հուշագիր

2015 թ. լեզվի ինստիտուտում հյուրընկալվում են ԱՄՆ Միչիգանի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Գևորգ Բարդակչյանը, Փարիզի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի (ԲՆԱԼՔՕ) հայագիտության բաժնի վարիչ պրոֆեսոր Անահիտ Տոնա-

պետյանը, Կանադայի ՄաքԳիլ համալսարանի պրոֆեսոր Դորա Սաքայանը, եզիպտահայ մտավորական, հասարակական գործիչ Պերճ Թերզյանը, որոնց հետ քննարկվել են երկկողմ գործակցության հարցեր, համատեղ գիտական աշխատանքներ կատարելու ծրագրեր:

Ինստիտուտը մայրենիի անադարտության պահպանման նպատակով համագործակցում է «Էկոնոմիկա և իրավունք» ամսագրի հետ՝ վարելով «Գրական լեզվի նորմերից շեղումներ՝ գրավոր և բանավոր խոսքում» բաժինը:

2015թ. ինստիտուտի գիտաշխատողները զեկուցումներով հանդես են գալիս միջազգային և հանրապետական գիտական միջոցառումներում, մասնավորապես ԵՊՀ կազմակերպած գիտաժողովներում՝ նվիրված Գ. Զահուկյանի ծննդյան 95 (02.04. 15) և Մ.Աբեղյանի ծննդյան 150-ամյակներին (14-15.10.15), Համազգային հայ կրթական և մշակութային միության և ԵՊՀ-ի համատեղ կազմակերպած «Արդի հայերենի հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովում (18-19.11.2015), Վանաձորի պետական համալսարանի կազմակերպած «Արդի բանասիրության հիմնախնդիրներ» խորագրով միջազգային գիտաժողովում (04-05. 11. 2015), Բեյրութի Հայկազեան համալսարանում կայացած «Սուրիոյ հայերը» խորագրով (24.05.15-27.05.15) և ՌԴ Մ. Պետերբուրգի լեզվաբանական հետազոտությունների ինստիտուտի կազմակերպած «Հայերենի լեզվական կապերը դարերի ընթացքում» թեմայով միջազգային՝ (12.05.15-15.05.15) գիտաժողովներում:

2016

Հունվար. 2016թ. հունվարի 8-ից ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում է ինստիտուտի 59 աշխատակիցների կազմը՝ յոթ բաժիններով՝ արդի հայերենի (բաժնի վարիչ Ն.Ժ. Սարգսյան), հայոց լեզվի պատմության (բաժնի վարիչ Գ.Մ.Մխիթարյան), բարբառագիտության (բաժնի վարիչ

Վ.Լ.Կատվայան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ Ա.Խ.Մանուկյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վարիչ Վ. Գ.Համբարձումյան), արևմտահայերենի (բաժնի վարիչ Ա.Ե.Սարգսյան), բառարանագրության բաժին (բաժնի վարիչ Ա.Ս.Գալստյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 69:

Հունվարի 12. Արևմտահայերենի բաժնի գիտաշխատող Հ. Չոլաքյանը հունվարի 15-ից մինչև փետրվարի 9-ը համարվում է իր հաշվին գործուղման մեջ՝ Շարժայի Ազգային Օհաննեսեան վարժարանի հոգաբարձության կողմից դպրոցի ուսուցչակազմի վերապատրաստման դասընթաց վարելու համար:

Փետրվարի 19. Ինստիտուտի և ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ անցկացվում է «Հայոց լեզվի ուսումնասիրության արդի հիմնահարցեր» խորագրով հանրապետական խորհրդակցություն՝ նվիրված Մայրենիի օրվան:

Փետրվարի 25. ՀՀ սփյուռքի նախարարությունը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում կնքում են պայմանագիր՝ «Գրական արևմտահայերենի ուսումնասիրության պատմություն» հետազոտությունն իրականացնելու նպատակով:

ՀՀ սփյուռքի նախարարությունը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում կնքում են պայմանագիր՝ «Արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման ուղիները» ուսումնասիրությունն իրականացնելու նպատակով:

Մարտի 4. Ինստիտուտում կազմակերպվում է հանդիպում Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Հերացի» ավագ դպրոցի սաների հետ, որոնք ներկայացնում են իրենց ինքնուրույն հետազոտական աշխատանքները:

Հունիսի 8-9. Տեղի է ունենում «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովը: Ձեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածուում (Երևան, 2016):

Մեպտեմբերի 14. Տեղի է ունենում Երիտասարդ լեզվաբանների հանրապետական վեցերորդ գիտաժողովը: Ձեկուցումները հրատարակվում են «Երիտասարդ լեզվաբաններ» գիտական հոդվածների ժողովածուում (Երևան, 2016):

Հոկտեմբերի 3. Հայոց լեզվի պատմության բաժնի գիտաշխատող Վ.Խաչատրյանը հոկտեմբերի 7-ից մինչև 2017 թ. հունիսի 12-ը գործուղվում է Լիբանան (Անթիլիաս)՝ Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի մատենադարանի ձեռագրերը ուսումնասիրելու համար:

Հոկտեմբերի 12-13. Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում ինստիտուտում կազմակերպվում է «Լեզվաքաղաքականության և լեզվի կանոնարկման արդիական խնդիրներ» խորագրով միջազգային գիտական նստաշրջան: Նստաշրջանի նյութերը հրատարակվում են «Գիտական հոդվածներ» ժողովածուում (Երևան, 2016):

Ինստիտուտում հանդիսավոր արարողությամբ բացվում է Հ.Աճառյանի դիմաքանդակը:

Նոյեմբերի 16. Համաձայն ՀՀ ԳԳ նախագահ Ռ.Մարտիրոսյանի 04.11.2016թ. թիվ 93 կարգադրության՝ դեկտեմբերի 16-23-ը ներառյալ ինստիտուտում հաստատվում է գիտաշխատակիցների արտահերթ ատեստավորում անցկացնելու ժամանակացույց:

Նոյեմբերի 29. Լ. Հովսեփյանը նշանակվում է կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ:

Դեկտեմբերի 9. ՀՀ սփյուռքի նախարարության, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի և ՀՀ գրողների միության նախաձեռնությամբ տեղի է ունենում կյոթ սեղան-քննարկում «Հայոց լեզվի արդի հիմնահարցեր» թեմայով:

Ինստիտուտի՝ «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն» մասնագիտությամբ ասպիրանտուրա է ընդունվում երկու հոգի:

Ինստիտուտի գիտաշխատողները զեկուցումներով հանդես են եկել միջազգային և հանրապետական գիտական միջոցառումներում, մասնավորապես «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 9-րդ միջազգային գիտաժողովում, «Մշակութային աստղագիտությունը հայկական լեռնաշխարհում» հանրապետական գիտաժողովում, «Հայոց ցեղասպանության արտացոլումը հայ և համաշխարհային գրականության մեջ» գիտական նստաշրջանում և այլն:

Կայանում է ինստիտուտի տնօրեն Վ.Լ. Կատվալյանի «Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

2017

Հունվար 9. Հաշվի առնելով 2016 թ. դեկտեմբերի 16-23-ը անցկացված հերթական որակավորման արդյունքները և որակավորող հանձնաժողովի առաջարկությունները՝ ինստիտուտի որակավորված գիտաշխատողները հաստատվում են իրենց պաշտոններում:

Ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատվում է ինստիտուտի 61 աշխատակիցների կազմը՝ յոթ բաժիններով՝ արդի հայերենի (բաժնի վարիչ Ն.Ժ. Մարգարյան), հայոց լեզվի պատմության (բաժնի վարիչ Գ.Մ. Մխիթարյան), բարբառագիտության (բաժնի վարիչ Վ.Լ. Կատվալյան), կիրառական լեզվաբանության (բաժնի վարիչ Լ.Ս. Հովսեփյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վարիչ Վ.Գ. Համբարձումյան), արևմտահայերենի (բաժնի վարիչ Ա.Ե. Մարգարյան), բառարանագրության բաժին (բաժնի վարիչ Ա.Ս. Գալստյան), աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 71:

Հունվարի 24. Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող Տ. Դալայանը համարվում է գործուղման մեջ (Ֆրանսիա):

Հունվարի 31. ՀՀ սփյուռքի նախարարությունը և ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում կնքում են պայմանագիր՝ «Արդի արևմտահայերենի կանոնարկման խնդիրներ» և «Արևմտահայերենի արդի վիճակը հայկական գաղթօջախներում (Արևմտյան Եվրոպա)» ուսումնասիրություններն իրականացնելու նպատակով:

Փետրվարի 21. Ինստիտուտի և ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ անցկացվում է «Հայոց լեզուն դպրոցական դասագրքերում» կլոր սեղան- քննարկում՝ նվիրված Մայրենիի օրվան:

Հունիսի 15-16. Տեղի է ունենում «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովը: Զեկուցումները հրատարակվում են «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում (Երևան, 2017):

Մեպտեմբերի 13. Բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող Հ. Մեսրոպյանը սեպտեմբերի 14-15-ը համարվում է գործուղման մեջ՝ Մոսկվայում կայանալիք գիտաժողովի աշխատանքներին մասնակցելու համար:

Մեպտեմբերի 19. Ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող Տ. Դալայանը սեպտեմբերի 23-30-ը համարվում է գործուղման մեջ՝ Մանկոտ Պետերբուրգում կայանալիք երկու հայագիտական միջազգային գիտաժողովների աշխատանքներին մասնակցելու համար:

Հոկտեմբերի 2-5. Ինստիտուտի, ՌԴ ԳԱ լեզվաբանության ինստիտուտի և Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի հետ համատեղ անցկացվում է Հայ լեզ-

վաբանության 11-րդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված Ջոն Գրեյխին հիշատակին: Հրատարակվում է հիմնադրույթների ժողովածուն (Երևան, 2017):

Հոկտեմբերի 15. Մեկնարկում է Գ.Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին նվիրված առցանց գիտաժողովը: Նյութերը հրատարակվում են «Գիտական հոդվածների ժողովածու»-ում (Երևան, 2017):

Նոյեմբերի 2. Բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող, ինստիտուտի գիտական քարտուղար Անահիտ Աբրահամյանը նոյեմբերի 6-21-ը համարվում է գործուղման մեջ (Ավստրիա):

Նոյեմբերի 7. Տեղի է ունենում Երիտասարդ լեզվաբանների հանրապետական VII գիտաժողովը:

Ինստիտուտի՝ «Հայոց լեզու» և «Ընդհանուր և կիրառական լեզվաբանություն» մասնագիտություններով ասպիրանտուրա են ընդունվում մեկական հոգի:

Կայանում է ինստիտուտի գիտաշխատակից Հ.Հ.Մեսրոպյանի «Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում» դոկտորական ատենախոսության հրապարակային պաշտպանությունը:

2017թ. ինստիտուտի գիտաշխատողներից զեկուցումներով մասնակցում են Հայաստանում և արտերկրում կազմակերպված բազմաթիվ գիտաժողովների (Երևան, Վանաձոր, Գյումրի, Մոսկվա, Ս.Պետերբուրգ և այլն):

Լեզվի ինստիտուտի մի շարք գիտաշխատողներ համագործակցում են Վենետիկի համալսարանի հայագետների, Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ինստիտուտի, Զալցբուրգի համալսարանի հայագիտական կենտրոնի, Ս. Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտի և Ս. Պետերբուրգի պետական համալսարանի գիտաշխատողների հետ:

2017 թ. ինստիտուտում հյուրընկալվում են պատմաբան, ՀՅԴ կուսակցության արխիվների պատասխանատու, հայա-

զետ, Արամ Ա. կաթողիկոսի հովանու ներքո գործող արևմր-տահայերենի պաշտպանության հանձնախմբի ատենապետ Երվանդ Փամբուկյանը, Վիեննայի Մխիթարյան միաբանու-թյան աբբահայր Խ. Պողոս Ծ. վ. Գոճանյանը, ԳԱԱ արտասահ-մանյան անդամ Ա.Տոնապետյանը, Կիպրոսի «Նարեկ» կրթա-համալիրի ուսուցչուհի Ս. Հալաճյանը և ուրիշներ:

Լեզվամշակութային փոխառնչություններին վերաբերող հարցեր են քննարկվել Ղազախստանի դեսպան Թիմուր Ու-րազանի երկու այցելությունների ընթացքում, դիտարկվել են նաև համագործակցության հնարավորություններ:

2018

Հունվարի 8. Ինստիտուտի տնօրենի հրամանով հաստատ-վում է ինստիտուտի 61 աշխատակիցների կազմը՝ յոթ բա-ժիններով՝ արդի հայերենի (բաժնի վարիչ Ն.Ժ.Սարգսյան), հայոց լեզվի պատմության (բաժնի վարիչ Գ.Մ.Մխիթարյան), բարբառագիտության (բաժնի վարիչ Վ.Լ.Կատվալյան), կիրա-ռական լեզվաբանության (բաժնի վարիչ Լ.Ս.Հովսեփյան), ընդհանուր և համեմատական լեզվաբանության (բաժնի վա-րիչ Վ.Գ.Համբարձումյան), արևմտահայերենի (բաժնի վարիչ Ա.Ե.Սարգսյան), բառարանագրության բաժին (բաժնի վարիչ Ա.Ս. Գալստյան). աշխատակիցների ընդհանուր թիվը՝ 71:

Հունվարի 23. Մայրենիի անադարտ գործածությանը նպաս-տելու նպատակով ինստիտուտը համացանցային կայքում ստեղծում է «Մայրենի» էջը, որտեղ հանրության ուշադրու-թյանը շարունակաբար կներկայացվեն առավել տարածված լեզվական սխալները՝ դրանց դիմաց առաջարկելով ճիշտ և նախընտրելի ձևերը, կտրվեն սխալների մեկնաբանություն-ներ, օտար բառերի ու արտահայտությունների անհարկի կիրառությունները բացառելու համար կբերվեն նման միավորների և դրանց հայերեն համարժեքների ցանկեր:

Հունվարի 30-փետրվարի 3. Ինստիտուտի տնօրեն Վ.Կատ-վալյանը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա. վեհա-

փառ հայրապետի հրավերով գտնվում էր Անթիլիասի մայրավանքում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Արևմտահայերենի պաշտպանութեան հանձնաժողովի հետ գործակցության գործընթացներ ծավալելու և մոտ ապագայում արևմտահայերենի, ուղղագրության և հարակից հարցերի առնչվող գիտաժողով կազմակերպելու նպատակով:

Հունվար. Գործարկվում է hamabarbar.am կայքը: «Հայկական էլեկտրոնային համաբարբառ» նախագծով գիտական հանրությանը մատուցվում է համակարգչային ծրագրերով ստեղծված, որոնողական ճկուն համակարգ ունեցող, համացանցում հասանելի էլեկտրոնային համաբարբառների մեծածավալ շտեմարան արտակարգ լայն ընդգրկումով, գրաբարյան, միջինհայերենյան և աշխարհաբարյան շրջաններին վերաբերող երկերի շարունակական ներածման հնարավորություններով:

Փետրվարի 5. ՀՀ սփյուռքի նախարարությունը և ինստիտուտի տնօրեն Վ.Կատվայանը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակում կնքում են պայմանագիր՝ «Արդի արևմտահայերենի կանոնարկման հարցեր (չթեքվող խոսքի մասեր)» և «Արևմտահայերենի քերականության պատմություն (հետայտնյանական շրջան)» ուսումնասիրություններն իրականացնելու նպատակով:

Փետրվարի 21. Ինստիտուտի և ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ տեղի է ունենում արևմտահայերենի պահպանության, ուսումնասիրության և զարգացման բազմաբնույթ հարցերի քննարկում՝ նվիրված Մայրենիի օրվան:

Մարտի 22. Տեղի է ունենում սեմինար-քննարկում՝ նվիրված «Արևելահայերենի շարահյուսական ծառերի շտեմարան» նախագծին, որն իրականացվում է ՀՕՖ «Գիտության և

կրթության հայկական ազգային հիմնադրամի» (ANSEF) դրամաշնորհային ծրագրերի շրջանակում:

Մարտի 26. Բնստիտուտը նախաձեռնում է «Մաշտոց» հայերենագիտական էլեկտրոնային հանդեսի հրապարակումը: Հայերենագիտական բազմալեզու հանդեսը նպատակ ունի նպաստելու հայոց լեզվի համակողմանի հետազոտությունների իրականացմանը, արևելահայերենի և արևմտահայերենի կանոնարկմանը, մերձեցմանն ու զարգացմանը, նորովի լուսաբանելու հայ լեզվամշակույթին առնչվող հիմնահարցերը:

Մայիսի 5. Տեղի է ունենում սեմինար՝ «Գոյականի հայցական հոլովը և ներգործական բայերի խնդրառությունը արևմտահայերենում» խորագրով:

Հունիսի 1. Բնստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնում տեղի է ունենում քննարկում՝ նվիրված արևմտահայերենի և արևելահայերենի հնչյունական և քերականական համակարգերի առանձնահատկություններին: Հայոց լեզվի պատմության բաժինը հյուրընկալել էր Ֆրանսիայից ժամանած բանասեր, պատմաբան Արմեն Միքայելյանին:

Հունիսի 7. Աշխատանքն է սկսում «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովը: Երկօրյա գիտաժողովին մասնակցում են շուրջ երեք տասնյակ գիտնականներ Հայաստանի, Արցախի, Ֆրանսիայի գիտակրթական տարբեր հաստատություններից: Ջեկուցումներում արծարծվում են հայոց լեզվի զարգացմանը, կառուցվածքին ու գործառույթներին, բարբառագիտությանը, ընդհանուր և համեմատական լեզվաբանությանը, ինչպես նաև կորպուսային լեզվաբանությանն առնչվող տարաբնույթ հարցեր:

Հունիսի 13. ՀՀ ԳԱԱ նախագահի 2018թ. հունիսի 13-ի թիվ 95-Ա հրամանով և ՀՀ ԳԱԱ նախագահության 13.06.2018թ. թիվ 5/1753/ որոշմամբ Վ.Լ. Կատվայանը հինգ տարի ժամկետով նշանակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն:

Հունիսի 15. Տեղի է ունենում սեմինար՝ «Արդի տիպաբանական լեզվաբանության հիմնախնդիրները» թեմայով:

Հունիսի 19. Ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը հյուրընկալում է Լիբանանահայ օգնության խաչի «Անի» մասնաճյուղի աստենապետուհի և ուսուցչուհի Մարալ Վարդապետյանին:

Հունիսի 21. Ինստիտուտը ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ իրականացնում է մագիստրոսական կրթական ծրագիր՝ «Ընդհանուր և հայ լեզվաբանություն» մասնագիտությամբ: Մեկնարկում է 2018-2020 թթ. ընդունելությունը:

Հունիսի 22. Ինստիտուտում ծավալվում է հեռուստատեսության լեզվին վերաբերող քննարկում, որին մասնակցում է նաև դերասանուհի, բեմադրիչ, սցենարիստ, ՀՀ վաստակավոր արտիստուհի, պրոֆեսոր Լալա Մնացականյանը:

Հունիսի 28. Հաստատությունը սկսում է հայոց լեզվին ու հայագիտությանն առնչվող տարաբնույթ հարցերի նվիրված հրապարակային դասախոսությունների շարք: Առաջին հրապարակային դասախոսությունը նվիրված էր նշանավոր հայագետ Հ.Հյուբշմանի ծննդյան 170-ամյակին. բանախոս՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Վ. Համբարձումյան:

Հուլիսի 4. Տեղի է ունենում ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական անձնակազմի ժողով՝ ինստիտուտի գիտական խորհրդի նոր կազմ ընտրելու համար: Քվեարկության արդյունքներով ինստիտուտի գիտական խորհուրդը հաստատվում է հետևյալ կազմով՝ Բ.Գ.Թ. Կատվալյան Վ.Լ. (տնօրեն), Բ.Գ.Թ. Հովհաննիսյան Ն.Գ. (փոխտնօրեն), Բ.Գ.Թ. Աբրահամյան Ա.Ա. (գիտական քարտուղար), Բ.Գ.Պ. Ավետիսյան Յու. Ս. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), Բ.Գ.Թ. Գալըստյան Ա.Ս. (բաժնի վարիչ), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Գասպարյան Ս.Ք. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), Բ.Գ.Պ. Գևորգյան Գ.Գ. (ԵՊՀ ամբիոնի վարիչ), Բ.Գ.Պ. Դերիկյան Վ.Գ. (ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի տնօրեն), Բ.Գ.Պ. Թոխմախյան Ռ.Ս. (առա-

ջատար գիտաշխատող), բ.գ.թ. Խաչատրյան Վ.Գ. (գիտաշխատող), բ.գ.դ. Համբարձումյան Վ.Գ. (բաժնի վարիչ), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Հովհաննիսյան Լ.Շ. (տնօրենի խորհրդական), բ.գ.դ. Հովսեփյան Լ.Ս. (բաժնի վարիչ), բ.գ.դ. Մեսրոպյան Հ.Հ. (ավագ գիտաշխատող), բ.գ.թ. Միքայելյան Ժ.Ա. (ավագ գիտաշխատող), բ.գ.թ. Մխիթարյան Գ.Մ. (բաժնի վարիչ), բ.գ.թ. Պապիկյան Ս.Վ. (ավագ գիտաշխատող), ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Սարգսյան Ա.Ե. (բաժնի վարիչ), բ.գ.թ. Սարգսյան Ն.Ժ. (բաժնի վարիչ), բ.գ.թ. Սարգսյան Մ.Ա. (գիտաշխատող), բ.գ.թ. Սիմոնյան Ն.Ս. (ավագ գիտաշխատող), բ.գ.թ. Սիրունյան Տ.Ղ. (գիտաշխատակից, երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ):

Մեպտեմբերի 19. Ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ կազմակերպվում է գիտական միջոցառումների շարք նվիրված ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին: Տեղի կունենան գիտական միջոցառումներ, որոնց ընթացքում կլսվեն անվանի լեզվաբանների (Հ.Աճառյան, Գ. Ղափանցյան, Ա.Ղարիբյան, Գ.Զահուկյան) կյանքին ու գործունեությանը նվիրված գիտական զեկուցումներ, կկազմակերպվեն հրատարակված գրքերի շնորհանդեսներ: Որոշվում է նաև կազմակերպել «Հայերենագիտության արդի խընդիրներ» խորագրով առցանց գիտաժողով՝ նվիրված ինստիտուտի 75-ամյակին:

Մեպտեմբերի 28. Կայանում է հերթական (2-րդ) հրապարակային դասախոսությունը. «Լեզու և հասարակություն» թեմայով բանախոսում է ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ. Վ. Կատվալյանը:

ՀՀ ԳԱԱ ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ԱՇԽԱՏԱԾ ԵՎ ԱՇԽԱՏՈՂ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐՆԵՐ¹

Աբրահամյան Աշոտ Արսենի

(1918 - 1985)

Աշոտ Արսենի Աբրահամյանը ծնվել է 1918թ. Շահրիզ (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան) գյուղում: Բարձրագույն կրթությունն ստացել է Երևանի հեռակա մանկավարժական ինստիտուտում: 1937թ. աշխատել է որպես ուսուցիչ Հրազդանի շրջանի դպրոցներում, վարել է նաև ուսմասվարի և տնօրենի պաշտոններ: 1948թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1943թ. մինչև կյանքի վերջը դասախոսել է Երևանի Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, 1960թ. հայոց լեզվի ամբիոնի վարիչն էր: 1950-1959թթ. պաշտոնավարել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում որպես բաժնի վարիչ: 1963թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1965թ. Ա. Աբրահամյանը արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման: 1977թ. ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ:

Աբրահամյան Մերգեյ Գյանջումի

(1925- 2005)

Մերգեյ Գյանջումի Աբրահամյանը ծնվել է Արցախի Հանրության շրջանի Տումի գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: Զորակոչվել է Սովետական բանակ: 1943թ. մասնակցել է Հայրենական պատերազմի մարտերին: Վիրավորվելու պատճառով 1944թ. զորացրվել է որպես երկրորդ կարգի հաշմանդամ: 1945թ. ընդուն-

¹ Կենսագրությունները տրվում են ըստ Հ.Ջ.Պետրոսյանի «Հայերենագիտական բառարան» (Ե., «Հայաստան» հրատ., 1987) աշխատության, Կենսագրական հանրագիտարանի (Ե., ԵՊՀ հրատ., 2009) և անձնական գործերում եղած ինքնակենսագրությունների:

վել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, 1950թ.՝ ասպիրանտուրա: 1952-1953թթ. դասախոսել է ԵՊՀ-ում: 1953թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: 1953թ. աշխատանքի է անցել ԳԱ լեզվի ինստիտուտում, նախ՝ որպես ավագ գիտաշխատակցի պաշտոնակատար, ապա՝ որպես ավագ, առաջատար, գլխավոր գիտաշխատակից: 1959թ. մինչև կյանքի վերջը եղել է ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի բաժնի վարիչը: 1966թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ս.Աբրահամյանը պարգևատրվել է Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով: Արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: 1986թ. պարգևատրվել է Խ. Աբովյանի անվան մեդալով: 1996թ. Ս. Աբրահամյանը ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

ԼՂՀ Հաղորդի շրջանի Տումի գյուղի միջնակարգ դպրոցը այժմ կոչվում է ակադեմիկոս Սերգեյ Աբրահամյանի անունով:

Աբրահամյան Ռուբեն Թադևոսի (1881-1951)

Ռուբեն Թադևոսի Աբրահամյանը ծնվել է Վայոց ձորի (այժմ՝ Եղեգնաձորի շրջան) Գնիշիկ գյուղում: Ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (1899), Երևանի գիմնազիան (1906), սովորել Կիևում (1907), Լայպցիգում (1909), Պետերբուրգի համալսարանում (1911): Զբաղվել է մանկավարժությամբ Թիֆլիսում (1912-1920), Իրանում (1921-1946): 1935թ. Թեհրանի համալսարանում հիմնադրել է հին պարսկերենի և պահլավերենի ամբիոնը: 1946թ. վերադարձել է Հայաստան. նույն թվականից էլ աշխատանքի է անցել ԳԱ լեզվի ինստիտուտում: Գիտական գործունեությունը սկսել է 1911-ից: Բանասիրական գիտությունների դոկտոր է դարձել

1935թ.: Հիմնական աշխատությունն է «Պահլավերեն-պարսկերեն-հայերեն- ռուսերեն- անգլերեն բառարանը» (1965). Բառարանում պահլավական համարժեքների դիմաց տրված են հայկական փոխառյալ բառերը:

Աղայան Էդուարդ Բագրատի (1913-1991)

Էդուարդ Բագրատի Աղայանը ծնվել է Մեղրիում: 1928թ. ավարտել է տեղի 7-ամյա դպրոցը: 1930-1932թթ. աշխատել է Մեղրու կոլտնտեսությունում՝ սկզբում որպես հաշվետար, ապա՝ հաշվապահ: 1933-ից ուսանել է ԵՊՀ պատմագրական ֆակուլտետում՝ միաժամանակ աշխատելով ծխախոտի ֆաբրիկայում որպես հաշվապահ: 1938թ. ավարտել է համալսարանը և 1939թ. ընդունվել ասպիրանտուրա: 1941թ. պաշտպանել է թեկնածուական, 1945թ. դոկտորական ատենախոսություն: 1953թ. ընտրվել է ԳԱ թղթակից անդամ, 1982թ.՝ ակադեմիկոս:

1932թ. մինչև կյանքի վերջը Էդ. Աղայանն աշխատել է ԵՊՀ-ում. 1956-1985թթ. եղել է համալսարանի ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, 1968-1991թթ.՝ հայագիտական կենտրոնի ղեկավար, 1986-1999թթ.՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր, 1953-1956թթ. ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, 1948-1950թթ. բանասիրության ֆակուլտետի ղեկան:

Է. Աղայանը տասնամյակներ շարունակ աշխատել է նաև ԳԱ լեզվի ինստիտուտում: 1950-1953թթ. եղել է փոխտնօրեն, 1963-1991թթ.՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ: 1947-1948թթ. եղել է ՀԽՍՀ լուսավորության նախարարության բուհերի վարչության պետ:

1970թ. Էդ. Աղայանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի (1983թ.) շքանշանով, «Աշխատանքային արիության» (1945թ.), Խ. Աբովյանի անվան մեդալներով:

Աճառյան Հրաչյա Հակոբի

(1867- 1953)

Հրաչյա Հակոբի Աճառյանը ծնվել է Կոստանդնուպոլսում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում: Ավարտել է Սորբոնի համալսարանը (1898), ուսանել նաև Ստրասբուրգի համալսարանում (1898): Դասավանդել է Կոստանդնուպոլսի Գատրգյուղի Արամյան (1893) և Կարինի Սանասարյան (1894) վարժարաններում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում (1898-1902), Շուշիի (1902-1904) և Նոր Նախիջևանի (1907-1918) թեմական, Թավրիզի Արամյան (1904-1906) և թեմական- կենտրոնական (1919-1923), Նոր Բայազետի հայկական (1906-1907), Թեհրանի Հայկազյան (1918-1919) դպրոցներում: Երեք տասնամյակ (1923-1953) աշխատել է Երևանի պետական համալսարանում՝ վարելով հայոց լեզվի, ապա արևելյան լեզուների ամբիոնները և դասավանդելով բազմաթիվ լեզվաբանական առարկաներ: 1943թ. գիտական գործունեություն է ծավալել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտում: 1933թ. նրան շնորհվել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի կոչում: Ընտրվել է ՀՀ ԳԱԱ հիմնադիր կազմում (1943):

Հ.Աճառյանը Սլովակիայի ԳԱ թղթակից անդամ էր (1937), Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ (1897): 1935 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Հ.Աճառյանի անվամբ են կոչվում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը (1964), Երևանի թիվ 72 միջնակարգ դպրոցը (1966):

Առաքելյան Վարազ Դավթի

(1910- 2001)

Վարազ Դավթի Առաքելյանը ծնվել է Ելդովան (Ելկավան), այժմ՝ Կոտայքի մարզի Կոտայք գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է գյուղական դպրոցում, իսկ միջնակարգը՝ Երևանում (ավարտել է 1931թ.): Միջնակարգ կրթություն

ստանալուց հետո երկու տարի զբաղվել է ուսուցչությամբ: 1933թ. իբրև ուսանող գործուղվել է Երևանի պետական համալսարան: 1938թ. սովորել է ասպիրանտուրայում: 1939թ. նշանակվել է ԵՊՀ գրաքարի դասախոս: 1939-1951թթ. դասախոսի պաշտոնով աշխատել է հանրապետության մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1944թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1945թ. աշխատանքի է անցել ԳԱ լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատակից: 1959թ. նշանակվել է ինստիտուտի լեզվի պատմության սեկտորի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, այնուհետև լեզվի պատմության բաժնի վարիչ: 1961թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1986թ. հաստատվել է ինստիտուտի բառարանագրության բաժնի առաջատար գիտաշխատակցի պաշտոնում, իսկ 1996թ. վերահաստատվել գլխավոր գիտաշխատակցի պաշտոնում:

Ավետիսյան Տիգրան Մուշեղի

(1941- 2016)

Տիգրան Մուշեղի Ավետիսյանը ծնվել Թբիլիսիում: Սկզբնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում: 1958-1963թթ. սովորել է Երևանի պետական համալսարանում: 1965թ. որպես տեսուչ աշխատանքի է ընդունվել ՀՍՍՀ ԳԱ նախագահությունում: 1967-1970թթ. սովորել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1970թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 1989-ին՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1970թ. աշխատանքի է անցել լեզվի ինստիտուտում: 1976թ. որպես դոցենտ աշխատում է Կիրովականի մանկավարժական ինստիտուտում, 1987թ. աշխատանքի է անցնում Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում իբրև ամբիոնի վարիչ: Տ. Ավետի-

սյանի «Հայոց ազգանունների բառարանը» 2000թ. արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի:

Բաղիկյան Խաչիկ Գաբրիելի

Խաչիկ Գաբրիելի Բաղիկյանը ծնվել է 1932թ. Շիրակի մարզի Ծաղկաշեն գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում: 1951-1955թթ. սովորել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում: 1955թ. աշխատել է ՀԽՍՀ Բասարգեչարի շրջանի Ծովակ, 1957-1962 թթ.՝ Հոկտեմբերյանի շրջանի Մարգարա, ապա՝ Եղեգնուտ գյուղերի միջնակարգ դպրոցներում: 1962-1965թթ. սովորել է ԳԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում, 1966-1969թթ. աշխատել է նույն ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1969թ. Խ. Բաղիկյանը դասախոսել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում: 1973 - 1976թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1985 - 1997թթ. դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Դասախոսել է նաև Գավառի պետական համալսարանում: 1967թ. Խ. Բաղիկյանը պաշտպանել է թեկնածուական, 1989թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1987թ. պարգևատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով:

Բաղրամյան Ռուբեն Հարությունի

(1920- 1994)

Ռուբեն Հարությունի Բաղրամյանը ծնվել է Ադրբ. ՍՍՀ Շամխորի շրջանի Լեռնային Ջազիր գյուղում: Բարձրագույն կրթությունը ստացել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտում: 1949թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 1971թ.՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1957-1965թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխա-

տող, այնուհետև գործունեությունը շարունակել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում:

Բրուսյան Լիլիթ Գևորգի

Լիլիթ Գևորգի Բրուսյանը ծնվել է 1953թ. Երևանում: 1970թ. ավարտել է Երևանի թիվ 55 դպրոցը, 1975թ.՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական բաժինը: Նույն թվականին ընդունվել է ՊՀ ասպիրանտուրա: 1980թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, 1992թ.՝ ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1979թ. աշխատում է ԵՊՀ-ում: 1984թ. ՀՍՄՀ ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ավագ գիտաշխատողների թափուր տեղերի համար անցկացված մրցույթի արդյունքներով հաստատվել է ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնում, իսկ 1993թ.՝ ներտեքստային ուսումնասիրությունների խմբում ավագ, ապա առաջատար գիտաշխատողի պաշտոնում: 1994-1996թթ. եղել է ՀՀ ԳԱԱ օտար լեզուների ամբիոնի վարիչ:

Գալստյան Մերգեյ Աշոտի

Մերգեյ Աշոտի Գալստյանը ծնվել է 1929թ. Կապանի շրջանի Կեմանց գյուղում: 1947թ. ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը, 1952-ին՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1957-1962թթ. Ս. Գալստյանը եղել է ԳԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, 1962-2013թթ. աշխատել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում: 1964-1970թթ. և 1980-1981թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 1972-1979թթ.՝ արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի դեկան, 1971-1980թթ.՝ նույն ֆակուլտետում իր հիմնադրած հայոց լեզվի ամբիոնի

վարիչ: 1956թ. Ս. Գալստյանը պաշտպանել է թեկնածուական, 1986թ.՝ դոկտորական ատենախոսություն:

Գասպարյան Գասպար Կարապետի (1901-1981)

Գասպար Կարապետի Գասպարյանը ծնվել է Երևանում. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Երկար տարիներ աշխատել է որպես ուսուցիչ: 1940թ. անցել է գիտական աշխատանքի (հիմնականում ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում): 1943թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Դոկտորի գիտական աստիճան ստացել է 1969թ.: Մասնակցել է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» առաջին հատորի (Ե., 1969թ.) առանձին մասերի կազմման և խմբագրման աշխատանքներին:

Գարեգինյան Գրիգոր Լևոնի (1927-1992)

Գրիգոր Լևոնի Գարեգինյանը ծնվել է Բուլղարիայի Սլիվեն քաղաքում: 1934-1936թթ. սովորել է Փարիզի ֆրանսիական դպրոցներից մեկում: 1936թ. ընտանիքով ներգաղթել է հայրենիք: 1944թ. Գ.Գարեգինյանը ավարտել է Երևանի թիվ 21 դպրոցը, 1948թ՝ Երևանի Վ.Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի օտար լեզուների ֆակուլտետի ֆրանսիական բաժինը: 1949-1952թթ. աշխատել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտում որպես ֆրանսերենի դասախոս, 1955-1960թթ. գիտական աշխատանք է կատարել ԳԱ լեզվի ինստիտուտում, 1966թ. եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, 1971թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1959թ. Գ.Գարեգինյանը պաշտպանել է թեկնածուական, 1988թ.՝ դոկտորական ատենախոսություն: Պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով:

Գևորգյան Գայանե Գերասիմի

Գայանե Գերասիմի Գևորգյանը ծնվել է Երևանում: 1982թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը գերազանցության դիպլոմով: Նույն թվականին ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրա, որն ավարտելուց հետո 1985թ. աշխատանքի է անցել լեզվի ինստիտուտում նախ որպես կրտսեր, ապա ավագ գիտաշխատող: 1988թ. պաշտպանել է թեկնածուական, 2013 թ. դոկտորական ատենախոսություն: 2005թ. ստացել է դոցենտի, 2016թ. պրոֆեսորի գիտական կոչում:

1997թ. համատեղությամբ, իսկ 2006 թ. հիմնական հաստիքով աշխատում է Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի հայագիտության ամբիոնում՝ որպես դոցենտ, 2012 թ. ամբիոնի վարիչ:

Գրիգորյան Վլադիմիր Մարկի

(1928 -2001)

Վլադիմիր Մարկի Գրիգորյանը ծնվել է Երևանում: 1946թ. ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի ռուսական բանասիրության ֆակուլտետ: 1951թ. ընդունվել է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտի ասպիրանտուրա: 1955թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան և աշխատանքի է անցել Երևանի պետական համալսարանում: 1958թ. հրավիրվել է ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հաշվողական կենտրոն՝ զբաղվելու մեքենական թարգմանության հարցերով, մինչև 1972թ. լինելով մեքենական թարգմանության լաբորատորիայի վարիչ: 1972թ. տեղափոխվել է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ և դարձել կառուցվածքային և մաթեմատիկական լեզվաբանության բաժնի վարիչ: 1975թ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի լենինգրադյան բաժանմունքի լեզվաբանության ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատե-

նախոսություն և 1976թ. ստացել բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: 1986թ. հաստատվել է Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչի, 1991թ.՝ բառաձանցական իմաստաբանության և ներտեքստային կապերի ուսումնասիրության խմբի ղեկավարի պաշտոնում: 1995թ. աշխատանքի է անցել ՀՀ Ազգային ժողովում:

Էլոյան Սեդա Արմենակի

(1929 - 2004)

Սեդա Արմենակի Էլոյանը ծնվել է Թբիլիսիում: 1936թ. ընդունվել է տեղի թիվ 79 միջնակարգ դպրոց: 1938թ. ընտանիքով տեղափոխվել է Լենինական (այժմ՝ Գյումրի), ընդունվել և 1946թ. ավարտել է Լենինականի Հ.Թումանյանի անվան թիվ 13 դպրոցը: Նույն տարում ընդունվել է Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի լեզվի և գրականության ֆակուլտետ և այն ավարտել 1950թ.: Այդ թվականին որպես ավագ լաբորանտ աշխատել է ինստիտուտի լեզուների և գրականության կաբինետում, միաժամանակ համատեղությամբ՝ Հ.Հակոբյանի անվան դպրոցում որպես հայոց լեզվի ուսուցչուհի: 1951-1952 ուստարում ընդունվել է Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրա, ավարտել այն 1954թ.: 1963թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1959թ. աշխատել է ԳԱ լեզվի ինստիտուտում որպես կրտսեր, ավագ, առաջատար գիտաշխատակից: 1991թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Թոխմախյան Ռոբերտ Մարկոսի

Ռոբերտ Մարկոսի Թոխմախյանը ծնվել է 1937թ. Երևանում: 1944թ. ընդունվել, 1954թ. ավարտել է Երևանի թիվ

40 միջնակարգ դպրոցը: 1961-1966թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: 1967թ. ընդունվել է ՀՍՍՀ ԳԱ Հ.Աճառյանի անվան ինստիտուտի ասպիրանտուրա, ավարտել 1970թ.: 1971թ. ինստիտուտում աշխատել է որպես կրտսեր, 1977թ.՝ կիրառական լեզվաբանության բաժնի, այնուհետև հաղորդակցային և բարբառային հնչաբանության խմբի ավագ գիտաշխատակից, 1995թ.՝ նույն խմբի ղեկավար: 1972թ. պաշտպանել է թեկնածուական, 2012թ.՝ դոկտորական ատենախոսություն: Դասավանդել է ԵՊՀ-ում, Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում, ԵՊՏՀ-ում, Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում:

Թոսունյան Գևորգ Բաբկենի

(1934 - 2018)

Գևորգ Բաբկենի Թոսունյանը ծնվել է Ջավախքում: 1951թ. ավարտել է տեղի ութամյա դպրոցը և ընդունվել Ախալքալաքի հայկական մանկավարժական ուսումնարան: 1957-1962թթ. սովորել է Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետում: 1962-1963թթ. աշխատել է Հայաստանի և Վրաստանի դպրոցներում. դասավանդել է հայոց լեզու, հայ գրականություն, պատմություն: 1966թ. աշխատել է ԳԱ հիմնարար գրադարանում նախ որպես կրտսեր գիտաշխատակից, իսկ 1973-ից՝ բաժնի վարիչ: 1977թ. ԳԱ Նախագահության որոշմամբ բաժինը տեղափոխվել է Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: 1978թ. նշանակվել է ինստիտուտի քարտազման և բազմացման բաժնի վարիչ, 1991թ.՝ հաստատվել քարտարանի համալրման և բառագուգորդումների բառարանի խմբի ղեկավարի պաշտոնում: 1978թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 2003թ.՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1995-1998թթ. և 2006-2012թթ. գրաբար և հայոց

լեզվի պատմությունն է դասավանդել Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում:

Խաչատրյան Ամալյա Հարությունի

Ամալյա Հարությունի Խաչատրյանը ծնվել է 1927 թ. և սկզբնական կրթությունը ստացել է Երևանում: 1946թ. ընդունվել է Երևանի Վ.Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտ, իսկ երրորդ կուրսից ուսումը շարունակել է Մոսկվայի օտար լեզուների ինստիտուտում (այժմ՝ Լեզվաբանական համալսարան)՝ անգլերենի ֆակուլտետում: Ավարտելուց հետո որպես անգլերենի դասախոս աշխատել է Երևանի տարբեր բուհերում՝ միաժամանակ սովորելով հեռակա ասպիրանտուրայում: 1962թ. աշխատանքի է անցել ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում: 1964թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1988թ.՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1987-1991թթ. եղել է ՀՀ ԳԱԱ օտար լեզուների ամբիոնի վարիչ:

1991թ. ապրում և աշխատում է Շվեդիայում:

Կատվայան Վիկտոր Լիպարիտի

Ծնվել է Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում 1961թ.: 1977թ. ավարտել է տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1979թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ, որը գերազանցությամբ ավարտել է 1984թ.: 1984-1987թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1988թ. աշխատել է նույն ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում իբրև կրտսեր գիտաշխատող, 1993 թ.՝ իբրև գիտաշխատող: 1993 թ. դասախոսում է Գավառի պետական համալսարանում, 2011 թ.՝ նաև Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում: 1994-1999թթ. եղել է ԳՊՀ գիտական քարտուղար, 2004 թ մինչև 2013 թ. ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի

դեկան: 2012 թ. ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի ավագ գիտաշխատող է: 2012 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն: 1991 թ. պաշտպանել է թեկնածուական, 2016թ. դոկտորական ատենախոսություն: Ունի ԲՈՀ-ի դոցենտի և ԳՊՀ պրոֆեսորի գիտական կոչումներ:

Համբարձումյան Վազգեն Գուրգենի

Վազգեն Գուրգենի Համբարձումյանը ծնվել է 1947թ. ՀՀ Արագածոտնի մարզի (նախկին Թալինի շրջանի) Մաստարա գյուղում: 1965թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժին: 1970-ին ընդունվել է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրա, որն ավարտել է 1973թ.: 1974թ. աշխատանքի է անցել ինստիտուտում: 1979թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1991-ին՝ դոկտորական ատենախոսություն: 1993-2004թթ. եղել է ինստիտուտի հայերենի տերմինաբանության և խոսքի մշակույթի բաժնի վարիչ, հայերենի գիտատեխնիկական տերմինաբանության ուսումնասիրության թեմատիկ խմբի ղեկավար, 2004թ.՝ հայոց լեզվի պատմական զարգացման ուսումնասիրության բաժնի վարիչ: 2011-2012թթ. եղել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն:

Վ.Համբարձումյանն արժանացել է ՀՀ ԳԱԱ «Պատվոգրի», ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալի՝ գիտության և մայրենի լեզվի բնագավառում ունեցած գործունեության համար:

Հարությունյան Հենրիկ Արտավազդի (1937-1992)

Հենրիկ Արտավազդի Հարությունյանը ծնվել է Ախուրյանի շրջանի Արևիկ գյուղում: 1954թ. ավարտել է Լենինա-

կանի (այժմ՝ Գյումրի) Գ.Սունդուկյանի անվան միջնակարգ դպրոցը, 1960թ.՝ Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը: 1960-1964թթ. Լենինականի դպրոցներում աշխատել է որպես ուսուցիչ, 1964թ.՝ ԳԱ լեզվի ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, 1967թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնում: 1981-1985թթ. եղել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իսկ 1991թ. մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ ոչ մասնագիտական ֆակուլտետների հայոց լեզվի ամբիոնի վարիչ: Հ.Հարությունյանը 1968թ. պաշտպանել է թեկնածուական, 1988թ.՝ դոկտորական ատենախոսություն:

Հովհաննիսյան Լավրենտի Շահենի

Լավրենտի Շահենի Հովհաննիսյանը ծնվել է 1944թ. Արցախի Մարտունու շրջանի Նորշեն գյուղում: 1951-1958թթ. սովորել է նույն գյուղի յոթնամյա դպրոցում: 1961թ. ավարտել է Աշան գյուղի միջնակարգ դպրոցը: 1962թ. ընդունվել, 1967թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելյան լեզուների (պարսկերեն) բաժինը: 1968-1971թթ. սովորել է ՀՍՍՀ ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1971թ. աշխատում է նույն ինստիտուտում որպես հայոց լեզվի պատմության բաժնի կրտսեր, 1977թ.՝ նույն բաժնի ավագ գիտաշխատող, 1986թ.՝ հայկական համաբարբառի բաժնի վարիչ, 1991թ.՝ պատմաբանագիտական ուսումնասիրությունների խմբի ղեկավար, 1995-2005թթ.՝ ինստիտուտի փոխտնօրեն, 2006-2011թթ.՝ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն, 2011թ.՝ առաջատար գիտաշխատակից և ինստիտուտի տնօրենի խորհրդական: 1972թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 1995թ.՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Լ.Հովհաննիսյանն արժանացել է ՀՀ ԳԱԱ Վաստակագրի: 2010թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2011թ. պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

Հովսեփյան Լիանա Սամվելի

Լիանա Սամվելի Հովսեփյանը ծնվել է 1941թ. Երևանում: 1958թ. ավարտել է Երևանի թիվ 19 միջնակարգ դպրոցը, 1963թ.՝ ԵՊՀ բանասիրության ֆակուլտետը: 1964-1967թթ. սովորել է ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1967թ. նույն ինստիտուտում աշխատանքի է անցել որպես կրտսեր գիտաշխատող: 1970թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1974-1981թթ. վարել է ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը: 1981-1986թթ. եղել է տիպաբանական-գուգադրական հետազոտությունների բաժնի վարիչ, իսկ 1986-1990թթ.՝ հայոց լեզվի պատմության բաժնի վարիչ: 1987թ. հրավիրվել է Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարան՝ գրաբարի դասընթաց վարելու: 1988թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1990-1995թթ. եղել է ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն: 1995թ. անցել է առաջատար գիտաշխատողի պաշտոնի, որը վարում է համատեղությամբ: 1997-2013թթ. եղել է ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, 2013թ.՝ ամբիոնի պրոֆեսոր: 2016թ. ապրիլից ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատարն է, դեկտեմբերից բաժնի վարիչը:

Ղազարյան Բաբկեն Կիրակոսի

Բաբկեն Կիրակոսի Ղազարյանը ծնվել է 1933թ. Էջմիածնի շրջանի Արագած գյուղում: 1950թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, իսկ 1955թ.՝ Երևանի Օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ռոմանագերմանական ֆակուլտետի գերմաներենի բաժինը: 1955թ. մինչև 1963թ.

գրադվել է մանկավարժությամբ: 1963-1966թթ. սովորել է ՀՍՍՀ ԳԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայում: 1966թ. նշանակվել է ինստիտուտի ընդհանուր լեզվաբանության սեկտորի կրտսեր գիտաշխատակցի պաշտոնակատար, 1968թ.՝ կրտսեր գիտաշխատակից, 1974 թ.՝ կիրառական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատակից: 1968թ. ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի, 1989՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Ղազարյան Մերոբ Ղազարի (1909-1962)

Մերոբ Ղազարի Ղազարյանը ծնվել է Բիթլիսում: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նրանց ընտանիքը գաղթել է Վան, ապա Մալմաստ, իսկ հետո՝ Միջագետք: 1921թ. Ս. Ղազարյանը ներգաղթել է Խորհրդային Հայաստան և բնակություն հաստատել Դավալու (այժմ՝ Արարատ) գյուղում, որտեղ ստացել է սկզբնական կրթություն: 1929-1930թթ. Երևանում ավարտել է միջնակարգ դպրոց: 1931-1932թթ. ծառայել է Կարմիր բանակում, 1934թ. ընդունվել և 1939թ. ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը: Նույն թվականին ընդունվել է ԵՊՀ ասպիրանտուրա: 1942թ. պաշտպանել է թեկնածուական, 1953թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1940-1962 թթ. դասախոսել է ԵՊՀ-ում: 1937-1948թթ. Ս. Ղազարյանը եղել է «Սովետական դպրոց» թերթի խմբագիր: 1944-1959թթ. աշխատել է ԳԱ լեզվի ինստիտուտում նախ որպես ինստիտուտի գիտական քարտուղար, ապա՝ հայոց լեզվի պատմության և բարբառագիտության բաժնի վարիչ:

Ս. Ղազարյանը պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով ու մեդալներով:

Ղարիբյան Արարատ Սահակի

(1899-1977)

Արարատ Սահակի Ղարիբյանը ծնվել է Արտաշատի շրջանի Դարդալու (այժմ՝ Այգեգարդ) գյուղում: Սովորել է Երևանի արական գիմնազիայում: 1927թ. ավարտել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1922-1928թթ. աշխատել է Երևանի դպրոցներում, 1929-1948թթ. դասավանդել է ԵՊՀ-ում, իսկ 1934թ. աշխատել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում որպես հայոց լեզվի ամբիոնի վարիչ: Ա.Ղարիբյանը 1943-1950թթ. և 1956-1962թթ. եղել է ԳԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, 1962-1977թթ.՝ ակադեմիայի հիմնադրար գիտական գրադարանի տնօրեն: 1940թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն: 1947թ. ընտրվել է ԳԱ թղթակից անդամ, 1960-ին՝ ակադեմիկոս: 1954թ. Ա.Ղարիբյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Խ. Աբովյանի անվան մեդալով: Սարդարապատի ճակատամարտում ցուցաբերած խիզախության համար արժանացել է պարգևի:

Ա.Ղարիբյանի անունով է կոչվում Երևանի թիվ 142 միջնակարգ դպրոցը:

Ղափանցյան Գրիգոր Այվազի

(1887-1956)

